



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 06(157) «11» հունիսի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
	ԼՂՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
45	«Բնական զազի մատակարարման և օգտագործման կանոնները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի N 12Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 23-Ն որոշումը.....	3
46	«Բնական զազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 4-ի թիվ 29Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 24-Ն որոշումը.....	46
47	«Բնական զազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 41Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 42Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը	

	կարգավորող պետական հանձնաժողովի N 25-Ն որոշումը.....	58
	ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՇՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
48	«Առողջական վիճակի վերականգնման հեռանկարի բացակայության դեպքում առանց եռամսյա դիտարկման ժամկետի պահպանման բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրվող անձանց հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի N 1-Ն և ԱՀ առողջապահության նախարարի N 97-Ն համատեղ հրամանը.....	74
49	«Օդային երթևեկության կառավարման կարգավարների ուսուցման և ատեստավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչության պետի 2012 թվականի հունվարի 31-ի N 04-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 06-Ն հրամանը.....	77
50	«Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 488-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարի N 01-Ն հրամանը.....	97
	ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ	
	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից լիցենզիաներ տրամադրելու մասին որոշումների պատճենները.....	99
	ԱՀ առողջապահության նախարարի կողմից լիցենզիաներ տրամադրելու և տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանների պատճենները.....	116
	ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից մայիս ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ...	123

Գրանցված է
Արցախի Հանրապետության արդարադատության
նախարարության կողմից 2018 թվականի հունիսի 11-ին
պետական գրանցման համարը 3031840

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մայիսի 2018 թվականի

N 23-Ն

ք. Ստեփանակերտ

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N12Ն
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի
մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է.

1. Սահմանել բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները՝
համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի «Բնական գազի
մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N 12Ն
դրոշումը:

3. Սույն դրոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2018 թվականի մայիսի 18-ի N 23-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր
ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Բ Ա Ժ Ի Ն Ի
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **Հանձնաժողով**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

2) **բնական գազ** կամ **գազ**՝ այնպես, ինչպես սահմանված է ԳՕՍՏ 5542-87«Բնական վառելանյութային գազեր արդյունաբերության և կոմունալ-կենցաղային նպատակների համար» պայմաններով սահմանված նշանակությունը.

3) **մատակարար**՝ գազի բաշխման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ, որը գազամատակարարման պայմանագիր է կնքել բաժանորդի հետ.

4) **դիմող անձ**՝ անձ, որը դիմում է իր նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման համար: Նոր կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման դեպքում դիմող անձ է հանդիսանում կառուցապատողը.

5) **նոր գազասպառման համակարգ**՝ նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգ.

6) **բաժանորդ**՝ բնական գազի պահանջարկ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որը մատակարարի հետ կնքել է բնական գազի մատակարարման պայմանագիր.

7) **գազամատակարարման ցանց**՝ գազի փոխադրման և բաշխիչ ցանց.

8) **գազասպառման համակարգ**՝ գազի առաքման կետից կամ հաշվառքի սարքի էլքից (բկանցքից) հետո տեղադրված գազատարները, գազակարգավորիչ կետերը, գազօգտագործող տեղակայանքները, հսկման-չափման սարքավորումները, օդատար և ծխատար ուղիները, ներառյալ խողովակները, ու դրանց սարքավորումները.

9) **ներտնային գազասպառման համակարգ**՝ բնակչության կենցաղային կարիքների համար նախատեսված գազասպառման համակարգ.

10) **միացման պայմանագիր**՝ նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման համար մատակարարի և դիմող անձի միջև սույն կանոններով սահմանված դեպքերում և կարգով կնքվող պայմանագիր.

11) **գազաֆիկացման պայմանագիր**՝ առանձին պատվիրատուի կողմից նոր կառուցվող շենքի կամ կառուցապատվող թաղամասի գազաֆիկացման պայմանները սահմանող՝ պատվիրատուի և մատակարարի միջև կնքված պայմանագիր.

12) **գազամատակարարման պայմանագիր** կամ **Պայմանագիր**՝ մատակարարի և բաժանորդի միջև կնքված գազի մատակարարման պայմանները, այդ թվում՝ բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման պայմանները, նրանց իրավունքներն ու պարտականությունները սահմանող պայմանագիր, որի օրինակելի ձևը սահմանում է Հանձնաժողովը.

13) **գազի համակարգ**՝ գազամատակարարման ցանցի և գազասպառման համակարգերի համալիր.

14) **բնակիչ-բաժանորդ**՝ բնական գազի պահանջարկ ունեցող ֆիզիկական անձ, որը մատակարարի հետ կնքել է բնական գազի մատակարարման պայմանագիր.

15) **կազմակերպություն**՝ բնական գազի պահանջարկ ունեցող իրավաբանական անձ, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, որը մատակարարի հետ կնքել է բնական գազի մատակարարման պայմանագիր.

16) **կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն**՝ կազմակերպություն, որն օգտագործում է ցածր ճնշման բնական գազ, և բնական գազի ծախսը հաշվառվում է մինչև G6 (ներառյալ) տիպի բնական գազի մեկ առևտրային հաշվառքի սարքով.

17) **սահմանագատման կետ**՝ գազի համակարգի՝ մատակարարի և բաժանորդի սեփականության տարանջատման կետը.

18) **առաքման կետ**՝ մատակարարի կողմից գազը բաժանորդին փոխանցելու՝ գազի համակարգի Պայմանագրով սահմանված կետը: Բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների համար գազամատակարարման դեպքում առաքման կետ է հանդիսանում գազի առևտրային հաշվառքի սարքի ելքը (բկանցքը).

19) **առևտրային հաշվառքի սարք**՝ Չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված և վկայագրված (կնքված) գազի ծախսի հաշվառքի սարք (կայան), որի միջոցով կատարվում է մատակարարված գազի քանակի առևտրային հաշվառումը: Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տվյալները ամրագրվում են գազամատակարարման պայմանագրում.

20) **հսկիչ հաշվառքի սարք**՝ Չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված և վկայագրված (կնքված) առևտրային հաշվառքի սարքի հարաչափերին համապատասխանող գազի ծախսի հաշվառքի սարք (կայան), որի միջոցով առևտրային հաշվառքի սարքի (կայանի) խախտման դեպքում կատարվում է մատակարարված գազի քանակի առևտրային հաշվառումը: Հսկիչ հաշվառքի սարքի (կայանի) տվյալները ամրագրվում են գազամատակարարման պայմանագրում.

21) **առևտրային հաշվառքի սարքի խախտում**՝ Չափագիտական մարմնի տված փորձագիտական եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի առանձին դետալների խախտումները կամ դրանց վնասվածքները կամ առևտրային հաշվառքի սարքի կնիքների բացակայությունը կամ դրանց կեղծված կամ վնասված լինելը կամ առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի նկատմամբ որևէ անձի կողմից այլ ներգործությունները.

22) **գազամատակարարման ցանցի ընդլայնում**՝ նոր սպառողների (բաժանորդների) գազամատակարարման նպատակով գազամատակարարման ցանցի գործող գազատարի շարունակումը, ճյուղավորումը, թողունակության մեծացումը կամ գազակարգավորիչ նոր կետերի կառուցումը կամ վերակառուցումը.

23) **գազամատակարարման ընդհատում**՝ գազի մատակարարման ընդհատում ապահովիչ փակող սարքերի միջոցով կամ մատակարարի կողմից՝ պլանային

աշխատանքների կատարման ժամանակ կամ վթարային կամ ֆորս մաժորային իրավիճակներում.

24) **գազամատակարարման դադարեցում**՝ գազի մատակարարման և օգտագործման կանոններ կամ գազամատակարարման պայմանագրի պայմանները խախտելու, գազամատակարարման պայմանագիրը լուծելու, բաժանորդի դիմումի համաձայն կամ օրենքով սահմանված այլ դեպքերում գազի առաքման դադարեցում մատակարարի կողմից.

25) **գազամատակարարման (գազասպառման) սահմանափակում**՝ մատակարարի կողմից բաժանորդ կազմակերպությանը ներկայացվող՝ գազամատակարարման պայմանագրում ամրագրված գազասպառման սահմանափակման պահանջ, որի համաձայն հայտարարված սահմանափակման ռեժիմում վերջիններս սահմանափակում են գազի սպառումը մինչև գազամատակարարման պայմանագրով սահմանված քանակությունը.

26) **տեխնիկական պայմաններ**՝ սույն կանոններով սահմանված պայմաններով նոր կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար անհրաժեշտ նախագծման պայմաններ.

27) **ֆորս մաժոր**՝ արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողությունները: Արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաքթեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, հանրապետություն գազի ներկրման ընդհատումները:

Սույն պարբերությունը չի սահմանափակում մատակարարի կամ բաժանորդների իրավունքը նկարագրվածից բացի՝ այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար.

28) **գազօգտագործող սարքավորման օգտագործում**՝ գազօգտագործող սարքավորման նկատմամբ գործողություն (միացում, անջատում, աշխատանքի ռեժիմի հսկում և այլն), որը կատարում է բաժանորդը (օգտագործողը) սարքը նպատակային նշանակությամբ օգտագործելու ընթացքում.

29) **Չափագիտական մարմին**՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պետական չափագիտական հսկողություն իրականացնող կազմակերպություն.

30) **բաշխիչ ցանց**՝ բաշխման լիցենզիա ունեցող անձի կողմից կառավարվող և շահագործվող բնական գազի բաշխման խողովակաշարերի, գազակարգավորիչ հանգույցների և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի միջոցով բնական գազը մատակարարվում է բաժանորդին:

ԳԼՈՒԽ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

2. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Արցախի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, միացման պայմանագրով, գազամատակարարման պայմանագրով և սույն կանոններով:

3. Մատակարարը պարտավոր է Արցախի Հանրապետության տարածքում իրականացնել բաժանորդների հուսալի, անխափան և անվտանգ

գազամատակարարում, առաքման կետում ապահովել Պայմանագրում նշված գազի որակական ցուցանիշները և գազի ճնշումը՝ ստանդարտներով սահմանված թույլատրելի տիրույթում:

Մատակարարը պարտավոր է մինչև յուրաքանչյուր ամսվա հինգը զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել նախորդ ամսում մատակարարված գազի ջերմատվության միջին ցուցանիշները՝ ըստ տասնօրյակների:

4. Մատակարարը պարտավոր է նվազագույնի հասցնել յուրաքանչյուր բաժանորդի գազամատակարարման ընդհատումների թիվը և ընդհատման տևողությունը, ընդ որում, ընդհատումների թիվը օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցի չորս անգամը, իսկ յուրաքանչյուր ընդհատման առավելագույն տևողությունը՝ 36 ժամը, բացառությամբ, եթե ընդհատումը ֆորս մաժորի հետևանք է: Ձմեռային ժամանակահատվածում (նոյեմբերի մեկից մինչև մարտի 15-ը) բնակիչ-բաժանորդների գազամատակարարումը չպետք է ընդհատվի գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու պատճառով:

Նոր բաժանորդների միացման պատճառով բաժանորդների գազամատակարարման ընդհատումները չեն ներառվում ընդհատումների հաշվառվող քանակի մեջ:

Ձերմային էլեկտրակայանների և տեխնոլոգիական անընդհատ ցիկլ ունեցող բաժանորդների համար այդ ցուցանիշները կարող են սահմանվել Պայմանագրով՝ չգերազանցելով սույն կետում սահմանված արժեքները:

5. Բաժանորդը գազասպառման համակարգ ներառող տարածքը վարձակալության հանձնելու դեպքում պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել մատակարարին՝ վարձակալին արտահերթ հրահանգավորման համար:

6. Բաժանորդն իր սեփականությունը հանդիսացող գազասպառման համակարգ պարունակող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում պարտավոր է դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, գազամատակարարումը դադարեցնելու և Պայմանագիրը լուծելու համար: Նշված դեպքում մատակարարը պարտավոր է նախքան պայմանագիր լուծելը ստուգաչափել առևտրային հաշվառքի սարքը սույն կանոնների 4-րդ գլխով սահմանված կարգով և բաժանորդի հետ վերջնահաշվարկը կատարել՝ հաշվի առնելով նաև ստուգաչափման արդյունքները:

7. Պայմանագիրը լուծելուց առաջ մատակարարը պարտավոր է նախապես տեղեկացնել բաժանորդին:

8. Բնակչի կամ բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության նոր գազասպառման համակարգի նախագծման, կառուցման և կարգաբերման պայմանագրով սահմանված տեխնիկական պայմանները դրանց կատարումից հետո կարող են փոփոխվել միայն կողմերի փոխհամաձայնությամբ՝ հետևյալ պայմաններով.

1) մատակարարի նախաձեռնությամբ մատակարարման ցանցում կատարված փոփոխությունների հետևանքով բաժանորդների գազասպառման համակարգերում փոփոխությունների կատարման ծախսերը կատարում է մատակարարը.

2) բաժանորդի նախաձեռնությամբ գազասպառման համակարգի, այդ թվում՝ միացման կետի փոփոխությունների, հաշվառքի սարքերի վերահավաքակցման համար անհրաժեշտ ծախսերը կատարում է բաժանորդը:

9. Բնակիչ-բաժանորդները և բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպությունները գազօգտագործող սարքավորման փոխարինման կամ նոր սարքերի հավաքակցման կամ գազասպառման համակարգում այլ փոփոխություններ կատարելու համար գրավոր դիմում են մատակարարին՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկատվություն այդ փոփոխությունների մասին:

Մատակարարը պարտավոր է տասնհինգօրյա ժամկետում քննարկել դիմումը, անհրաժեշտ փոփոխություններ կատարել գազասպառման համակարգի նախագծում կամ

թույլատրել գազօգտագործող սարքավորման փոխարինումը: Դիմումը մերժելու դեպքում մատակարարը պարտավոր է դիմողին ներկայացնել գրավոր հիմնավորում:

Բնակչի կամ բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության գազասպառման համակարգում փոփոխությունները (այդ թվում՝ նոր գազատարի կամ ծխատարի կառուցում, հաշվառքի սարքի վերահավաքակցում) կատարվում են սույն կանոնների N 2 հավելվածով՝ բնակչի կամ բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության նոր գազասպառման համակարգի նախագծման, կառուցման և կարգաբերման պայմանագրով սահմանված կարգով:

10. Բնակելի թաղամասերի, փողոցների, նոր տարածքների կառուցապատման, առանձին շենքերի ու շինությունների վերակառուցման դեպքերում դրանցում գործող բաշխիչ ցանցերի վերակառուցումը կատարվում է կառուցապատողի միջոցներով՝ մատակարարի հետ համաձայնեցված նախագծերով և նրա վերահսկողությամբ:

11. Գազասպառման համակարգերի հավաքակցման, փորձարկման, գործարկման, գործող ցանցին միացման, գազամատակարարման ժամանակ վթարների վերացման և նորոգման աշխատանքների կատարման համար մատակարարի լիազոր ներկայացուցիչները միացման պայմանագրի կամ գազամատակարարման պայմանագրի հիման վրա և պայմանագրով սահմանված պայմաններով կարող են մուտք գործել բաժանորդի (օգտագործողի) տարածք միայն անձի լիազորությունները հավաստող լուսանկարով վկայականի ներկայացման դեպքում: Գազասպառման և ներշնչային համակարգերում վթարի դեպքում ապահովվում է շուրջօրյա մուտք: Բաժանորդի (օգտագործողի) տարածքում մատակարարի ներկայացուցիչները պարտավոր են պահպանել բաժանորդի ներքին կանոնակարգը:

12. Մատակարարի և բաժանորդի միջև ծագած վեճերը լուծվում են Պայմանագրով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Սույն կանոններով բաժանորդի մասնակցությունը նախատեսող դեպքերում, երբ բաժանորդին ներկայացնում է այլ անձ, վերջինիս լիազորությունները հաստատող փաստաթուղթը նախապես ներկայացվում է մատակարարին:

ԳԼՈՒԽ 3

ԳԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

14. Գազասպառման համակարգը գործարկման և գազամատակարարման ընթացքում պետք է համապատասխանի տեխնիկական կանոնակարգերով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

15. Մատակարարը պարտավոր է կատարել բնակիչ-բաժանորդների և բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգի պարբերական սպասարկման աշխատանքները՝ համաձայն Պայմանագրի պահանջների:

16. Գազասպառման համակարգի հավաքակցման և օգտագործման ընթացքում արգելվում է.

- 1) կատարել գազաթողարկման կատարողական-տեխնիկական փաստաթղթերին և նախագծին չհամապատասխանող միացումներ և փոփոխություններ.
- 2) գազը սպառել գազասպառման համակարգի անսարքության դեպքում.
- 3) գազը սպառել հաշվառքի սարքի շրջանցմամբ.
- 4) խախտել գազատարների և գազասարքավորումների պահպանման գոտիները.
- 5) ինքնակամ միացումներ կատարել գազամատակարարման ցանցին, գազն օգտագործել գազօգտագործող սարքավորման տեխնիկական փաստաթղթով (անձնագրով) չնախատեսված նպատակներով:

17. Բնակիչների և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների յուրաքանչյուր գազասպառման համակարգի միացումը գազամատակարարման համակարգին պետք է իրականացվի մեկ միացման կետից: Բազմաբնակարան շենքից դուրս գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգի՝ գազամատակարարման ցանցին միացման կետերի քանակը որոշվում է մատակարարի կողմից տրամադրված տեխնիկական պայմանների համաձայն:

18. Մատակարարը պարտավոր է ունենալ մշտական գործող հեռախոսակապով շուրջօրյա վթարային-կարգավարական ծառայություն՝ վթարային կանչերը, դրանց արձագանքելու ժամանակը և կատարված աշխատանքները համապատասխան գրանցամատյաններում գրանցելու և վթարները վերացնելու համար: Վթարային-կարգավարական ծառայության հեռախոսահամարի մասին մատակարարը պարտավոր է ոչ պակաս, քան տարին երկու անգամ, տեղեկացնել զանգվածային լրատվամիջոցներով:

19. Գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների դեպքում մարդկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող իրավիճակներում բաժանորդը պարտավոր է անմիջապես ընդհատել գազի սպառումը և այդ մասին անհապաղ տեղեկացնել մատակարարին: Մատակարարը պարտավոր է ահագանգն ստանալուց հետո հնարավոր կարճ ժամկետում դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը: Մատակարարը վերսկսում է գազամատակարարումը վերոհիշյալ վտանգը վերացնելուց հետո՝ նախապես փոխհամաձայնեցված օրը և ժամին՝ հայտն ստանալուց հետո 36 ժամվա ընթացքում: Բնակչի կամ բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների դեպքում գազամատակարարման դադարեցումից հետո մատակարարը պետք է միջոցներ ձեռնարկի գազասպառման համակարգի վերականգնման համար՝ համաձայն սպասարկման համաձայնագրի:

20. Բաժանորդի պահանջով Պայմանագրի լուծման կամ գազամատակարարման ժամանակավոր դադարեցման պահանջի կամ օրենքով սահմանված այլ դեպքերում մատակարարը պարտավոր է դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը երկու աշխատանքային օրվա ընթացքում: Գազամատակարարման ժամանակավոր դադարեցման դեպքում գազամատակարարումը վերսկսվում է բաժանորդի դիմումի համաձայն՝ այն ստանալուց հետո 36 ժամվա ընթացքում:

21. Մատակարարի կողմից բնակչության ներտնային գազասպառման և բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության վճարը սահմանում է Հանձնաժողովը:

22. Մատակարարը բնակիչների և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման, վերականգնման, վերանորոգման և փոխարինման աշխատանքները կարող է կատարել անձամբ կամ պայմանագրով հանձնարարել Հանձնաժողովի հետ համաձայնեցված չափորոշիչներով ընտրված այլ սպասարկող անձի: Այդ դեպքում՝

1) բաժանորդի կողմից տեխնիկական սպասարկման համաձայնագրի պայմանների խախտման համար բաժանորդի նկատմամբ պատասխանատվության կիրառման իրավունքը մատակարարը չի փոխանցում սպասարկող անձին.

2) տեխնիկական սպասարկման համաձայնագրում նշվում է տեխնիկական սպասարկման աշխատանքներն այլ սպասարկող անձի հանձնարարելու մասին.

3) մատակարարի և սպասարկող անձի փոխհարաբերությունները (այդ թվում՝ սպասարկող անձի պատասխանատվությունը) կանոնակարգվում են նրանց միջև կնքված պայմանագրով.

4) բաժանորդի առջև մատակարարի պատասխանատվությունը պայմանագրով չի փոխանցվում սպասարկող անձին:

23. Գազասպառման համակարգի անվտանգության ապահովման համար՝

1) գազասպառման համակարգն սպասարկող անձը պարտավոր է ունենալ վթարային-կարգավարական շուրջօրյա ծառայություն և իրականացնել գազասպառման համակարգի, այդ թվում՝ օդածխատար ուղիների համալիր սպասարկում, գազասպառման համակարգի վթարների օպերատիվ վերացում և վերականգնում: Մատակարարը պարտավոր է ինքնուրույն կամ սպասարկող անձի միջոցով բնակչության կամ բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության գազասպառման համակարգում նախագծային շեղումների և տեխնիկական կանոնակարգերի պահանջների խախտումների առկայության դեպքում խցափակել համապատասխան գազօգտագործող սարքավորման սնուցումը, կնքել ու կազմել գազասարքի շահագործումն արգելող արձանագրություն:

2) մատակարարը պարտավոր է Պայմանագրով սահմանված պարբերականությամբ և ծավալներով հրահանգավորել բնակիչներին և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպություններին գազօգտագործող սարքավորման անվտանգ շահագործման վերաբերյալ, ինչպես նաև կատարել Արցախի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սահմանված տեխնիկական սպասարկման և ստուգման աշխատանքները:

3) մատակարարը պարտավոր է հրապարակել հուշաթերթիկներ և անվճար տրամադրել բաժանորդներին՝ գործընթացը կրկնելով առնվազն երեք տարին մեկ անգամ:

4) մատակարարը պարտավոր է գանգվածային լրատվամիջոցներով տարին առնվազն երկու անգամ բաժանորդներին իրազեկել գազի անվտանգ օգտագործման կանոնների մասին:

ԳԼՈՒԽ 4

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ, ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԳԱԶԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

24. Բազմաբնակարան շենքերի բնակիչների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են նրանց բնակարաններից դուրս: Առանձնատների և կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են նրանց սեփականության տարածքից դուրս: Ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների առևտրային հաշվառքի սարքերի տեղակայման կետը սահմանվում է միացման պայմանագրով, որը ամրագրվում է նաև Պայմանագրում:

25. Առևտրային հաշվառքի սարքի տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, հերթական ստուգաչափման և նորոգման) ծախսերը՝ անկախ դրա պատկանելությունից, իսկ բնակչության դեպքում՝ նաև առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման ծախսերը կրում է մատակարարը: Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման և նորոգման ծախսերն իրականացվում են սույն կանոնների 31-րդ կետով սահմանված կարգով:

26. Առևտրային կամ հսկիչ հաշվառքի սարքերը, ինչպես նաև դրանց արկղերը, կարող են կնքվել ինչպես մատակարարի, այնպես էլ բաժանորդի կողմից:

27. Մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցման, հերթական կամ արտահերթ ստուգաչափման ժամկետների մասին ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցել բաժանորդին: Մատակարարն իրավունք ունի

առևտրային հաշվառքի սարքը ապահավաքակցել առանց բաժանորդին նախապես ծանուցելու, եթե ակնհայտորեն հայտնաբերել է, որ բաժանորդը բնական գազը սպառում է առևտրային հաշվառքի սարքի խախտմամբ: Նման դեպքում մատակարարը առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման մասին բաժանորդին պարտավոր է սույն կետում նշված եղանակներով ծանուցել անմիջապես՝ առաջին իսկ հնարավորության դեպքում, և ներկայացնել առևտրային հաշվառքի սարքի ակնհայտ խախտման իր հիմնավորումները:

28. Բաժանորդն իրավունք ունի պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ՝ դրա ապահավաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ նախապես փոխհամաձայնեցված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մատակարարի կողմից այդ մասին գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում սահմանված ժամկետում առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը կամ ստուգաչափմանը պատշաճ ձևով տեղեկացված բաժանորդի չներկայանալու դեպքում այդ աշխատանքներն իրականացվում են առանց բաժանորդի ներկայության:

29. Մատակարարի կամ բաժանորդի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի փոխարինման կամ ստուգաչափման նպատակով դրա ապահավաքակցման դեպքում մատակարարը՝

1) սույն կանոնների 27-րդ կետով սահմանված կարգով տեղեկացնում է բաժանորդին.

2) կազմում է առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի, դրա ամբողջականության կամ վնասված լինելու մասին արձանագրություն (ակտ), որը ստորագրում են մատակարարը և բաժանորդը: Արձանագրության (ակտի) որևէ դրույթին բաժանորդի անհամաձայնության դեպքում այդ մասին արձանագրությունում (ակտում) կատարվում է համապատասխան նշում՝ նկարագրելով անհամաձայնության պատճառները: Արձանագրությունը (ակտը) կազմվում է երկու օրինակից՝ մեկական յուրաքանչյուր կողմի համար: Բաժանորդի չներկայանալու դեպքում մատակարարը արձանագրությանը (ակտին) կցում է բաժանորդին ծանուցելու մասին գրությունը և արձանագրության (ակտի) մեջ կատարում համապատասխան նշում՝ բաժանորդի առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը չներկայանալու մասին.

3) տեղակայում է իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարք, որի տվյալներն ամրագրվում են Պայմանագրում: Կազմակերպությունների առևտրային հաշվառքի սարքերի՝ բացառությամբ RG տիպի առևտրային հաշվառքի սարքերի, ստուգաչափման դեպքում մատակարարն իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքը տեղակայում է ժամանակավոր՝ մինչև կազմակերպության առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափումը: Մատակարարի կողմից տեղադրվող առևտրային հաշվառքի սարքը պետք է համալրված լինի առնվազն 30 օր հիշողություն ունեցող գազի ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բաժանորդը օգտագործում է ցածր ճնշման բնական գազ, և բնական գազի ծախսը հաշվառվում է մինչև G6 (ներառյալ) տիպի բնական գազի մեկ առևտրային հաշվառքի սարքով: Եթե կազմակերպության առևտրային հաշվառքի սարքը համալրված չէ գազի ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչով, ապա մատակարարն այն համալրում է իր միջոցներով:

30. Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության վերաբերյալ կասկածի դեպքում իրականացվում է առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափում: Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափումը կարող է իրականացվել ինչպես բաժանորդի պահանջով, այնպես էլ մատակարարի նախաձեռնությամբ: Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման դեպքում մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումից ոչ ուշ, քան 15

աշխատանքային օրվա ընթացքում, բաժանորդին ներկայացնել Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության պատճենը: Մատակարարը պարտավոր է բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման վերաբերյալ գրավոր պահանջ ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ապահավաքակցել առևտրային հաշվառքի սարքը:

31. Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կրում է մատակարարը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Չափագիտական մարմնի տված փորձագիտական եզրակացությամբ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի այնպիսի խախտում, որի դեպքում մատակարարված բնական գազի վերահաշվարկն իրականացվում է սույն կանոնների 37-րդ կետի համաձայն կամ բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի միջստուգաչափման ժամկետում մեկից ավելի անգամ առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման վերաբերյալ դիմումի ներկայացման արդյունքում Չափագիտական մարմնի տված փորձագիտական եզրակացությամբ չի հաստատվել առևտրային հաշվառքի սարքի խախտում: Նման դեպքերում առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կրում է բաժանորդը:

32. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդի ծախսած գազի քանակի և արժեքի վերահաշվարկ: Գազի քանակի վերահաշվարկը կատարվում է սույն կանոնների 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ կետերի համաձայն: Վերահաշվարկված գազի արժեքը որոշվում է վերահաշվարկված գազի քանակի և առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման ամսվա գազի սակագնի արտադրյալով:

Սույն կետը չի սահմանափակում մատակարարի կամ բաժանորդի իրավունքը՝ առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով մյուս կողմից պահանջելու պատճառած վնասի հատուցում:

33. Մատակարարը պարտավոր է գազի արժեքի վերահաշվարկին առնչվող ողջ տեղեկատվությունը գրավոր ներկայացնել բաժանորդին՝ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումից ոչ ուշ, քան 35 աշխատանքային օրվա ընթացքում: Բաժանորդը կարող է չհամաձայնել վերահաշվարկի արդյունքին: Եթե բաժանորդը չի համաձայնում վերահաշվարկի արդյունքին, ապա մատակարարի կողմից գազի արժեքի վերահաշվարկին առնչվող տեղեկատվությունն ստանալու պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում բաժանորդը մատակարարին է ներկայացնում վերջինիս կատարած վերահաշվարկի հետ կապված իր գրավոր առարկությունները՝ համապատասխան հիմնավորումներով:

Մատակարարը պարտավոր է բաժանորդի գրավոր առարկություններն ստանալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, քննարկել դրանք և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել բաժանորդին՝ պարզաբանելով վերահաշվարկի արդյունքի վիճելի դրությունները և դրանց հիմքերը: Մատակարարն իր կատարած վերահաշվարկում անճշտություններ հայտնաբերելու դեպքում պարտավոր է ճշգրտել վերահաշվարկված գազի արժեքը: Մատակարարը վերահաշվարկված (ճշգրտված) գազի արժեքը հաշվի է առնում (նվազեցնում կամ ավելացնում) վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող վճարման փաստաթղթում: Մատակարարի և բաժանորդի համատեղ քննարկումների արդյունքում տարաձայնությունների առկայության դեպքում բաժանորդը վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա ընթացքում վճարման ենթակա գազի արժեքի հետ վճարում է վերահաշվարկված գազի արժեքի՝ իր կողմից չվիճարկվող մասի համար: Այդ դեպքում մատակարարն իրավունք չունի դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ մինչև վեճը Հանձնաժողովում լուծելը: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճը լուծելու դատական կարգով:

Վեճի վերջնական լուծումից հետո մատակարարը վերահաշվարկված (վեճի արդյունքում որոշված) գազի արժեքը հաշվի է առնում (նվազեցնում կամ ավելացնում) վեճի լուծման ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում:

Եթե բաժանորդը սույն կետում սահմանված ժամկետում վերահաշվարկի արդյունքի մասին մատակարարին գրավոր առարկություններ չի ներկայացնում, ապա մատակարարը վերահաշվարկված գազի արժեքը հաշվի է առնում վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին ներկայացվող վճարման փաստաթղթում:

34. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ առկա է հսկիչ հաշվառքի սարք, բաժանորդի ծախսած գազի քանակի վերահաշվարկը կատարվում է համաձայն հսկիչ հաշվառքի սարքի ցուցմունքի՝ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքի գրանցման օրն ընկած ժամանակահատվածի համար: Վերահաշվարկված գազի քանակն ընդունվում է հավասար հսկիչ և առևտրային հաշվառքի սարքերով հաշվառված գազի քանակի տարբերությանը: Եթե մատակարարը և բաժանորդը առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքի գրանցման օրը չեն գրանցել հսկիչ հաշվառքի սարքի ցուցմունքը, բաժանորդի ծախսած գազի քանակի վերահաշվարկ չի իրականացվում:

35. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ առկա չէ հսկիչ հաշվառքի սարք, Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված է եղել առևտրային հաշվառքի սարքի առանձին դետալների այնպիսի խափանումներով կամ վնասվածքներով, որոնք չէին կարող պայմանավորված լինել որևէ անձի ներգործությամբ, միննույն ժամանակ հնարավոր է եղել որոշել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի սխալանքի թույլատրելի տիրույթը գերազանցող չափը (արտահայտված տոկոսներով), ապա.

1) բնակչության և կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների համար վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{\text{գր}} = V_{\text{Օժ}} \frac{US_{\text{Օր1}} U\%}{100},$$

որտեղ՝

$V_{\text{գր}}$ -ն առևտրային հաշվառքի սարքի խախտման ժամանակահատվածի համար վերահաշվարկված գազի քանակն է (խորանարդ մետր),

$V_{\text{Օժ}}$ -ն առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը նախորդող տարվա եղանակային նույն ժամանակաշրջանի (ձմեռ, գարուն, ամառ, աշուն)՝ ծախս ունեցած ամիսների միջին օրական ծախսն է, իսկ եթե այդ ժամանակահատվածում բաժանորդը ծախս չի ունեցել, ապա առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը նախորդող ծախս ունեցած ամսվա միջին օրական ծախսն է,

$US_{\text{Օր1}}$ -ը առևտրային հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքի գրանցման պահից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածն է՝ արտահայտված օրերով, որը 40 օրը գերազանցելու դեպքում ընդունվում է հավասար 40-ի, եթե խախտումը հայտնաբերվել է մատակարարի կողմից, ինչը սակայն չի սահմանափակում մատակարարի իրավունքը համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում կիրառել ավելի կարճ ժամկետ և 60 օրը գերազանցելու դեպքում ընդունվում է հավասար 60-ի, եթե խախտումը հայտնաբերվել է բաժանորդի կողմից,

U%-ը Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության մեջ նշված առևտրային հաշվառքի սարքի չափման սխալանքի թույլատրելի տիրույթը գերազանցող տոկոսային մեծությունն է.

2) ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների համար վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\Psi_{\text{գր}} = U_{\text{օծ}} \frac{US_{\text{օր2}} U_{\%}}{100 - U_{\%}},$$

որտեղ՝

$US_{\text{օր2}}$ -ը առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքի գրանցման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածն է՝ արտահայտված օրերով, որը 30 օրը գերազանցելու դեպքում ընդունվում է հավասար 30-ի, ինչը սակայն չի սահմանափակում մատակարարի իրավունքը համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում կիրառել ավելի կարճ ժամկետ,

$U_{\text{օծ}}$ -ն բաժանորդի միջին օրական ծախսն է, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U_{\text{օծ}} = \frac{Z_{\text{գր1}}}{S_{\text{օր}}},$$

որտեղ՝

$Z_{\text{գր1}}$ -ն առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքի գրանցման պահից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրը առևտրային հաշվառքի սարքով հաշվառված գազի ծախսն է (խորանարդ մետր), իսկ եթե նշված ամսում ծախս չի գրանցվել, ապա ծախս ունեցած վերջին հաշվարկային ամսում առևտրային հաշվառքի սարքով հաշվառված գազի ծախսն է (խորանարդ մետր),

$S_{\text{օր}}$ -ը առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքի գրանցման պահից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածում ծախս չի գրանցվել, ապա ծախս ունեցած վերջին հաշվարկային ամսում ծախս ունեցած օրերի քանակը:

36. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ առկա չէ հսկիչ հաշվառքի սարք, Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված է եղել առևտրային հաշվառքի սարքի առանձին դետալների այնպիսի խափանումներով կամ վնասվածքներով, որոնք չէին կարող պայմանավորված լինել որևէ անձի ներգործությամբ, մինևույն ժամանակ Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության համաձայն հնարավոր չէ որոշել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի սխալանքի թույլատրելի տիրույթը գերազանցող չափը (արտահայտված տոկոսներով), ապա՝

1) եթե առևտրային հաշվառքի սարքը հազեցած չէ էլեկտրոնային ճշտիչով կամ Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է էլեկտրոնային ճշտիչի կամ դրա առանձին դետալների աշխատանքի այնպիսի խափանումը, որի հետևանքով հնարավոր չէ արտաձել սույն կետի 2-րդ ենթակետի բանաձևում նշված ցուցանիշների ճշգրիտ արժեքները, ապա վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\Psi_{\text{գր}} = \sqrt{U_{\text{օծ}} \cdot US_{\text{օր3}} - Z_{\text{գր2}}},$$

որտեղ՝

$\Psi_{\text{գր}}$ -ն առևտրային հաշվառքի սարքի խախտման ժամանակահատվածի համար վերահաշվարկված գազի քանակն է (խորանարդ մետր),

US_{op3}-ը առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքի գրանցման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածն է՝ արտահայտված օրերով, որը 30 օրը գերազանցելու դեպքում ընդունվում է հավասար 30-ի, ինչը սակայն չի սահմանափակում մատակարարի իրավունքը՝ համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում կիրառել ավելի կարճ ժամկետ,

Հ_{գր2}-ը առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքի գրանցման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրն առևտրային հաշվառքի սարքով հաշվառված գազի ծախսն է (խորանարդ մետր),

2) էլեկտրոնային ճշտիչով հագեցած առևտրային հաշվառքի սարքի դեպքում, եթե ճշտիչի հիշողությունից հնարավոր է արտածել սույն ենթակետի բանաձևում նշված ցուցանիշների ճշգրիտ արժեքները, վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{գր} = US_{op4} \cdot U_{օօտէէ} - Z_{գր3},$$

որտեղ՝

$V_{գր}$ -ն առևտրային հաշվառքի սարքի խախտման ժամանակահատվածի համար վերահաշվարկված գազի քանակն է (խորանարդ մետր),

US_{op4}-ը առևտրային հաշվառքի սարքի խախտման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածն է՝ արտահայտված օրերով, որը 40 օրը գերազանցելու դեպքում ընդունվում է հավասար 40-ի,

U_{օօտէէ} -ն առևտրային հաշվառքի սարքի խախտմանը նախորդող վերջին ցուցմունքի գրանցման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի խախտման օրն ընկած ժամանակահատվածում բաժանորդի միջին օրական ծախսն է (խորանարդ մետր),

Հ_{գր3} -ը առևտրային հաշվառքի սարքի խախտման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրը առևտրային հաշվառքի սարքով հաշվառված գազի ծախսն է (խորանարդ մետր, իսկ եթե առևտրային հաշվառքի սարքի խախտման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածը գերազանցում է 40 օրը, ապա առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրվան նախորդող 40 օրերի ընթացքում առևտրային հաշվառքի սարքով հաշվառված գազի ծախսն է (խորանարդ մետր):

37. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ առկա չէ հսկիչ հաշվառքի սարք, Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է, որ բացակայում են կամ կեղծված են կամ վնասված են առևտրային հաշվառքի սարքի կնիքները կամ առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված է եղել առևտրային հաշվառքի սարքի առանձին դետալների այնպիսի խախտումներով կամ վնասվածքներով, որոնք կարող էին պայմանավորված լինել միայն որևէ անձի ներգործությամբ, մինևսյն ժամանակ, մատակարարի գնահատմամբ՝ հաշվի առնելով Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությունը, այն հանգեցրել է բաժանորդի ծախսած բնական գազի քանակի սխալ հաշվառման, ապա

1) բնակչության և կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների համար վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{գր} = US_{op2} \cdot \bar{V}_{միջ} 0,5Q_{max} - Z_{գր2},$$

որտեղ՝

$\bar{V}_{միջ}$ -ը բաժանորդի ծախսի միջին օրական ժամերի քանակն է, որն ընդունվում է հավասար ութ ժամի,

Q_{max}-ը տվյալ առևտրային հաշվառքի սարքի ժամային առավելագույն անձնագրային թողունակությունն է.

2) ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների համար վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{qp} = U S_{op2} \cdot \sigma_{t\&} \cdot Q_{t\&} 0,5 Q_{max} - Z_{qp1},$$

որտեղ՝

$\sigma_{t\&}$ -ն առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքի գրանցման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածում բաժանորդի ծախս ունեցած ժամերի միջին օրական քանակն է, որը որոշվում է առևտրային հաշվառքի սարքի էլեկտրոնային ճշտիչի հիշողության մեջ արտացոլված տվյալների հիման վրա: Առևտրային հաշվառքի սարքի էլեկտրոնային ճշտիչի վնասման դեպքում $\sigma_{t\&}$ մեծությունն ընդունվում է հավասար 12-ի,

$Q_{t\&}$ -ն առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքի գրանցման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածում բնական գազի ճնշումը և ջերմաստիճանը հաշվի առնող գործակիցն է, որը որոշվում է առևտրային հաշվառքի սարքի էլեկտրոնային ճշտիչի հիշողության մեջ արտացոլված տվյալների հիման վրա: Առևտրային հաշվառքի սարքի էլեկտրոնային ճշտիչի բացակայության կամ վնասման դեպքում $Q_{t\&}$ մեծությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում կիրառվող չափումների կատարման մեթոդիկաների համաձայն,

Q_{max} -ը տվյալ առևտրային հաշվառքի սարքի ժամային առավելագույն անձնագրային թողունակությունն է:

38. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ Չափագիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտումը ըստ մատակարարի պայմանավորված է բաժանորդի միտումնավոր գործողություններով, և դա առևտրային հաշվառքի սարքի խախտման առաջին դեպքն է վերջին երկու տարիների ընթացքում, մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ վերահաշվարկված գազի արժեքի չափով: Բաժանորդի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին համաձայնելու դեպքում մատակարարը հաշվարկված տույժը հաշվի է առնում վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Բաժանորդի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին չհամաձայնելու դեպքում մատակարարը վեճը լուծում է դատական կարգով: Մատակարարն իրավունք չունի տույժի չվճարման համար դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը մինչև վեճի վերջնական լուծումը:

Միևնույն բաժանորդի մոտ երկու տարվա ընթացքում առևտրային հաշվառքի սարքի մեկից ավելի խախտում հայտնաբերելու դեպքում, երբ Չափագիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքերը ըստ մատակարարի պայմանավորված են եղել բաժանորդի միտումնավոր գործողություններով, մատակարարն իրավունք ունի վերահաշվարկված գազի արժեքի կրկնապատիկի չափով հաշվարկելու տույժ և այն հաշվի առնել վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Այդ դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ հաշվարկված տույժը՝ կազմակերպությունների դեպքում սույն կանոնների 6-րդ գլխով, իսկ բնակչության դեպքում՝ սույն կանոնների 8-րդ գլխով սահմանված կարգով չվճարելու համար: Մատակարարի հաշվարկված տույժին չհամաձայնելու դեպքում բաժանորդը վեճը լուծում է դատական կարգով:

39. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ փաստվել է, որ դա պայմանավորված է մատակարարի գործողություններով, ապա մատակարարը բաժանորդին վճարում է տույժ՝ հաշվարկային ամսվա համար ներկայացվելիք հաշվարկային (վճարման) փաստաթղթում ձևակերպելով կանխավճար վերահաշվարկված գազի արժեքի կրկնապատիկի չափով:

40. Սույն գլխում ամրագրված դրույթները չեն սահմանափակում բաժանորդի իրավունքը՝ իր գազասպառման համակարգին ամրակցված առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգումը սեփական միջոցների հաշվին պատվիրելու հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման իրավունք ունեցող այլ կազմակերպությունների: Նման դեպքում մատակարարը պարտավոր է ապահովել սույն կետով սահմանված բաժանորդի իրավունքը, որն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

1) մատակարարը բաժանորդի գրավոր դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, բաժանորդի հետ համատեղ ապահավաքակցում, փաթեթավորում և կնքված տեսքով բաժանորդին է հանձնում առևտրային հաշվառքի սարքը այն ժամանակավորապես փոխարինելով այլ՝ առնվազն համարժեք առևտրային հաշվառքի սարքով, իսկ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը բաժանորդի չներկայանալու դեպքում մատակարարը կազմում է բաժանորդի չներկայանալու մասին արձանագրություն. այդ դեպքում առևտրային հաշվառքի սարքը չի ապահավաքակցվում.

2) բաժանորդը ոչ ուշ, քան ապահավաքակցմանը հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, մատակարարին է վերադարձնում ստուգաչափված և Չափագիտական մարմնի կողմից վկայագրված, փաթեթավորված և կնքված առևտրային հաշվառքի սարքը և դրա փորձաքննության արդյունքների մասին իրավասու կազմակերպության գրավոր եզրակացությունը, որը պետք է հաստատված լինի Չափագիտական մարմնի կողմից: Այն դեպքում, երբ ներկայացված փորձաքննական եզրակացությամբ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի խախտում, մատակարարը պարտավոր է առաջնորդվել սույն կանոնների 4-րդ գլխով սահմանված կարգով: Սույն կետով նախատեսված դեպքում մատակարարն իրավունք ունի ներկա գտնվել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման, փորձաքննության և ստուգաչափման աշխատանքներին:

41. Սույն կանոնների 40-րդ կետում սահմանված դեպքում, երբ մատակարարը ցանկություն է հայտնել մասնակցել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգմանը կամ ստուգաչափմանը, բաժանորդը պարտավոր է առնվազն երեք աշխատանքային օր առաջ մատակարարին գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցել դրա իրականացման ժամկետների և վայրի մասին: Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման կամ ստուգաչափման ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված մատակարարի չներկայանալը այն չիրականացնելու հիմք չէ:

42. Այն դեպքում, երբ բաժանորդը 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարին չի վերադարձնում առևտրային հաշվառքի սարքը, ապա մատակարարը իրավունք ունի բաժանորդից պահանջելու տույժ վերջին մեկ տարվա ընթացքում առավելագույն ծախս ունեցած ամսվա գազի արժեքի կրկնապատիկի չափով, իսկ այդ ժամանակահատվածում ծախս չունենալու դեպքում՝ դրան նախորդող տարվա առավելագույն ծախս ունեցած ամսվա գազի արժեքի կրկնապատիկի չափով: Մինչև ժամանակ, մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջելու հասցված վնասի փոխհատուցում՝ ներառյալ առևտրային հաշվառքի սարքի արժեքի, վերջինիս ապահավաքակցման հետ կապված և այլ ծախսերը:

Բ Ա Ճ Ի Ն Ի
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱԶՄՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 5
ԳԱԶԻ ՄՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

43. Մատակարարը կազմակերպությունների գազամատակարարումն սկսում է հետևյալ պայմանների ապահովման դեպքում.

- 1) կատարվել են միացման պայմանագրի բոլոր պայմանները.
- 2) մատակարարը կազմակերպության հետ կնքել է Պայմանագիր:

44. Մատակարարը պարտավոր է գազը մատակարարել բաժանորդի կողմից առաջադրված և Պայմանագրում ամրագրված ժամանակացույցով (շուրջտարյա, սեզոնային) և չափաքանակներով: Պայմանագրով սահմանված չափաքանակների խախտման համար մատակարարի կամ բաժանորդի պատասխանատվությունը սահմանվում է Պայմանագրով:

45. Մատակարարը պարտավոր է բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության դիմումի հիման վրա կնքել գազամատակարարման ցանցին միացված, սակայն օգտագործման մեջ չգտնվող գազօգտագործող սարքավորման գազի մուտքային զծերի փականները և դրա վերաբերյալ կազմել համապատասխան ակտ: Բաժանորդի դիմումի համաձայն կնքված գազօգտագործող սարքավորումը համարվում է աշխատանքի մեջ չգտնվող: Կազմակերպությունն իրավունք չունի առանց մատակարարին տեղյակ պահելու հանել վերջինիս կնիքները:

46. Մատակարարն իրավունք ունի ընդհատել, դադարեցնել կամ Պայմանագրով սահմանված կարգով սահմանափակել բաժանորդի գազամատակարարումը՝

1) ֆորս մաժորի դեպքում, եթե անհրաժեշտ է արագ վերացնել ֆորս մաժորի ազդեցությունը կամ հետևանքները, ինչպես նաև վթարները կամ վթարային իրավիճակները վերացնելու կամ կանխելու համար անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու դեպքերում.

2) գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու կամ նոր բաժանորդների գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացնելու դեպքում.

3) սույն կանոնների 6-րդ գլխով սահմանված կարգով և ժամկետներում մատակարարված (վերահաշվարկված) գազի արժեքի, իսկ բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների դեպքում՝ մատակարարված (վերահաշվարկված) գազի արժեքի կամ գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության համար չվճարելու դեպքում.

4) սույն կանոնների 23-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն խցափակված գազօգտագործող սարքավորման սնուցումը բաժանորդի կողմից ինքնակամ վերականգնելու դեպքում.

5) սույն կանոնների 45-րդ կետով սահմանված կարգով կնքված գազօգտագործող սարքավորման գազի մուտքային զծերի փականների կնիքը բաժանորդի կողմից առանց մատակարարին պատշաճ ձևով տեղյակ պահելու հանելու դեպքում.

6) եթե բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպությունը մեկ տարուց ավելի բնական գազ չի սպառել, և այդ ընթացքում վերջինիս գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում չի իրականացվել.

- 7) օրենքով կամ Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

47. Սույն կանոնների 46-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքերում մատակարարն իրավունք ունի ընդհատել գազամատակարարումն առանց բաժանորդին

նախագգուշացնելու: Մատակարարը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացնել բաժանորդին գազամատակարարման ընդհատման և վերականգնման ժամանակի մասին:

48. Սույն կանոնների 46-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքերում մատակարարն իրավունք ունի Պայմանագրով սահմանված կարգով ընդհատել գազամատակարարումը՝ մեկ օր առաջ նախագգուշացնելուց հետո:

49. Սույն կանոնների 46-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը սույն կանոնների 63-րդ կետով սահմանված կարգով, իսկ 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված դեպքերում մատակարարն իրավունք ունի անմիջապես դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ դադարեցումից անմիջապես առաջ նախագգուշացնելով բաժանորդին:

50. Սույն կանոնների 46-րդ կետի 6-րդ ենթակետում նշված դեպքում, նախքան գազամատակարարման դադարեցումը, մատակարարը պարտավոր է այդ մասին ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցել բաժանորդին:

51. Սույն կանոնների 46-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված դեպքերում մատակարարը վերսկսում է գազամատակարարումը գազասպառման համակարգի շահագործման տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության դեպքում՝ բաժանորդի կողմից տվյալ հաշվարկային կիսամյակի գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման գումարը վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ Պայմանագրով ամրագրված հեռախոսահամարով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 36 ժամվա ընթացքում, սույն կանոնների 46-րդ կետի 6-րդ ենթակետում նշված դեպքում մատակարարն իր հաշվին վերսկսում է գազամատակարարումը բաժանորդի դիմումն ստանալուց հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 36 ժամվա ընթացքում:

52. Մատակարարը պարտադիր դադարեցնում է գազամատակարարումը՝

1) առանց Պայմանագրի (ապօրինի) սպառման դեպքում.

2) բաժանորդի դիմումի համաձայն, վերջինիս նախընտրած եղանակով (կնքման կամ եռակցման միջոցով).

3) գազասպառման համակարգում կամ գազատարների պահպանման գոտիներում բաժանորդի կողմից կատարված այնպիսի ինքնակամ փոփոխությունների դեպքում, որոնք մատակարարի գնահատմամբ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջությանը, կյանքին կամ գույքին.

4) պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազոր պետական կառավարման մարմնի կարգազրի հիման վրա.

5) օրենքով սահմանված այլ դեպքերում:

53. Սույն կանոնների 52-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերում նշված դեպքերում մատակարարը կազմում է խախտման մասին արձանագրություն, անմիջապես դադարեցնում բաժանորդի գազամատակարարումը տվյալ սահմանազատման կետում և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջում վնասի փոխհատուցում և խախտված պահպանման գոտիների վերականգնում՝ բաժանորդի հաշվին:

54. Սույն կանոնների 52-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում գազամատակարարման դադարեցումը կատարվում է բաժանորդի առաջադրած խելամիտ ժամկետում:

55. Սույն կանոնների 52-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքերում գազամատակարարման դադարեցումը կատարվում է կարգազրկ սահմանված ժամկետում՝ գազամատակարարման դադարեցումից անմիջապես առաջ նախագրուշացնելով բաժանորդին:

56. Սույն կանոնների 46-րդ կամ 52-րդ կետերում նշված գազամատակարարման ընդհատման կամ դադարեցման, Պայմանագրով սահմանված սահմանափակման կարգը չպահպանելու դեպքում բաժանորդն իրավունք ունի մատակարարից պահանջել իր կրած վնասի փոխհատուցում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ կամ Պայմանագրով սահմանված կարգով:

57. Բարդ և անընդհատ տեխնոլոգիական ցիկլերում գազ օգտագործող կազմակերպությունների դեպքում կողմերը Պայմանագրի լրացուցիչ պայմաններում պետք է սահմանեն գազամատակարարման սահմանափակման պայմանները՝ այնպես, որ այդ ժամանակահատվածի ավարտից հետո մատակարարն իրավունք ունենա ընդհատել կամ դադարեցնել կազմակերպության գազամատակարարումը:

58. Մատակարարը իրավունք ունի դադարեցնել կազմակերպության գազամատակարարումը, եթե վերջինս խոչընդոտել է մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցչի մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք՝ լիազորությունները հավաստող ծառայողական վկայական (լուսանկարով) ներկայացնելու և կազմակերպության քարտի համարը հայտնելու դեպքում:

59. Սույն կանոնների 46-րդ կետի 3-րդ ենթակետում, 52-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում կամ 58-րդ կետում նշված դեպքերում գազամատակարարումը եռակցման կամ կնքման միջոցով դադարեցնելու և վերսկսելու դեպքում մատակարարի կատարած ծախսերը փոխհատուցում է կազմակերպությունը:

ԳԼՈՒԽ 6

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԳԱԶԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

60. Կազմակերպությանը հաշվարկային ամսում մատակարարված գազի քանակը որոշվում է վերջինիս Պայմանագրում նշված առևտրային հաշվառքի սարքի (հաշվառքի կայանի չափող սարքավորումների) գրանցած ցուցմունքների տարբերության միջոցով՝ բերված հաշվարկային ամսվա ժամանակահատվածի: Կազմակերպությանը մատակարարված գազի քանակը ճշգրտվում է «Չափումների միասնականության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում կիրառվող չափումների կատարման մեթոդիկաներով: Կազմակերպությանը մատակարարված բնական գազի քանակը չի ճշգրտվում, եթե վերջինս կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է:

Եթե առևտրային հաշվառքի սարքը տեղադրված է սահմանազատման կետից դուրս՝ գազասպառման համակարգի հատվածում, ապա առևտրային հաշվառքի սարքով հաշվառված գազի քանակին գումարվում է դրա տեղադրման և սահմանազատման կետերի միջև առաջացած գազի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների մեծությունը: Եթե առևտրային հաշվառքի սարքը տեղադրված է սահմանազատման կետից դուրս՝ գազամատակարարման ցանցի հատվածում, ապա առևտրային հաշվառքի սարքով հաշվառված գազի քանակից նվազեցվում է դրա տեղադրման և սահմանազատման կետերի միջև առաջացած գազի վթարային կորուստների մեծությունը: Տեխնոլոգիական անխուսափելի կորուստների մեծությունը հաշվարկվում է Հանձնաժողովի հետ

համաձայնեցված՝ բնական գազի բաշխիչ ցանցերում տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի մեթոդիկայի համաձայն:

61. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին կամ հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Մատակարարը պարտավոր է կազմակերպության առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցել նրա ներկայացուցչի մասնակցությամբ, եթե վերջինս ներկայացրել է նման պահանջ: Այդ դեպքում մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցել կազմակերպության հետ համատեղ՝ փոխհամաձայնեցված ժամկետում՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին կամ հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցել առանց կազմակերպության ներկայացուցչի, եթե սույն կետով սահմանված ընթացակարգով տեղեկացնելուց հետո վերջինս չի ներկայացել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 41Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 42Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ն որոշման 1-ին կետով սահմանված բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևի համաձայն մատակարարի և կազմակերպության ներկայացուցիչները հաշվարկային ամսվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմում են կազմակերպությանը մատակարարված բնական գազի քանակի մասին երկկողմ ակտ: Այն դեպքում, երբ կազմակերպությունը (պատասխանատու անձը) չի մասնակցում առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը և սույն կետում նշված ակտի կազմմանը, ապա մատակարարը կարող է ակտը կազմել միակողմանի: Մատակարարի կողմից կազմված ակտը հիմք է հանդիսանում կազմակերպությանը հաշվարկային (վճարման) փաստաթուղթ ներկայացնելու համար:

62. Կազմակերպության գրավոր (այդ թվում՝ փոստով, հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) պահանջի դեպքում Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր ամիս վերջինիս ծանուցել հաշվարկային ամսում մատակարարված գազի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործված բոլոր ցուցանիշների մասին: Ծանուցումը փոստով առաքելու կազմակերպության պահանջի դեպքում՝ փոստային առաքման համար վճարում է կազմակերպությունը, իսկ մնացած դեպքերում ծանուցումն իրականացվում է մատակարարի միջոցներով:

63. Հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի համար մատակարարը բաժանորդին ներկայացնում է հաշվարկային (վճարման) փաստաթուղթ: Կազմակերպությունը նախորդ հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի արժեքի համար պարտավոր է վճարումը կատարել մատակարարից հաշվարկային (վճարման) փաստաթուղթն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում: Սույն կետը չի սահմանափակում մատակարարի իրավունքը՝ կազմակերպություններին հաշվարկային (վճարման) փաստաթուղթ ներկայացնել սույն կանոնների 83-րդ կետով սահմանված կարգով:

64. Սույն կանոնների 63-րդ կետում սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում մատակարարը գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) զգուշացնում է կազմակերպությանը՝ վճարումը

չկատարելու դեպքում գազամատակարարման դադարեցման կամ սահմանափակման մասին: Եթե գգուշացման պահից սկսած երեք օրվա ընթացքում կազմակերպությունը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել կամ սահմանափակել վերջինիս գազամատակարարումը: Գազամատակարարումը դադարեցնելուց կամ սահմանափակելուց անմիջապես առաջ մատակարարը պարտավոր է այդ մասին գգուշացնել կազմակերպությանը:

65. Կազմակերպության կողմից պարտքը ամբողջությամբ մարելուց և այդ մասին մատակարարի հավաստիանալուց հետո վերջինս պարտավոր է կազմակերպության հետ համաձայնեցված կարգով գազամատակարարումը վերսկսել հնարավորինս կարճ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 36 ժամը:

66. Մատակարարը չպետք է դադարեցնի կամ սահմանափակի կազմակերպության գազամատակարարումը, եթե վերջինս ներկայացրել է մատակարարի համար ընդունելի պայմաններով վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմել է պարտքի մարման ժամանակացույց: Եթե կազմակերպությունը պարտքը չի մարում ըստ ժամանակացույցի, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել վերջինիս գազամատակարարումը՝ սույն կանոնների 64-րդ կետում սահմանված կարգով նախագգուշացնելուց հետո:

67. Հաշվարկային (վճարման) փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին գրավոր ծանուցում է մյուս կողմին: Ծանուցումն ստանալու պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում կողմն անհամաձայնության դեպքում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Սխալի փաստը հաստատվելու դեպքում մատակարարը սխալ հաշվարկված բնական գազի արժեքը հաշվի է առնում (նվազեցնում կամ ավելացնում է) հաջորդ հաշվարկային ամսում բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Հաշվարկային (վճարման) փաստաթղթի վերաբերյալ տարաձայնությունների դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս վճարել է մատակարարված բնական գազի՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իր կողմից սպառված բնական գազի վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին:

68. Մատակարարը կազմակերպության կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում իրավունք ունի՝ խախտմանը հաջորդող 12 ամիսների ընթացքում տվյալ խախտումը կրկնվելու դեպքում, վերջին խախտմանը հաջորդող երեք ամիսների ընթացքում պահանջել վճարելու կանխավճար կամ ներկայացնել իր համար ընդունելի վճարման այլ երաշխիք, որի մեծությունը չպետք է գերազանցի կազմակերպության նախորդ տարում օգտագործած բնական գազի ծախս ունեցած ամիսների միջին ամսական արժեքի 50 տոկոսը: Կազմակերպության կողմից առաջին խախտմանը հաջորդող 12 ամիսների ընթացքում տվյալ խախտումը երրորդ անգամ կրկնվելու դեպքում մատակարարն իրավունք ունի վերջին խախտման վերացմանը հաջորդող վեց ամիսների ընթացքում պահանջել վճարելու կանխավճար կամ ներկայացնել մատակարարի համար ընդունելի վճարման այլ երաշխիք, որի մեծությունը չպետք է գերազանցի վերջին խախտմանը նախորդող 12 ամիսների ընթացքում կազմակերպության օգտագործած բնական գազի առավելագույն ծախս ունեցած ամսվա արժեքը:

69. Մատակարարը ավտոմոբիլային գազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) և (կամ) Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 41Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային

ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 42Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ն որոշման 1-ին կետով սահմանված բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևով նախատեսված Բաժանորդների (կազմակերպությունների), (որոնց ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցել է 10 000 խորանարդ մետրը) սպառման համակարգի տեղակայման տարածքը վարձակալած կամ սեփականության իրավունքից տարբերվող իրավունքով օգտագործող կազմակերպություններից իրավունք ունի պահանջել հաշվարկային ամսվա ընթացքում վճարելու կանխավճար արդեն իսկ մատակարարված գազի արժեքի չափով, սակայն ոչ ավելի հաճախ, քան տասն օրը մեկ անգամ:

70. Եթե կազմակերպությունը սույն կանոնների 68-րդ և 69-րդ կետերում սահմանված դեպքերում սույն կանոնների 63-րդ կետում սահմանված ժամկետում չի վճարում կանխավճարը կամ չի ներկայացնում մատակարարի համար ընդունելի վճարման այլ երաշխիք, ապա մատակարարն իրավունք ունի սույն կանոնների 64-րդ կետով սահմանված ընթացակարգով դադարեցնել կազմակերպության գազամատակարարումը: Սույն կանոնների 68-րդ կետում սահմանված դեպքում, եթե կազմակերպությունը բարդ, անընդհատ տեխնոլոգիական ցիկլում գազ օգտագործող է, ապա մատակարարը վերջինիս գազամատակարարումը կարող է դադարեցնել միայն Պայմանագրի լրացուցիչ պայմաններում սահմանված պայմաններն ապահովելուց հետո:

71. Մատակարարն իրավունք չունի, բացառությամբ սույն կանոնների 68-րդ և 69-րդ կետերում սահմանված դեպքերի, գազի մատակարարման համար կազմակերպությունից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման այլ երաշխիքներ:

72. Սույն կանոնների 62-րդ, 63-րդ, 64-րդ, 65-րդ, 66-րդ և 67-րդ կետերը հավասարապես տարածվում են մատակարարի և բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության՝ գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման հետ կապված վճարման հարաբերություններում:

Բ Ա Ժ Ի Ն III
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 7
ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

73. Մատակարարը սկսում է բնակչության գազամատակարարումը հետևյալ պայմանների դեպքում.

- 1) մատակարարը փորձարկել է ներտնային համակարգը և ստուգել նրա համապատասխանությունը նախագծին.
- 2) ընդունող հանձնաժողովը կազմել է ներտնային համակարգի շահագործման ընդունման ակտը.
- 3) միացման պայմանագրի բոլոր պայմանները կատարվել են.
- 4) Պայմանագրով սահմանված կարգով մատակարարը հրահանգավորել է բաժանորդին (վարձակալին, փաստացի օգտագործողին) գազի սարքերի անվտանգ շահագործման կանոնների պահպանման մասին.
- 5) մատակարարը բաժանորդի հետ կնքել է Պայմանագիր:

74. Մատակարարը պարտավոր է բաժանորդին մատակարարել անհրաժեշտ քանակի գազ՝ Պայմանագրում ամրագրված գազօգտագործող սարքավորումների հզորությունների

սահմաններում, Պայմանագրով ամրագրված ժամանակացույցով (շուրջտարյա, սեզոնային): Գազը մատակարարվում է անընդհատ, եթե բաժանորդի պահանջով Պայմանագրում մատակարարման այլ կարգ չի նախատեսվում:

75. Մատակարարն իրավունք ունի ընդհատել կամ դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝

1) ֆորս մաժորի դեպքում, եթե անհրաժեշտ է արագ վերացնել ֆորս մաժորի ազդեցությունը կամ հետևանքները.

2) վթարները կամ վթարային իրավիճակները վերացնելու կամ կանխելու համար անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու դեպքերում.

3) գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու կամ նոր բաժանորդների գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացնելու դեպքում.

4) ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման նպատակով մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցչի մուտքը բնակիչ-բաժանորդի ներտնային գազասպառման համակարգի տեղակայման տարածք խոչընդոտելու դեպքում.

5) սույն կանոնների 8-րդ գլխով սահմանված կարգով և ժամկետներում մատակարարված (վերահաշվարկված) գազի կամ ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության համար չվճարելու դեպքում.

6) սույն կանոնների 23-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն խցափակված գազօգտագործող սարքավորման սնուցումը բաժանորդի կողմից ինքնակամ վերականգնելու դեպքում.

7) սույն կանոնների 80-րդ կետով սահմանված կարգով կնքված գազօգտագործող սարքավորման մուտքային գծերի փականների կնիքը բաժանորդի կողմից առանց մատակարարին պատշաճ ձևով տեղյակ պահելու հանելու դեպքում.

8) եթե բնակիչ-բաժանորդը մեկ տարուց ավելի բնական գազ չի սպառել, և այդ ընթացքում վերջինիս ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում չի իրականացվել.

9) օրենքով կամ Հանձնաժողովի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կնքված Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

76. Սույն կանոնների 75-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված դեպքերում մատակարարն իրավունք ունի ընդհատել գազամատակարարումն առանց բաժանորդին նախազգուշացնելու: Մատակարարը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացնել բաժանորդին գազամատակարարման ընդհատման պատճառների և վերականգնման ժամանակի մասին: Սույն կանոնների 75-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում մատակարարն իրավունք ունի Պայմանագրով սահմանված կարգով ընդհատել գազամատակարարումը մեկ օր առաջ նախազգուշացնելուց հետո: Սույն կանոնների 75-րդ կետի 5-րդ ենթակետում նշված դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը սույն կանոնների 85-րդ կետով սահմանված կարգով, իսկ 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված դեպքերում մատակարարն իրավունք ունի անմիջապես դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ դադարեցումից անմիջապես առաջ նախազգուշացնելով բաժանորդին: Սույն կանոնների 75-րդ կետի 8-րդ ենթակետում նշված դեպքում, նախքան գազամատակարարման դադարեցումը, մատակարարը պարտավոր է այդ մասին ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցել բաժանորդին: Սույն կանոնների 75-րդ կետի 6-րդ ենթակետում նշված դեպքում մատակարարը վերսկսում է գազամատակարարումը սույն կանոնների 9-րդ կետի համաձայն գազասպառման համակարգում իրականացված փոփոխությունների

գործընթացն ավարտելուց, տեխնիկական կանոնակարգերի պահանջներով արձանագրված խախտումները վերացնելուց և այդ մասին բաժանորդի կողմից մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ Պայմանագրում ամրագրված հեռախոսահամարով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 36 ժամվա ընթացքում: Սույն կանոնների 75-րդ կետի 7-րդ ենթակետում նշված դեպքում մատակարարը վերսկսում է գազամատակարարումը գազասպառման համակարգի շահագործման տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության դեպքում՝ բաժանորդի կողմից տվյալ հաշվարկային կիսամյակի գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման գումարը վճարելուց և այդ մասին հայտնելուց (այդ թվում՝ Պայմանագրում ամրագրված հեռախոսահամարով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 36 ժամվա ընթացքում: Սույն կանոնների 75-րդ կետի 8-րդ ենթակետում նշված դեպքում մատակարարը իր հաշվին վերսկսում է գազամատակարարումը բաժանորդի դիմումը ստանալուց հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 36 ժամվա ընթացքում:

77. Սույն կանոնների 75-րդ կետի 4-րդ, 5-րդ ենթակետերում և 78-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերում նշված դեպքերում գազամատակարարումը եռակցման կամ կնքման միջոցով դադարեցնելու և վերսկսելու դեպքում մատակարարի կատարած ծախսերը փոխհատուցում է բնակիչ-բաժանորդը:

78. Մատակարարը պարտադիր դադարեցնում է գազամատակարարումը՝

1) առանց Պայմանագրի (ապօրինի) սպառման դեպքում.

2) բաժանորդի դիմումի համաձայն, վերջինիս նախընտրած եղանակով (կնքման կամ եռակցման միջոցով).

3) գազասպառման համակարգում բաժանորդի կողմից կատարված այնպիսի ինքնակամ փոփոխությունների դեպքում, որոնք մատակարարի գնահատմամբ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջությանը, կյանքին կամ գույքին.

4) օրենքով սահմանված այլ դեպքերում:

79. Սույն կանոնների 78-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում մատակարարը կազմում է խախտման մասին արձանագրություն, անմիջապես դադարեցնում է բնական գազի ապօրինի սպառումը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջում վնասի փոխհատուցում: Սույն կանոնների 78-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում գազամատակարարման դադարեցումը կատարվում է բաժանորդի և մատակարարի միջև փոխհամաձայնեցված՝ խելամիտ ժամկետում: Սույն կանոնների 78-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում մատակարարը անմիջապես դադարեցնում է բաժանորդի գազամատակարարումը՝ դադարեցումից անմիջապես առաջ նախագրուշացնելով բաժանորդին:

80. Մատակարարը պարտավոր է բնակիչ-բաժանորդի դիմումի հիման վրա կնքել գազամատակարարման ցանցին միացված, սակայն օգտագործման մեջ չգտնվող գազօգտագործող սարքավորման գազի մուտքային զծերի փականները և դրա վերաբերյալ կազմել համապատասխան ակտ: Բաժանորդի դիմումի համաձայն կնքված գազօգտագործող սարքավորումը համարվում է աշխատանքի մեջ չգտնվող: Բնակիչ-բաժանորդն իրավունք չունի առանց մատակարարին տեղյակ պահելու հանել վերջինիս կնիքները:

ԳԼՈՒԽ 8
ԲՆԱԿԻՅ-ՔԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆՉՎԱԾ ԱՌՆՈՐԱՅԻՆ ԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՇՎԱԳՐՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

81. Բնակիչ-բաժանորդներին հաշվարկային ամսում մատակարարված գազի քանակը որոշվում է վերջիններիս Պայմանագրում նշված առևտրային հաշվառքի սարքի գրանցած ցուցմունքների տարբերության միջոցով՝ բերված հաշվարկային ամսվա ժամանակահատվածի: Բնակիչ-բաժանորդներին մատակարարված գազի քանակը «Չափումների միասնականության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում կիրառվող չափումների կատարման մեթոդիկաներով ճշգրտման ենթակա չէ:

82. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին կամ հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Բնակիչ-բաժանորդներն իրավունք ունեն մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

83. Մատակարարը պարտավոր է.

1) մինչև յուրաքանչյուր ամսվա տասը, հանրապետական սփյուռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ մեկ անգամ, ժամը 17:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում, հայտարարել նախորդ հաշվարկային ամսում բնակիչ-բաժանորդներին մատակարարված գազի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղադրելու օրվա մասին.

2) մինչև յուրաքանչյուր ամսվա տասը Արցախի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրել տեղեկատվություն՝ նախորդ հաշվարկային ամսում բնակիչ-բաժանորդներին մատակարարված գազի քանակի և արժեքի մասին.

3) նախորդ հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի դիմաց բնակիչ-բաժանորդներին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում ապահովել հետևյալ տեղեկատվության առկայությունը. բաժանորդի անունը, ազգանունը, հասցեն, քարտի համարը, հաշվարկային ամիսը, առևտրային հաշվառքի սարքի նախորդ և վերջին ցուցմունքները, հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի քանակը (արտահայտված խորանարդ մետրերով), սակագինը և արժեքը (արտահայտված ՀՀ դրամով՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը), նախորդ տարվա նույն ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի քանակը (արտահայտված խորանարդ մետրերով) պարտքի մնացորդը հաշվարկային ամսվա սկզբին և վերջին (արտահայտված ՀՀ դրամով՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը) և վճարման ամսաթիվը.

4) բնակիչ-բաժանորդի գրավոր դիմումի դեպքում, դիմումը ստանալուն հաջորդող հաշվարկային ամսից սկսած՝ յուրաքանչյուր ամիս սույն կետի 2-րդ ենթակետում սահմանված ժամկետում, վերջինիս նախընտրած եղանակով (փոստով՝ գրավոր կամ էլեկտրոնային փոստով) ծանուցել նախորդ հաշվարկային ամսում մատակարարված գազի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործված բոլոր ցուցանիշների մասին՝ սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված ձևաչափով: Ծանուցումը փոստով առաքելու համար վճարում է բնակիչ-բաժանորդը, իսկ ծանուցումն էլեկտրոնային փոստով իրականացվում է անվճար: Փոստային առաքման վճարը ներառվում է հաշվարկային (վճարման) փաստաթղթում առանձին տողով և ավելացվում է ծախսված բնական գազի արժեքին.

5) իր վեբ-կայքի միջոցով հնարավորություն ընձեռել բաժանորդին՝ անվճար, էլեկտրոնային եղանակով ծանոթանալ սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությանը՝ առնվազն վերջին մեկ տարվա համար:

84. Բնակիչ-բաժանորդը նախորդ հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի արժեքի համար պարտավոր է վճարել սույն կանոնների 83-րդ կետում սահմանված կարգով և ժամկետներում՝ նախորդ հաշվարկային ամսում բնակիչ-բաժանորդներին մատակարարված (վերահաշվարկված) գազի քանակի և արժեքի մասին տեղեկատվության հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում:

85. Սույն կանոնների 84-րդ կետում սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը՝ առնվազն երեք օր առաջ հեռուստատեսությամբ կամ բնակիչ-բաժանորդներին հասու այլ ձևերով (հայտարարություն փակցնելով շքամուտքերում, փոստային բաժանմունքներում և այլն) զգուշացնելուց հետո: Զգուշացումը հեռուստատեսությամբ պետք է իրականացվի հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ մեկ անգամ, ժամը 17:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում: Մատակարարը բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը դադարեցնելուց անմիջապես առաջ պարտավոր է վերջինիս զգուշացնել:

86. Բնակիչ-բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ մարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո մատակարարը պարտավոր է բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը վերսկսել հնարավորինս կարճ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 36 ժամը: Գազամատակարարումը վերսկսելուց առաջ մատակարարը կարող է տեղում ստուգել բնակիչ-բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:

87. Մատակարարը չպետք է դադարեցնի բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս ներկայացրել է մատակարարի համար ընդունելի պայմաններով վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմել է պարտքի մարման ժամանակացույց: Եթե բնակիչ-բաժանորդը պարտքը չի մարում ըստ ժամանակացույցի, սպա մատակարարն իրավունք ունի դադարեցնել նրա գազամատակարարումը՝ սույն կանոնների 85-րդ կետով սահմանված կարգով նախազգուշացնելուց հետո:

88. Հաշվարկային (վճարման) փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին գրավոր ծանուցում է մյուս կողմին: Ծանուցումն ստանալու պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում կողմն անհամաձայնության դեպքում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Սխալի փաստը հաստատվելու դեպքում մատակարարը սխալ հաշվարկված բնական գազի արժեքը հաշվի է առնում (նվազեցնում կամ ավելացնում է) հաջորդ հաշվարկային ամսում բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Հաշվարկային (վճարման) փաստաթղթի վերաբերյալ տարաձայնությունների դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս վճարել է մատակարարված բնական գազի՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իր կողմից սպառված բնական գազի վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին:

89. Մատակարարն իրավունք չունի գազի մատակարարման համար բնակիչ-բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման այլ երաշխիքներ:

90. Սույն կանոնների 83-րդ, 84-րդ, 85-րդ, 86-րդ, 87-րդ, 88-րդ և 89-րդ կետերը հավասարապես տարածվում են մատակարարի և բնակիչ-բաժանորդի՝ ներտնային

գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման հետ կապված վճարման հարաբերությունների վրա:

Բ Ա Ժ Ի Ն IV

ՆՈՐ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻԱՑՈՒՄԸ ԳԱԶԱՍՍԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ

ԳԼՈՒԽ 9

ՆՈՐ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԳԱԶԱՍՍԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

91. Գազաֆիկացված բնակավայրերում դիմող անձի նոր գազասպառման համակարգի (բացառությամբ ավտոգազալիցքավորման ճնշակայանների և 100 խորանարդ մետր և ավելի ժամային սպառում ունեցող սպառողների գազասպառման համակարգերի) միացումը գազամատակարարման ցանցին իրականացնում է մատակարարը, իսկ միացման աշխատանքների իրականացման արդյունքում ստեղծված հիմնական միջոցները (գույքը) հանդիսանում են վերջինիս սեփականությունը:

92. Չգազաֆիկացված բնակավայրերում գտնվող գազասպառման համակարգերը, կամ համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանից դուրս գտնվող գազասպառման համակարգերը կամ ավտոգազալիցքավորման ճնշակայանների և 100 խորանարդ մետր և ավելի ժամային սպառում ունեցող սպառողների գազասպառման համակարգերը միացվում են գազամատակարարման ցանցին մատակարարի կողմից դիմող անձին տրված տեխնիկական պայմանների հիման վրա սույն կանոնների 11-րդ գլխում նշված ընթացակարգով, իսկ միացման աշխատանքների իրականացման արդյունքում ստեղծված հիմնական միջոցները (գույքը) հանդիսանում են դիմող անձի սեփականությունը:

93. Առանձին բնակավայրերի գազաֆիկացման գործընթացն իրականացվում է բնակավայրի՝ սահմանված կարգով մշակված ու հաստատված կառուցապատման գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման պայմաններին համապատասխան ճարտարապետահատակագծային առաջադրանք տվող իրավասու մարմնի դիմումի համաձայն՝ մատակարարի կողմից տրված տեխնիկական պայմանների հիման վրա՝ սույն կանոնների 12-րդ գլխում նշված ընթացակարգով:

94. Գազաֆիկացված բնակավայրերում գտնվող դիմող անձի նոր գազասպառման համակարգը (բացառությամբ ավտոգազալիցքավորման ճնշակայանների և 100 խորանարդ մետր և ավելի ժամային սպառում ունեցող սպառողների գազասպառման համակարգի) գազամատակարարման ցանցին միացնելու համար դիմող անձը սույն կանոնների 14-րդ գլխով սահմանված կարգով վճարում է մատակարարին միացման համար անհրաժեշտ աշխատանքներին համարժեք վճար (այսուհետ՝ Վճար), որը ձևակերպվում է որպես հետագայում սպառվելիք բնական գազի դիմաց կանխավճար և մարվում է սպառած բնական գազի արժեքից այն նվազեցնելու միջոցով՝ սույն կանոնների 14-րդ գլխով սահմանված կարգով: Եթե մատակարարը, ելնելով գազամատակարարման ցանցի հետագա հեռանկարային զարգացման անհրաժեշտությունից, նախատեսում է կառուցել դիմող անձի նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման համար անհրաժեշտ հարաչափերը գերազանցող գազամատակարարման ցանց, ապա այդ մասով մատակարարի կողմից կատարվելիք ծախսերը Վճարի հաշվարկում չեն ներառվում: Գազաֆիկացված բնակավայրի բազմաբնակարան շենքերում գտնվող բնակարանների և կազմակերպությունների գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման դեպքում Վճար չի գանձվում:

ԳԼՈՒԽ 10
ՆՈՐ ԳԱԶԱՍՊՈՒՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

95. Նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացվում է դիմող անձի դիմումի հիման վրա:

96. Նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման դիմումը պետք է պարունակի՝

1) ֆիզիկական անձանց դեպքում՝ դիմող անձի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթղթի տվյալները (անունը, ազգանունը, փաստաթղթի անվանումը, սերիան և համարը), գազասպառման համակարգի տեղակայման վայրը, դիմող անձի բնակության հասցեն (ծանուցման հասցեն), հեռախոսահամարը, դիմումով ներկայացվող պահանջը, դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի ներկայացման ամսաթիվը, դիմող անձի ստորագրությունը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ նաև հարկ վճարողի հաշվառման համարը.

2) իրավաբանական անձի դեպքում՝ դիմող անձի անվանումը, գտնվելու վայրը (ծանուցման հասցեն), իրավաբանական անձի ներկայացուցչի անունը, ազգանունը, գազասպառման համակարգի տեղակայման վայրը, հեռախոսահամարը, հարկ վճարողի հաշվառման համարը, դիմումով ներկայացվող պահանջը, դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի ներկայացման ամսաթիվը, դիմող անձի ներկայացուցչի ստորագրությունը:

97. Սույն կանոնների 95-րդ կետում նշված դիմումի հետ պետք է ներկայացվի՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավարի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճենը.

2) գազամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հաստատող (հավաստող) փաստաթղթեր, այդ թվում՝ իրավունքի պետական գրանցման վկայական կամ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների անհատական ակտեր կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր.

3) շինության էսքիզը կամ տարածքի հատակագիծը.

4) գազասարքավորումների վերաբերյալ տեղեկատվություն.

5) լիազորագիր, եթե դիմումը ներկայացվում է դիմող անձի կողմից լիազորված անձի միջոցով.

6) դիմող անձի, բացառությամբ գազաֆիկացված բազմաբնակարան շենքերում գտնվող բնակարանների և կազմակերպությունների նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար գազամատակարարման ցանցի ընդլայնման աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում՝ Վճարի խոշորացված նախահաշիվ կազմելու համար 10 000 ՀՀ դրամի (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) չափով վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը.

7) չգազաֆիկացված բնակավայրերում գտնվող գազասպառման համակարգերը կամ համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանից դուրս գտնվող գազասպառման համակարգերը, կամ ավտոգազալիցքավորման ճնշակայանների և 100 խորանարդ մետր և ավելի ժամային սպառում ունեցող սպառողների գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացնելու դեպքում՝ տեխնիկական պայմաններ

տրամադրելու համար 15 000 ՀՀ դրամի (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) չափով վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը.

8) բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների դեպքում՝ գազասպառման համակարգերի տեխնիկական պայմանների և նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար 6000 ՀՀ դրամի չափով վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը.

9) այլ սպառողի սեփականությունը հանդիսացող գազատարին միանալու դեպքում՝ սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը:

98. Մատակարարն իրավունք չունի դիմող անձից պահանջել ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն սույն կանոններով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով, միացման կամ մատակարարման պայմանագրերով:

99. Մատակարարը սույն կանոնների 95-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո՝ սույն կանոնների 100-րդ կետում սահմանված ժամկետներում՝

1) մշակում է տեխնիկական պայմանները՝ ըստ գազասպառման համակարգի առավելագույն սպառման ծավալների՝ ելնելով գազամատակարարման ցանցի թողունակության, գազամատակարարման հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և դիմող անձի նոր գազասպառման համակարգի միացման համար անհրաժեշտ՝ գազամատակարարման ցանցի ընդլայնման աշխատանքները նվազագույն ծախսումներով իրականացնելու պայմաններից: Տեխնիկական պայմանները համաձայնեցվում են դիմող անձի հետ: Առևտրային հաշվառքի սարքի (հանգույցի) տեղակայման վայրն ընտրվում է սույն կանոնների 24-րդ կետին համապատասխան: Առևտրային հաշվառքի սարքի տեղակայման վայրի կամ տեխնիկական պայմանների ապահովման համար հողատարածքի գնման, վարձակալության կամ հողատարածքից սահմանափակ օգտվելու իրավունք (սերվիտուտ) ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում համապատասխան ծախսերը կատարում է դիմող անձը՝ առանց փոխհատուցման պահանջի: Այն դեպքում, երբ որպես առևտրային հաշվառքի սարքի (հանգույցի) տեղակայման վայր ընտրվել է դիմող անձի տիրապետման ներքո գտնվող տարածքը, դիմող անձը պարտավոր է ապահովել մատակարարի ներկայացուցչի անխոչընդոտ մուտքը նշված տարածք.

2) դիմող անձին է ներկայացնում միացման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս ուղարկելով իր ստորագրությամբ միացման պայմանագիրը՝ երկու օրինակից՝ համաձայն N 1 հավելվածի:

100. Սույն կանոնների 95-րդ կետում նշված դիմումն ստանալու օրվանից մինչև միացման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 15 աշխատանքային օրը, եթե դիմող անձը բնակիչ կամ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է,

2) 20 աշխատանքային օրը, եթե դիմող անձը ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է,

3) 30 աշխատանքային օրը, եթե դիմող անձը նոր կառուցվող շենքի կամ թաղամասի կառուցապատող է:

101. Դիմող անձը մատակարարի կողմից ստորագրված միացման պայմանագիրն ստանալուց հետո վճարում է պայմանագրում ամրագրված Վճարի 80 տոկոսը և իր կողմից ստորագրված պայմանագրի մեկ օրինակն ու վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը ներկայացնում է մատակարարին: Դիմող անձի կողմից միացման պայմանագիրն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում դրա ստորագրված օրինակն ու Վճարի 80 տոկոսի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը մատակարարին

չներկայացնելու դեպքում պայմանագրի կնքման առաջարկությունը համարվում է անվավեր:

102. Մատակարարը կարող է մերժել սույն կանոնների 94-րդ կետում նշված դիմումը, եթե՝

1) դիմումը կամ դրան կցված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կանոնների 96-րդ և 97-րդ կետերի պահանջներին.

2) դիմող անձի նոր գազասպառման համակարգի միացումը գազամատակարարման ցանցին հակասում է Արցախի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերին, շինարարական նորմերին ու կանոններին, խախտում է այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

103. Սույն կանոնների 95-րդ կետում նշված դիմումի մերժման դեպքում մատակարարն այդ մասին 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմող անձին՝ նշելով մերժման պատճառները և հիմնավորումները:

104. Նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման պայմանագիրը և Վճարի 80 տոկոսի վճարման անդորրագրի պատճենը սույն կանոնների 101-րդ կետի համաձայն մատակարարին ներկայացման օրվանից մինչև դիմող անձին Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 30 աշխատանքային օրը, եթե դիմող անձը բնակիչ կամ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է.

2) 90 աշխատանքային օրը, եթե դիմող անձը ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է.

3) 120 աշխատանքային օրը, եթե դիմող անձը նոր կառուցվող բազմաբնակարան շենքի կամ թաղամասի կառուցապատող է: Մատակարարի և դիմող անձի փոխադարձ համաձայնությամբ միացման պայմանագրում կարող է սահմանվել դիմող անձին Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու այլ ժամկետ:

105. Սույն կանոնների 104-րդ կետում սահմանված ժամկետներում մատակարարը.

1) իրականացնում է նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման համար անհրաժեշտ աշխատանքները.

2) դիմող անձին է ներկայացնում Պայմանագիր կնքելու առաջարկություն:

106. Դիմող անձը, մատակարարից Պայմանագիր կնքելու առաջարկությունն ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում մատակարարին է ներկայացնում՝

1) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման վկայականի պատճենը.

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ լիազորված մարմնի կողմից տրված գազասպառման համակարգի գործարկման եզրակացության պատճենը:

107. Դիմող անձի կողմից սույն կանոնների 106-րդ կետում նշված փաստաթղթերը չներկայացնելու կամ դիմող անձի նոր գազասպառման համակարգի կառուցումը ավարտված չլինելու դեպքում մատակարարը Պայմանագիր չի կնքում և չի սկսում դիմող անձի գազամատակարարումը:

108. Մատակարարը դիմող անձից սույն կանոնների 106-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալուց և նրա հետ փաստացի ճշգրտված Վճարի վերջնահաշվարկը կատարելուց հետո, տեխնիկական կանոնակարգերի, շինարարական նորմերի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանող գազասպառման համակարգի առկայության դեպքում, տասն աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է

ներմիացման աշխատանքները, վերջինիս հետ կնքում Պայմանագիր և սկսում գազամատակարարումը:

109. Հանձնաժողովը, բաժանորդի և մատակարարի շահերի հավասարակշռման նպատակով, ինչպես նաև, ելնելով նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման համար անհրաժեշտ աշխատանքների ծավալներից, մատակարարի կամ դիմող անձի դիմումի հիման վրա առանձին դեպքերում կարող է ընդունել նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման անհատական որոշումներ:

110. Սույն գլխում նշված բոլոր ծանուցումները, առաջարկություններն ու համաձայնեցումները մատակարարն իրականացնում է գրավոր: Դրանք դիմող անձին կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք տվող իրավասու մարմին ներկայացնելու ծախսերը կրում է մատակարարը:

ԳԼՈՒԽ 11

ՉԳԱԶԱՖԻԿԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԿԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՀՄԱՆՑ ԴՈՒՐՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԿԱՍ ԱՎՏՈԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՃՆՇԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ 100 ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐ ԵՎ ԱՎԵԼԻ ԺՄՄՅՑԻՆ ՍՊԱՌՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԳԱԶԱՄՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

111. Չգազաֆիկացված բնակավայրերում գտնվող գազասպառման համակարգերը կամ համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանից դուրս գտնվող գազասպառման համակարգերը կամ ավտոգազալիցքավորման ճնշակայանների և 100 խորանարդ մետր և ավելի ժամային սպառում ունեցող սպառողների գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացնելու համար դիմող անձը մատակարարին է ներկայացնում սույն կանոնների 96-րդ և 97-րդ կետերի պահանջներին համապատասխանող դիմում և փաստաթղթեր՝ դիմումի մեջ կատարելով համապատասխան նշում տեխնիկական պայմաններ տրամադրելու վերաբերյալ:

112. Մատակարարը դիմող անձի՝ սույն կանոնների 95-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, մշակում և դիմող անձին է ներկայացնում վերջինիս նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման տեխնիկական պայմանները:

113. Տեխնիկական պայմանների գործողության ժամկետը սահմանվում է մեկ տարի, եթե դրանցում այլ ժամկետ նախատեսված չէ:

114. Գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար անհրաժեշտ աշխատանքներն իրականացվում են դիմող անձի միջոցների հաշվին՝ համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից: Գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքները կատարվում են մատակարարի հետ համաձայնեցված նախագծով՝ տեխնիկական կանոնակարգերի, շինարարական նորմերի ու կանոնների պահանջներին համապատասխան: Դիմող անձի պատվերով կառուցված գազատարի և գազամատակարարման ցանցի ներմիացման աշխատանքները պետք է կատարվեն մատակարարի վերահսկողությամբ և մասնակցությամբ:

115. Գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար անհրաժեշտ գազամատակարարման ցանցի ընդլայնման աշխատանքները սույն կանոններով սահմանված կարգով իրականացնելուց հետո, Պայմանագիր կնքելու նպատակով, դիմող անձը մատակարարին է ներկայացնում՝

1) շինարարությամբ ավարտված գազամատակարարվող տարածքի (շենքի, շինություն) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթղթերի, այդ թվում՝ իրավունքի պետական գրանցման վկայականի կամ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների անհատական ակտերի, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պատճենները,

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման վկայականի պատճենը,

3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ լիազորված մարմնի կողմից տրված գազասպառման համակարգի գործարկման եզրակացության պատճենը:

116. Մատակարարը՝ դիմող անձից սույն կանոնների 115-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալուց հետո, տեխնիկական կանոնակարգերի, շինարարական նորմերի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանող գազասպառման համակարգի առկայության դեպքում, տասն աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է ներմիացման աշխատանքները և դիմող անձի հետ կնքում Պայմանագիր:

ԳԼՈՒԽ 12

ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

117. Առանձին բնակավայրերի գազաֆիկացման նպատակով գազամատակարարման ցանցի նախագծման, կառուցման, փորձարկման և շահագործման համար անհրաժեշտ այլ աշխատանքներն իրականացվում են դիմող անձի միջոցների հաշվին՝ համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից: Գազամատակարարման ցանցի նախագծման, կառուցման, փորձարկման և շահագործման համար անհրաժեշտ այլ աշխատանքները կատարվում են մատակարարի հետ համաձայնեցված կարգով: Դիմող անձի պատվերով կառուցված գազատարի և գազամատակարարման ցանցի ներմիացման աշխատանքները պետք է կատարվեն մատակարարի վերահսկողությամբ և մասնակցությամբ:

118. Արցախի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան գազաֆիկացվող բնակավայրի կառուցված գազամատակարարման ցանցը հանդիսանում է դիմող անձի սեփականությունը:

119. Արցախի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան բնակավայրի գազաֆիկացման նպատակով կառուցված գազամատակարարման ցանցի սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքները կատարվում են մատակարարի կողմից գազամատակարարման ցանցի սեփականատիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա:

ԳԼՈՒԽ 13

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱԶԱՍՊՈՒՄՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

120. Բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների նոր գազասպառման համակարգերի նախագծման, կառուցման և կարգաբերման աշխատանքներն իրականացնում է մատակարարը՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված մեթոդիկայով որոշված գնով: Աշխատանքների արդյունքը մատակարարը հանձնում է դիմող անձին, իսկ դիմող անձը վճարում է այդ աշխատանքների արժեքը:

121. Բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների նոր գազասպառման համակարգերը նախագծվում, կառուցվում և կարգաբերվում են դիմող անձի դիմումի հիման վրա:

122. Մատակարարը դիմումն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, դիմող անձին է ներկայացնում բնակչի կամ բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության գազասպառման համակարգի նախագծման, կառուցման և կարգաբերման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս ուղարկելով իր կողմից ստորագրված պայմանագիրը՝ երկու օրինակից՝ համաձայն N 2 հավելվածի:

123. Դիմող անձը մատակարարի կողմից ստորագրված՝ սույն կանոնների 122-րդ կետում նշված պայմանագիրն ստանալուց հետո վճարում է գազասպառման համակարգի նախագծման, կառուցման և կարգաբերման վճարը և իր կողմից ստորագրված՝ սույն կանոնների 122-րդ կետում նշված պայմանագրի մեկ օրինակն ու վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը ներկայացնում է մատակարարին: Դիմող անձի կողմից պայմանագիրը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում դրա ստորագրված օրինակը ու գազասպառման համակարգի կառուցման և կարգաբերման համար կատարված վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը մատակարարին չներկայացնելու դեպքում պայմանագրի կնքման առաջարկը համարվում է անվավեր:

124. Դիմող անձի գազասպառման համակարգի նախագծման, կառուցման և կարգաբերման աշխատանքների արժեքը չի հանդիսանում սույն կանոնների 94-րդ կետում նշված Վճարի մաս:

ԳԼՈՒԽ 14

ՆՈՐ ԳԱԶԱՍՊԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԳԱԶԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ՎՃԱՐԸ

125. Վճարի մեծությունն ընդունվում է հավասար դիմող անձի նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքների, ներառյալ դրա տեխնիկական պայմանների մշակման, խոշորացված նախահաշվի կազմման, նախագծման, կառուցման և կարգաբերման, ինչպես նաև սույն կանոնների 25-րդ կետով նախատեսված դեպքերում առևտրային հաշվառքի սարքի ձեռքբերման և տեղակայման նպատակով մատակարարի կողմից դիմող անձի հետ համաձայնեցված աշխատանքների խոշորացված նախահաշվի արժեքին և ճշգրտվում է միացման պայմանագրով սահմանված կարգով: Վճարը չի ներառում գազասպառման համակարգի նախագծման, կառուցման և կարգաբերման ծախսերը:

126. Պայմանագիր կնքելու պահից մատակարարը դիմող անձից գանձած Վճարը ձևակերպում է որպես տվյալ միացման կետում սպառվելիք բնական գազի արժեքի դիմաց կանխավճար: Նոր կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման դեպքում Վճարի գումարը հավասարաչափ բաշխվում է միացման կետերի միջև և ձևակերպվում է յուրաքանչյուր միացման կետի համար Պայմանագիր կնքած անձի հաշվին՝ որպես բնական գազի արժեքի դիմաց կանխավճար:

127. Մատակարարը պարտավոր է իր պաշտոնական կայքում և բաժանորդների սպասարկման կետերում հրապարակել սույն կարգի 125-րդ կետում նշված աշխատանքների՝ գազամատակարարման ցանցի ընդլայնմանն ուղղված բոլոր նախահաշիվները և գազասպառման համակարգի կառուցման օրինակելի նախահաշիվները:

128. Վճարը պայմանագրի կնքման օրվանից հետո, մինչև նրա ամբողջական մարումը, յուրաքանչյուր ամիս նվազեցվում է բացառապես տվյալ սպառման կետում բաժանորդին մատակարարված բնական գազի արժեքից՝ հետևյալ բանաձևով՝

$$\text{ՆԳ} = \frac{\text{ԳՍ} \times \text{ՆՏ}}{100}$$

որտեղ՝

ՆԳ-ն նվազեցվող գումարն է,

ԳՍ-ն բաժանորդի կողմից տվյալ ամսում սպառած բնական գազի արժեքն է՝ հաշվարկված գործող սակագներով (առանց ավելացված արժեքի հարկի),

ՆՏ-ն i-րդ սպառողական խմբի համար մատակարարված բնական գազի արժեքից նվազեցվող գումարի տոկոսային մեծությունն է:

Բաժանորդին վերադարձվող գումարը կիրառվում է միայն ՆԳ մեծության դրական արժեքի դեպքում:

129. Սույն կանոնների 128-րդ կետում նշված ՆՏ մեծությունը, ըստ սպառողների խմբերի, հրապարակվում է Ընկերության պաշտոնական կայքում և բաժանորդների սպասարկման կետերում, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՆՏ}_i = \frac{U_i \times K_i - \text{Գ} \times \Phi}{U_i \times K_i} \times 100,$$

որտեղ՝

Ս_i-ն՝ i-րդ սպառողական խմբի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագինն է կամ սակագնի հաշվարկման բանաձևը՝ առանց ավելացված արժեքի հարկի,

Κ_i-ն՝ i-րդ սպառողական խմբի համար գազի համակարգի կորուստները, սեփական կարիքները, ինչպես նաև մեկ բաժանորդի ավելացման հետ կապված մատակարարի կողմից կատարվող լրացուցիչ ծախսերը հաշվի առնող գործակիցն է, որի մեծությունը ամսական մինչև 10 000 խորանարդ մետր սպառում ունեցող սպառողների համար սահմանվում է 0,72, իսկ ամսական 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող սպառողների համար՝ 0,93,

Գ-ն՝ մատակարարի կողմից Արցախի Հանրապետության սահմանին ձեռք բերվող 1000 խորանարդ մետր բնական գազի գնման գինն է՝ արտարժույթով,

Φ-ն՝ հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մատակարարի կողմից գազի գնման տարադրամի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է:

130. Վճարի արդյունքում ձևավորված կանխավճարն այլ եղանակով վերադարձման կամ փոխհատուցման ենթակա չէ, այդ թվում՝ նույն բաժանորդի այլ միացման կետում մատակարարված բնական գազի արժեքից նվազեցման միջոցով:

131. Բազմաբնակարան շենքերի կամ առանձին թաղամասերի կառուցապատողների կողմից բնակարանները կամ բնակելի տներն այլ անձանց օտարելու դեպքում կառուցապատողների վճարած Վճարի գումարը ձևակերպվում է բնակարանը կամ բնակելի տունը կառուցապատողից ձեռք բերած անձի հաշվին, եթե վերջինս օրենքով սահմանված կարգով կնքել է կառուցապատողի հետ Վճարի համապատասխան մասի նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագիր և սահմանված կարգով ծանուցել է դրա մասին մատակարարին՝ ներկայացնելով այդ պայմանագրի մեկ օրինակը:

ԳԼՈՒԽ 15

ԳԱԶԱՏԻԿԱՑՈՒՄ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՂԻՄՆԵՐ ՏՎՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՄԲ

132. Ճարտարապետահատակագծային առաջադրանք ձևավորելու փուլում առաջադրանք տվող իրավասու մարմինը գազաֆիկացման տեխնիկական պայմաններ ստանալու նպատակով դիմում է մատակարարին՝ ներկայացնելով կառուցապատվող հողամասի հատակագիծն ու նախագծվող օբյեկտի չափորոշիչները (գործառնական նշանակությունը, հարկայնությունը, անհրաժեշտ գազասպառման ռեժիմը)՝

133. Ճարտարապետահատակագծային առաջադրանք տվող իրավասու մարմնի դիմումն ստանալուց հետո մատակարարը մշակում և ներկայացնում է գազաֆիկացման տեխնիկական պայմանները՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար հինգ աշխատանքային օրվա ընթացքում, III ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, IV և V ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

134. Միացման պայմանագիր կնքելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանքը ստացած կառուցապատողը մատակարարի կողմից սահմանված ձևով դիմումի հետ մեկտեղ մատակարարին ներկայացնում է ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ ստացված գազաֆիկացման տեխնիկական պայմանները՝ Կառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացվում է սույն կանոնների 9-րդ գլխով սահմանված կարգով՝

ԳԼՈՒԽ 16

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

135. Բաժանորդը մատակարարին կարող է դիմում (բողոք, հարցադրում) ներկայացնել գրավոր, բանավոր (այդ թվում՝ հեռախոսազանգի միջոցով) և էլեկտրոնային փոստի միջոցով, եթե սույն կանոններով առանձին դեպքերի համար այլ բան սահմանված չէ: Մատակարարը պարտավոր է ապահովել շուրջօրյա հեռախոսակապ բաժանորդների արագ արձագանքման խնդիրների լուծման, ինչպես նաև ըստ հարցադրման բնույթի ուղղորդող տեղեկատվություն տրամադրելու համար:

136. Բաժանորդի բանավոր դիմումին մատակարարի կողմից տրվում է բանավոր պատասխան, գրավոր դիմումին՝ գրավոր պատասխան, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

137. Մատակարարը բաժանորդի դիմումին պարտավոր է պատասխանել այն ստանալու պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե սույն կանոններով առանձին դեպքերի համար այլ ժամկետ սահմանված չէ:

138. Մատակարարը պարտավոր է սպառիչ պատասխան տալ բաժանորդի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով բաժանորդի դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն բաժանորդին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 17
ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՈՒՅԺԵՐԸ ՍՈՒՅՆ
ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱՆՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

139. Մատակարարը պարտավոր է բաժանորդին վճարել տույժ՝ ծախսված բնական գազի միջին ամսական արժեքի 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 2500 ՀՀ դրամը, այն դեպքերում, երբ խախտել է՝

1) բաժանորդի գազամատակարարման ընդհատումների վերաբերյալ սույն կանոնների 4-րդ կետով սահմանված պահանջները.

2) բաժանորդի պահանջով գազամատակարարման դադարեցման և վերականգնման սույն կանոնների 20-րդ կետով սահմանված ժամկետները.

3) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի արտահերթ ստուգաչափման սույն կանոնների 30-րդ կետով սահմանված ժամկետները.

4) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի արտահերթ ստուգաչափման սույն կանոնների 31-րդ կետով սահմանված կարգը.

5) բնական գազի վերահաշվարկի վերաբերյալ սույն կանոնների 33-րդ կետով սահմանված ժամկետները.

6) բաժանորդի գազամատակարարումը դադարեցնելուց հետո այն վերականգնելու սույն կանոնների 65-րդ և 86-րդ կետերով սահմանված ժամկետները.

7) բաժանորդի բողոքին պատասխանելու սույն կանոնների 137-րդ կետով սահմանված ժամկետը:

140. Բաժանորդի կողմից ծախսված բնական գազի միջին ամսական արժեքն ընդունվում է տվյալ տարում բաժանորդի ծախսած բնական գազի արժեքի և տվյալ տարում ծախս ունեցած ամիսների քանակի քանորդին հավասար:

141. Հաշվարկված տույժը մատակարարը հաշվի է առնում բաժանորդին ընթացիկ ամսում ծախսած բնական գազի համար ներկայացվելիք վճարման հաշվում: Հաշվարկված տույժը վճարման հաշվում նշվում է առանձին տողով և նվազեցվում է ծախսված բնական գազի արժեքից:

142. Մատակարարը սույն կանոնների 140-րդ կետում նշված խախտումների համար տույժի չի ենթարկվում, եթե դա ֆորս մաժորի հետևանք է:

ԳԼՈՒԽ 18
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԺՆԵՐ

143. Մատակարարը պարտավոր է 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականը ապահովել սույն կանոնների 24-րդ կետով նախատեսված գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերի տեղակայումը սեփականության տարածքից (բնակարանից) դուրս:

144. Սույն կանոնների 29-րդ կետի 3-րդ ենթակետը կիրառվում է.

1) 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև G6 (ներառյալ) տիպի բնական գազի մեկ առևտրային հաշվառքի սարք ունեցող բաժանորդների առևտրային հաշվառքի սարքի փոխարինումը կամ ստուգաչափման նպատակով դրանց ապահավաքակցումը.

2) 2019 թվականի դեկտեմբերի 1-ից սույն կետի 1-ին և 3-րդ ենթակետերում չնշված տիպերի բնական գազի առևտրային հաշվառքի սարք ունեցող բաժանորդների առևտրային հաշվառքի սարքի փոխարինման կամ ստուգաչափման նպատակով դրանց ապահավաքակցման դեպքերում.

3) 2020 թվականի հուլիսի 1-ից RG տիպի բնական գազի առևտրային հաշվառքի սարք ունեցող բաժանորդների առևտրային հաշվառքի սարքի փոխարինման կամ ստուգաչափման նպատակով դրանց ապահովաքակցման դեպքերում:

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2018 թվականի մայիսի 18-ի N 23-Ն որոշմամբ սահմանված
բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ր Ն __

**ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԻ ԿԱՄ ԲԱԺԱՆՈՐԴԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՑՎՈՂ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ ԳԱԶԱՄՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ**

_____ «__» _____ 20__ թվական
(կերման վայրը)

Նոր բաժանորդը կամ կառուցապատողը, կամ գազասպառման համակարգը
վերակառուցող բաժանորդը (այսուհետ՝ Պատվիրատու),

_____ ,
(անունը, ազգանունը, հայրանունը կամ կազմակերպության անվանումը)

ի դեմս _____ ,
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է _____ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և Մատակարարը՝ _____ ,
(կազմակերպության անվանումը)

_____ ,
(մասնաճյուղի անվանումը)

ի դեմս _____ ,
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է _____ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն՝ Մատակարարը Պատվիրատուի նոր գազասպառման համակարգը միացնում է գազամատակարարման ցանցին, իսկ Պատվիրատուն վճարում է միացման համար անհրաժեշտ աշխատանքներին համարժեք վճար, որը ձևակերպվում է որպես հետագայում սպառվելիք բնական գազի դիմաց կանխավճար և մարվում է սպառած բնական գազի արժեքից այն նվազեցնելու միջոցով՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի N 12Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 23-Ն որոշման 1-ին կետով սահմանված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ ԳՄՕԿ) 4-րդ գլխով սահմանված կարգով:

2. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Մատակարարը պարտավոր է՝

1) Պատվիրատուի դիմումի հիման վրա, ելնելով գազամատակարարման ցանցի թողունակության առավելագույն օգտագործման հնարավորությունից ու գազամատակարարման հասանելիությունից, նրա գազասպառման համակարգը միացնել գազամատակարարման ցանցին՝ ապահովելով դիմումում նշված տեխնիկական հարաչափերով գազամատակարարման և հաշվառման հնարավորությունը:

2) ավարտել Պատվիրատուի գազասպառման համակարգի միացումը գազամատակարարման ցանցին և Պատվիրատուին ներկայացնել գազամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ _____ :

(օրը, ամիսը, տարին)

3. Պատվիրատուն պարտավոր է՝

1) իր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար վճարել կանխավճարը _____ ՀՀ դրամ՝ սույն պայմանագրի 3-րդ գլխում սահմանված կարգով:

2) Մատակարարին գրավոր տեղեկացնել ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ միացման կամ կանխավճարի վճարման ժամկետի վրա:

3) բազմաբնակարան շենքում չգտնվող կազմակերպությունների դեպքում գազասպառման համակարգի շինհավաքակցման աշխատանքները սահմանված կարգով ավարտել սույն պայմանագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ժամկետից հինգ օր առաջ:

3. ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ, ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Պատվիրատուի գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար անհրաժեշտ աշխատանքների արժեքը որոշվում է Մատակարարի կողմից կազմված և սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ աշխատանքների խոշորացված նախահաշվի հիման վրա: Սույն պայմանագիրը կնքելու հետ մեկտեղ Պատվիրատուն Մատակարարին է ներկայացնում աշխատանքների խոշորացված նախահաշվի հիման վրա որոշված կանխավճարի գումարի 80 տոկոսի վճարումը հավաստող փաստաթուղթը:

5. Կանխավճարի չափը, Պատվիրատուի նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար անհրաժեշտ աշխատանքների ավարտից երեք աշխատանքային օրվա ընթացքում, ենթակա է ճշգրտման՝ ելնելով Պատվիրատուի նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար անհրաժեշտ փաստացի կատարված աշխատանքների արժեքից: Եթե ճշգրտված կանխավճարի չափը տարբերվում է խոշորացված նախահաշվով որոշված

կանխավճարի չափից, Կողմերը պարտավոր են երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարել փոխադարձ հաշվարկներ:

6. Պատվիրատուի կողմից վճարված կանխավճարը մարվում է բացառապես ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

7. Բազմաբնակարան շենքերի կամ առանձին թաղամասերի կառուցապատողների կողմից կատարված կանխավճարը հավասարաչափ բաշխվում է միացման կետերի միջև և ձևակերպվում յուրաքանչյուր միացման կետի համար գազամատակարարման Պայմանագրի կնքած անձի հաշվին՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Արցախի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

9. Սույն պայմանագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետի խախտման դեպքում Մատակարարը Պատվիրատուին վճարում է տույժ՝ օրական սույն պայմանագրի 4-րդ կետում նշված կանխավճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան կանխավճարը:

10. Սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի խախտման դեպքում Պատվիրատուն Մատակարարին վճարում է տույժ՝ օրական սույն պայմանագրի 4-րդ կետում նշված կանխավճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան կանխավճարը:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

11. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և մինևսույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնիկական աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

12. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

13. Մատակարարն ազատվում է սույն պայմանագրի 4-րդ գլխով սահմանված պատասխանատվությունից, եթե պարտավորությունները չկատարելը պայմանավորված է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, կամ այլ անձանց կողմից Մատակարարին իրավունքների, թույլտվությունների, եզրակացությունների կամ այլ փաստաթղթերի տրամադրմամբ, որոնց արդյունքում անհնար է դարձել գազասպառման համակարգի՝ սույն պայմանագրում սահմանված ժամկետում գազամատակարարման

ցանցին միացումը: Նման հանգամանքներ ի հայտ գալու դեպքում Մատակարարը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում տեղյակ պահել պատվիրատուին և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն իր պարտավորությունների հետագա պատշաճ կատարումը ողջամիտ ժամկետներում ապահովելու նպատակով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԼՐԱՑՆՈՒՄ ԵՆ ԿՈՂՄԵՐԸ)

14. Սույն գլխում Կողմերի սահմանած այլ պայմանները չեն կարող հակասել սույն պայմանագրին, ԳՄՕԿ-ին և այլ իրավական ակտերին:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

15. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտը:

17. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական յուրաքանչյուր կողմի համար:

18. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

10. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մատակարար՝
Գտնվելու վայրը _____
Հեռախոս _____
Ֆաքս _____
Էլ. փոստ _____
Հ/հ _____
Բանկ _____
Գործունեության լիցենզիա N _____
Ղեկավար _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Պատվիրատու՝
Բնակության
վայրը _____
Ծանուցման
հասցեն _____
Անձնագիր _____
Գտնվելու վայրը _____
Հեռախոս _____
Ֆաքս _____
Էլ. փոստ _____
ՀՎՀՀ _____
Հ/հ _____
Բանկ _____
Ղեկավար (ֆիզիկական անձ) _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2018 թվականի մայիսի 18-ի N 23-Ն որոշմամբ սահմանված
բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Բ Ն

**ԲՆԱԿՉԻ ԿԱՍ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ**

«___» _____ 20 թվական

_____ (կնքման վայրը)

_____ (թաղաքացու անունը, ազգանունը և բնակության վայրը կամ կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը (այսուհետ՝ Պատվիրատու)),

ի դեմս _____

_____ (պաշտոնը, անունը, ազգանունը)

մի կողմից, ղեկավարվելով Արցախի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, և _____

_____ (մատակարար ընկերության և նրա մասնաճյուղի անվանումը)

այսուհետ՝ Մատակարար, ի դեմս _____

_____ (պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Արցախի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն՝ Պատվիրատուն պատվիրում է, իսկ Մատակարարն ապահովում է հետևյալ ծառայությունների մատուցումը.

1) Պատվիրատուի նոր գազասպառման համակարգի (այդ թվում՝ ծխատարների և օդատարների) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, նախագծի համաձայնեցում իրավասու մարմինների և պատվիրատուի հետ.

2) Պատվիրատուի նոր գազասպառման համակարգի բոլոր շինհավաքակցման աշխատանքների կատարում՝ ըստ համաձայնեցված նախագծի, միացում բնական գազի բաշխիչ ցանցին (հաշվառքի սարքին), Պատվիրատուի տրամադրած գազօգտագործող սարքավորման միացում գազասպառման համակարգին.

3) ներտնային գազասպառման համակարգի ստուգումների և փորձարկումների իրականացում, գազօգտագործող սարքավորման կարգաբերում, սահմանված կարգով ներտնային գազասպառման համակարգի շահագործման ընդունման ակտի կազմում.

4) ներտնային գազասպառման համակարգի թողարկում և գազամատակարարման պայմանագրի կնքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Մատակարարը պարտավորվում է՝

1) ապահովել սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցումը սույն պայմանագրով սահմանված պայմաններով:

2) ապահովել նոր գազասպառման համակարգի համապատասխանությունը Արցախի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

3. Պատվիրատուն պարտավորվում է՝

1) թույլատրել Մատակարարի ներկայացուցիչների և լիազոր անձանց մուտքն իր տիրապետման տակ գտնվող տարածք՝ սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար:

2) նոր գազասպառման համակարգի շինհավաքակցման աշխատանքների ընթացքում Մատակարարին տրամադրել նախագծով նախատեսված գազօգտագործող սարքավորումը:

3) պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով կատարել վճարումներ շինհավաքակցման աշխատանքների իրականացման համար:

3. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Պայմանագրի 1-ին կետով նախատեսված ծառայությունների մատուցման համար (բացառությամբ պայմանագրի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ծառայության), պայմանագրի կնքման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն նախապես վճարում է Մատակարարին _____ ՀՀ դրամ:

5. Շինհավաքակցման աշխատանքներն ավարտելուց հետո Պատվիրատուի և Մատակարարի միջև կազմվում է կատարողական ակտ, որում նշվում է փաստացի կատարված աշխատանքների ծավալը: Կողմերը պարտավորվում են կատարողական ակտը կազմելու օրվանից հինգ օրվա ընթացքում կատարել փոխադարձ հաշվարկներ:

4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ՄԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ԿՈՂՄԵՐԸ)

6. Սույն գլխում Կողմերի սահմանած այլ պայմանները չեն կարող հակասել սույն պայմանագրին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի N 12Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 23-Ն որոշման 1-ին կետով սահմանված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններին (այսուհետ՝ ԳՄՕԿ) և այլ իրավական ակտերին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7. Սույն պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում Արցախի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՄ ՄԱԺՈՐ)

8. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և մինևույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

9. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

7. ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

10. Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 20____ թվականի _____-ը:

12. Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

13. Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից՝ մեկական յուրաքանչյուր Կողմի համար:

9. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մատակարար՝	Պատվիրատու՝
Գտնվելու վայրը _____	Բնակության վայրը _____
Հեռախոս _____	Ծանուցման հասցեն _____
Ֆաքս _____	Անձնագիր _____
Էլ. փոստ _____	Գտնվելու վայրը _____
Հ/հ _____	Հեռախոս _____
Բանկ _____	Ֆաքս _____
Գործունեության լիցենզիա N _____	Էլ. փոստ _____
Ղեկավար _____	ՀՎՀՀ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հ/հ

Բանկ

Ղեկավար (ֆիզիկական անձ)

(ստորագրություն, անուն, ազգանուն)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության արդարադատության
նախարարության կողմից 2018 թվականի հունիսի 1-ին
պետական գրանցման համարը 3031841

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մայիսի 2018 թվականի

N 24-Ն

ք. Ստեփանակերտ

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ (ՄԱՏԱԿԱՐԱՐ-ԲԱԺԱՆՈՐԴ (ԲՆԱԿԻՉ))
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի ԹԻՎ 29Ն
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «ը» կետը և «Իրավական ակտերի
մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է.

1. Սահմանել բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ
(բնակիչ)) պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի
մեջ մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը վերակնքել բնակիչ-
բաժանորդների հետ կնքված գազամատակարարման պայմանագրերը:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 4-ի «Կենցաղային սպառման
համար բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (բնակիչ))
պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 29Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2018 թվականի մայիսի 18-ի N 24-Ն որոշման

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ (ՄԱՏԱԿԱՐԱՐ-ԲԱԺԱՆՈՐԴ (ԲՆԱԿԻՉ))

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ն _____

_____ «__» _____ 20__ թ.
(պայմանագրի կնքման վայրը)

Մատակարարը՝ _____
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

_____ ,
(մասնաճյուղի անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս _____ ,
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է _____ հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Բաժանորդը՝ _____ ,
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____ ,
(ներտնային գազապատման համակարգի գտնվելու վայրը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.

1) **Հանձնաժողով**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով:

2) **ԳՄՕԿ**՝ Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի N 12Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 23-Ն որոշման 1-ին կետով սահմանված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ.

3) **Հաշվարկային ամիս**՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին և ավարտվում է հաջորդ օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել անհրաժեշտ քանակի բնական գազ, իսկ Բաժանորդը՝ վճարել մատակարարված բնական գազի դիմաց:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Արցախի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

4. Մատակարարը պարտավոր է.

1) ապահովել Բաժանորդի հուսալի գազամատակարարումը՝ բնակչությանը մատակարարվող բնական գազին ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխանող բնական գազով.

2) առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումը, հերթական կամ արտահերթ ստուգաչափումն իրականացնել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

3) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխան տալ Բաժանորդի դիմումին (բողոք, հարցադրում)՝ հանգամանորեն ներկայացնելով Բաժանորդի դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն Բաժանորդին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ.

4) Բաժանորդի գազամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերսկսումը, ինչպես նաև այդ մասին Բաժանորդի նախագրուշացումն իրականացնել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

5) կազմել և Բաժանորդին ներկայացնել մատակարարված գազի համար վճարման փաստաթղթերը՝ սույն պայմանագրի և ԳՄՕԿ-ի համաձայն.

6) Բաժանորդի կողմից վճարման փաստաթղթում վճարի հաշվարկի ճշտությանը կասկածելու դեպքում վերջինիս պահանջով ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետում պարզաբանել բնական գազի ծախսի և արժեքի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում ԳՄՕԿ-ով սահմանված կարգով կատարել ուղղում, չդադարեցնել Բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս վճարել է գազի՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իր կողմից սպառված բնական գազի վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին.

7) ունենալ մշտական գործող հեռախոսակապով շուրջօրյա վթարային-կարգավարական ծառայություն, որի հեռախոսահամարի մասին տեղեկացնել զանգվածային լրատվամիջոցներով՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

8) ապահովել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի տեսանելիությունը.

9) անձամբ կամ իր հանձնարարությամբ՝ սպասարկող կազմակերպության միջոցով, Բաժանորդին մատուցել ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ՝ համաձայն ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին համաձայնագրի (հավելված N 2).

10) գազասպառման համակարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Բաժանորդի դիմումը քննարկել և փոփոխությունները կատարել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

11) Բաժանորդի դիմումի հիման վրա կնքել գազամատակարարման ցանցին միացված, սակայն օգտագործման մեջ չգտնվող գազօգտագործող սարքավորման գազի մուտքային գծերի փականները և դրա վերաբերյալ կազմել համապատասխան ակտ: Կնքված գազօգտագործող սարքավորումը համարվում է աշխատանքի մեջ չգտնվող:

5. Մատակարարն իրավունք ունի կնքել առևտրային հաշվառքի սարքը, ինչպես նաև կնքել դրա արկղը:

6. Բաժանորդը պարտավոր է.

1) վճարել մատակարարված (վերահաշվարկված) գազի և ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման մատուցված ծառայությունների դիմաց՝ սույն պայմանագրով և ԳՄՕԿ-ով սահմանված կարգով.

2) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում հայտնել Մատակարարին.

3) գազօգտագործող սարքավորման փոխարինման կամ նոր սարքերի հավաքակցման կամ գազասպառման համակարգում այլ փոփոխություններ կատարելու համար գրավոր դիմել Մատակարարին՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկատվություն այդ փոփոխությունների մասին.

4) չկատարել ինքնակամ միացումներ գազամատակարարման և ներտնային գազասպառման համակարգերին.

5) գազասպառման համակարգում վթարի կամ վթարային իրավիճակների, կամ անսարքության, ինչպես նաև գազի արտահոսք հայտնաբերելու դեպքերում անմիջապես ընդհատել գազի սպառումը, փակել գազասպառման համակարգի և գազօգտագործող բոլոր սարքավորումների փականները, օդափոխել շինությունը, չօգտվել բաց կրակից, չմիացնել և չանջատել էլեկտրասարքեր և այդ մասին անհապաղ հայտնել Մատակարարին.

6) իր սեփականությունը հանդիսացող բնակարանը վաճառելու (կամ այլ ձևով օտարելու, որը հանգեցնում է բնակարանի սեփականատիրոջ փոփոխության) դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, պայմանագիրը լուծելու և բնակարանի գազամատակարարումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Բաժանորդին.

7) ապահովել այրվող գազերի ազդանշանային սարքի ամբողջականությունը, չանջատել այն էլեկտրասնուցումից, վնասվածքի դեպքում անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

7. Բաժանորդն իրավունք ունի՝

1) պահանջել, որ Մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ դրա ապահովաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

2) կնքել առևտրային հաշվառքի սարքը, ինչպես նաև դրա արկղը.

3) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

4. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԿԵՏԸ

8. Սույն պայմանագրի N 1 հավելվածով ամրագրված առևտրային հաշվառքի սարքի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ սպասարկման, հերթական ստուգաչափման և նորոգման) ծախսերը՝ անկախ դրա պատկանելությունից կրում է Մատակարարը, բացառությամբ առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման և նորոգման ծախսերի, որոնք իրականացվում են ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

9. Մատակարարի սեփականությունը հանդիսացող (տնօրինման տակ գտնվող) գազամատակարարման համակարգի և Բաժանորդի սեփականությունը հանդիսացող (տնօրինման տակ գտնվող) ներտնային գազասպառման համակարգի սահմանազատման կետը առևտրային հաշվառքի սարքի էլքն է (բկանցքը):

5. ՄՍՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

10. Բաժանորդին Հաշվարկային ամսում մատակարարված բնական գազի քանակը որոշվում է սույն պայմանագրի առևտրային հաշվառքի սարքի գրանցած ցուցմունքների տարբերության միջոցով՝ բերված Հաշվարկային ամսվա ժամանակահատվածի: Բաժանորդին մատակարարված գազի քանակը «Չափումների միասնականության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պետական չափազիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում կիրառվող չափումների կատարման մեթոդիկաներով ճշգրտման ենթակա չէ:

11. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետներում:

12. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է Բաժանորդի ծախսած գազի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

13. Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարաձայնությունները լուծվում են ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված գազի արժեքի՝ Բաժանորդի կողմից չվիճարկվող մասի վճարման դեպքում Բաժանորդի գազամատակարարումը չի դադարեցվում՝ մինչև վեճի վերջնական լուծումը:

6. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Մատակարարվող բնական գազի սակագինը, ինչպես նաև Մատակարարի կողմից բնակչության ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության վճարը սահմանում է Հանձնաժողովը, որի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

15. Մատակարարը ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետում Արցախի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրում է տեղեկատվություն՝ Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված գազի քանակի և արժեքի մասին:

16. Բաժանորդը Հաշվարկային ամսվա համար վճարում է սույն պայմանագրի 15-րդ կետում նշված տեղեկատվության հրապարակումից հետո՝ ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետում:

17. ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում Մատակարարը ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է Բաժանորդին վճարման և վճարումը չկատարելու դեպքում գազամատակարարման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետում Բաժանորդը վճարում չի կատարում, ապա Մատակարարն իրավունք ունի դադարեցնել գազամատակարարումը՝ դադարեցումից անմիջապես առաջ զգուշացնելով Բաժանորդին: Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին Մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո Մատակարարը պարտավոր է Բաժանորդի գազամատակարարումը վերսկսել ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետում: Գազամատակարարումը վերսկսելուց առաջ Մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել Բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:

18. Մատակարարն իրավունք չունի գազի մատակարարման համար Բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:

19. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկված գազի արժեքը, տույժերը (հաշվարկված լինելու դեպքում) վճարվում են ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

20. Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման մատուցված ծառայությունների համար վճարումներն իրականացվում են ըստ ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին համաձայնագրի (հավելված N 2):

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

21. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, ԳՄՕԿ-ով և Արցախի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

8. ԳԱԶԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

22. Գազամատակարարման ընդհատման կամ դադարեցման դեպքերը, կարգը և ժամկետները սահմանվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով:

9. ՖՈՐՄ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

23. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և մինչև սույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաքթեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, Արցախի Հանրապետություն բնական գազի ներկրման ընդհատումները: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

24. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

25. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

26. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

27. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

28. Հանձնաժողովի կողմից բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ, կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

29. Սույն պայմանագիրը կարող է լուծվել.

1) Կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) Բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և մատակարարված (վերահաշվարկված) բնական գազի և մատուցված տեխնիկական սպասարկման ծառայության համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Արցախի Հանրապետության օրենքներով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

30. Սույն պայմանագիրը մատակարարի կողմից միակողմանի կարող է լուծվել Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 6-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

12. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

31. Կողմերը պարտավոր են միմյանց ուղարկվող գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԳՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

32. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց նոր ծանուցման հասցեի վերաբերյալ:

33. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

34. Սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածներն են՝

1) Առևտրային հաշվառքի սարքի մասին N 1 հավելվածը.

2) Ներտնային զազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին համաձայնագրի մասին N 2 հավելվածը:

Մատակարար՝

Բաժանորդ՝

(պաշտոնատար անձի անունը, ազգանունը)

(անունը, հայրանունը, ազգանունը)

(գտնվելու վայրը)

(բնակության վայրը)

(ծանուցման վայրի հասցեն)	(ծանուցման վայրի հասցեն)
(Հ/Հ)	(անձնագրի տվյալները)
(Էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը)	(Էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը)
(ստորագրությունը) (ստորագրությունը)	

Կ.Տ.

Հավելված N 1
 Բնական գազի մատակարարման
 (Մատակարար-Բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՄԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալները

N	Անվանումը	Մակնիշը	Գործարանային N	Տեղադրման վայրը	Տեղադրման ժամանակը
1.					
2.					
3.					
4.					

Հավելված N 2
 Բնական գազի մատակարարման
 (Մատակարար-Բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր
ՆԵՐՏՆԱՅԻՆ ԳԱԶԱՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատուցել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն, իսկ Բաժանորդը՝ վճարել մատուցված ծառայության դիմաց:
2. Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցումը ներառում է՝
 - 1) գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների արտաքին զննումը, զոդակարերի, պարուրակային միացումների կիպության ստուգումը, իսկ գազի արտահոսքի առկայության դեպքում՝ դրա վերացումը.

2) գազօգտագործող սարքավորումների ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման, օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի համար նախատեսված բացվածքների զննումը, ծխաօդատար ուղիներում քարշի ստուգումը, որի բացակայության (խաթարված լինելու) դեպքում՝ ծխաօդատար ուղիների մաքրումը (ծխաօդատարի մաքրումն ընդգրկում է այն բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ է կատարել ծխաօդատարի քարշն ապահովելու համար, այն է՝ մաքրել ծխաօդատարը մեխանիկական եղանակով (ծանրոցի օգնությամբ), ինչպես նաև ցանկացած արգելքի վերացումը, բացառությամբ այն դեպքերի, որոնք կապված են ծխաօդատարի կառուցվածքային ամբողջականության խաթարման հետ)։

3) գազօգտագործող սարքավորումների աշխատանքի ստուգումը՝ գործարկված վիճակում, անհրաժեշտության դեպքում՝ բաց այրման խցով գազօգտագործող սարքավորումների այրման պրոցեսի կարգավորումը։

4) գազասպառման համակարգի անվտանգ օգտագործման վերաբերյալ սպասարկման պահին տարածքում ներկա գտնվող Բաժանորդի կամ նրա ներկայացուցիչների հրահանգավորումը։

5) այրվող գազերի ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրի աշխատունակության ստուգումը։

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Բաժանորդը պարտավոր է՝

1) օգտագործել բացառապես գործարանային արտադրության գազօգտագործող սարքավորումներ, օդափոխության նպատակով նախատեսված ուղիները չօգտագործել որպես ծխատար, ծխաօդատար ուղիներում քարշի բացակայության (խաթարված լինելու) դեպքում չօգտվել գազօգտագործող սարքավորումներից, պահպանել կենցաղում բնական գազից օգտվելու անվտանգության պահանջները։

2) սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում ու կարգով վճարել Մատակարարի կողմից մատուցած ծառայության համար, բացառությամբ սույն համաձայնագրի 7-րդ կետով նախատեսված դեպքի։

3) գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման նպատակով չխոչընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացնում է իր լիազորությունները հավաստող ծառայողական վկայական՝ լուսանկարով և հայտնում է Բաժանորդի քարտի համարը։

4) ապահովել իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարմանը։

4. Մատակարարը պարտավոր է՝

1) անձամբ կամ այլ կազմակերպության միջոցով տարեկան առնվազն երկու անգամ Բաժանորդին մատուցել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն։

2) սույն համաձայնագրի 2-րդ կետում նշված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացնել առնվազն մեկ անգամ՝ հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում (1-ին հաշվարկային կիսամյակ) և առնվազն մեկ անգամ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում (2-րդ հաշվարկային կիսամյակ), սակայն ոչ շուտ, քան չորս ամիսը մեկ անգամ պարբերականությամբ։

3) ստուգել գազասպառման համակարգի գազօգտագործող սարքավորումների միացման համապատասխանությունը գազասպառման համակարգի նախագծին և

տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, խախտումներ հայտնաբերելու դեպքում խցափակել գազօգտագործող սարքավորումները, կնքել և կազմել գազասարքի շահագործումն արգելող արձանագրություն, գործել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և սույն պայմանագրի պահանջներով:

4) շահագործումից հանված գազասարքը բաժանորդի կողմից ինքնակամ օգտագործման դեպքում դադարեցնել գազասպառման համակարգի գազամատակարարումը, գազամատակարարումը վերականգնել գազասպառման համակարգի գազաֆիկացման նախագծային վիճակը Բաժանորդի կողմից վերականգնելուց հետո, ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

5) առնվազն երեք աշխատանքային օր առաջ Բաժանորդին կամ նրա ներկայացուցչին տեղեկացնել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման ժամկետների մասին:

3. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒՄԸ

5. Սույն համաձայնագրի 2-րդ կետում նշված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման իրականացումը հավաստվում է գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման վերաբերյալ ակտով՝ համաձայն հավելվածի: Ակտը կազմվում է երկու օրինակից՝ մեկական Մատակարարի և Բաժանորդի համար: Ակտը ստորագրում են Մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցիչը և Բաժանորդը կամ նրա ներկայացուցիչը (տվյալ բնակության վայրում բնակվող չափահաս քաղաքացի):

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Սույն համաձայնագրի 2-րդ կետով նախատեսված ծառայությունների մատուցման համար Բաժանորդը Մատակարարին վճարում է Հանձնաժողովի կողմից սահմանված տարեկան վճար:

7. Մատակարարի կողմից սույն համաձայնագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն մատուցելու պարտավորությունը խախտելու դեպքում Բաժանորդը այդ մասով տեխնիկական սպասարկման ծառայության վճար չի վճարում:

8. Գազասպառման համակարգի տեխնիկական յուրաքանչյուր սպասարկման համար Բաժանորդը վճարում է Հանձնաժողովի կողմից սահմանված տարեկան վճարի 50 տոկոսը՝ գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության յուրաքանչյուր մատուցման ամսվան հաջորդող Հաշվարկային ամսում:

9. Տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման դիմաց Բաժանորդը վճարում է ներկայացված վճարման փաստաթղթի հիման վրա՝ սույն պայմանագրով և ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

10. Հանձնաժողովի կողմից ներտնային գազասպառման համակարգի տարեկան վճարի փոփոխման դեպքում նոր վճարն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11. Ծխաօդատար ուղիների նորոգման, վերականգնման կամ վերակառուցման, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերով նախատեսված աշխատանքները՝

բացառությամբ սույն համաձայնագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվածի, իրականացվում են ծխաօդատար ուղիների սեփականատիրոջ միջոցների հաշվին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

12. Մատակարարը պատասխանատվություն է կրում Բաժանորդի գազասպառման համակարգի անվտանգության ապահովման համար՝ օրենքով, ԳՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ նորմատիվ իրավական ակտերով ստանձնած պարտավորությունների շրջանակում:

13. Սույն համաձայնագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Մատակարարը Բաժանորդին վճարում է տույժ՝ տարեկան վճարի 50 տոկոսի չափով, որը հաշվի է առնվում տվյալ հաշվարկային կիսամյակի վերջին ամսվան հաջորդող ամսվա՝ Բաժանորդին ներկայացված վճարման փաստաթղթում:

14. Սույն համաձայնագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պարտավորության խախտում է համարվում հաշվարկային կիսամյակի ընթացքում գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում չիրականացնելը կամ ոչ պատշաճ իրականացնելը (սույն համաձայնագրի 2-րդ կետով նախատեսված ծառայությունը մասամբ իրականացնելը), եթե տեխնիկական սպասարկում չիրականացնելը պայմանավորված չէ Բաժանորդի գործողություններով:

15. Մատակարարն ազատվում է սույն համաձայնագրի 14-րդ կետով սահմանված պատասխանատվությունից, եթե Բաժանորդին գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման՝

1) ծառայության մատուցման մասին տեղեկացումն իրականացրել է սույն պայմանագրի 31-րդ կետի համաձայն, սակայն ծանուցումը հնարավոր չի եղել ապահովել Բաժանորդին հանձնելու անհնարինության պատճառով.

2) ծառայություն մատուցելու համար այցելել է սույն պայմանագրի համաձայն ծանուցված Բաժանորդի գազասպառման համակարգի տեղակայման տարածք, սակայն ծառայությունը չի կարողացել մատուցել Բաժանորդի կողմից բնակարան մուտք չապահովելու պատճառով:

16. Բաժանորդը կամ նրա ներկայացուցիչը չի ստորագրում տվյալ հաշվարկային կիսամյակի համար կազմվող ակտը, եթե Մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցիչը սույն համաձայնագրի 2-րդ կետով նախատեսված ծառայությունները չի մատուցել կամ մատուցել է մասնակի:

Բաժանորդ

_____ (անունը, հայրանունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

« ___ » _____ 20__ թվական

Մատակարար

_____ (անունը, հայրանունը, ազգանունը, պաշտոնը)

_____ (ստորագրությունը)

« ___ » _____ 20__ թվական

Պայմանագիր N _____

Կ.Տ

Հավելված
Ներտնային գազասպառման համակարգի
տեխնիկական սպասարկման
ծառայությունների
մատուցման մասին համաձայնագրի

(սպասարկումն իրականացնող կազմակերպություն)

Ա Կ Տ

**Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման
ծառայությունների մատուցման վերաբերյալ (Ներտնային գազասպառման
համակարգի քանակը _____ համաձայն տեխնիկական փաստաթղթի)**

Բնական գազի մատակարարման պայմանագրի N, ամսաթիվ, ամիս, տարեթիվ	Կատարման ամսաթիվ, ամիս, տարեթիվ	Մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցիչ		Բաժանորդի կամ նրա ներկայացուցչի (տվյալ բնակության վայրում բնակվող չափահաս քաղաքացու)		
		անունը, ազգանունը	ստորագրությունը	անունը, ազգանունը	ստորագրությունը	Նշումներ
	«__» _____ 20__ թվական					
	«__» _____ 20__ թվական					

Բաժանորդը (տվյալ բնակության վայրում բնակվող չափահաս քաղաքացին) չի ստորագրում տվյալ հաշվարկային կիսամյակի համար կազմվող ակտը, եթե Մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցիչը սույն համաձայնագրի 2-րդ կետով նախատեսված աշխատանքները չի կատարել կամ մասնակի է կատարել: Այս դեպքում Բաժանորդը (տվյալ բնակության վայրում բնակվող չափահաս քաղաքացին) նշումների սյունակում կատարում է համապատասխան գրառում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ.ԹՈՐՈՍՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության արդարադատության
նախարարության կողմից 2018 թվականի հունիսի 1-ին
պետական գրանցման համարը 3031842

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մայիսի 2018 թվականի

N 25-Ն

ք. Ստեփանակերտ

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄՏՏԱԿԱՐԱՐՄԱՆ (ՄԱՏԱԿԱՐԱՐ-ԲԱԺԱՆՈՐԴ
(ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)) ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ,
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 41Ն ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 42Ն
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «Է» և «ը» կետերը և «Իրավական ակտերի
մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական
մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ
(կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. «Արցախզազ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ
մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը բաժանորդների հետ կնքված
բնական գազի մատակարարման պայմանագրերը համապատասխանեցնել սույն
որոշման 1-ին կետով սահմանված պայմանագրի օրինակելի ձևին, իսկ Էներգետիկայի
բնագավառի լիցենզավորված անձանց հետ կնքված պայմանագրերը ներկայացնել
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի գրանցմանը:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի

1) 2008 թվականի հուլիսի 25-ի «Բազմաբնակարան շենքում գործող Բաժանորդի
և կենցաղային սպառում ունեցող Բաժանորդի բնական գազի մատակարարման
(Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը
հաստատելու մասին» թիվ 41Ն որոշումը.

2) 2008 թվականի հուլիսի 25-ի «Բնական գազի մատակարարման (Մատակարար-ոչ կենցաղային սպառում ունեցող Բաժանորդ) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 42Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2018 թվականի մայիսի 18-ի N 25-Ն որոշման

**Բնական գազի մատակարարման
(Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն))**

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

« _____ » _____ 20__ թվական
(պայմանագրի կնքման վայրը)

Մատակարարը՝ _____,
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

_____,
(մասնաճյուղի անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս _____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը գործում է _____ հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Բաժանորդը՝ _____,
(կազմակերպության անվանումը, գազասպառման համակարգի գտնվելու վայրը կամ անհատ

_____,
ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, գազասպառման համակարգի գտնվելու վայրը)

ի դեմս _____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը (ով) գործում է _____ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի
մասին.

1. ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.

1) **Հանձնաժողով**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողով.

2) **ՔՄՕԿ**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի
մայիսի 18-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները սահմանելու և
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական
մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի N
12Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 23-Ն որոշման 1-ին կետով սահմանված
բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ.

3) Հաշվարկային ամիս՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին և ավարտվում է հաջորդ օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին.

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել բնական գազ, իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել մատակարարված բնական գազի դիմաց:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, ԳՄՕԿ-ով, Արցախի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

4. Մատակարարը պարտավոր է.

1) սահմանազատման կետում ապահովել Բաժանորդի գազամատակարարումը՝ «Բնական վառելիքային գազեր արդյունաբերության և կոմունալ-կենցաղային նպատակների համար» ԳՕՍՍ 5542-87-ով սահմանված պայմաններին համապատասխանող _____ բնական գազով.

(հոտավետացված կամ չհոտավետացված)

2) Բաժանորդին (Բաժանորդ, որի ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցում է 10 000 խորհանարդ մետր սպառումը) բնական գազ մատակարարել սույն պայմանագրով ամրագրված ժամանակացույցով և չափաքանակներով (հավելված N 3).

3) կազմել և Բաժանորդին ներկայացնել մատակարարված բնական գազի համար վճարման փաստաթղթերը՝ ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով.

4) չխոչընդոտել իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի կայան Բաժանորդի կամ նրա ներկայացուցիչների մուտքը՝ օպերատիվ տեղեկատվություն ստանալու կամ առևտրային հաշվառքի սարքերը կնքելու կամ կնիքների առկայությունը ստուգելու կամ բնական գազի որակական հատկանիշներն ուսումնասիրելու նպատակով բնական գազի նմուշառման համար.

5) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխան տալ Բաժանորդի դիմումին (բողոք, հարցադրում)՝ հանգամանորեն ներկայացնելով Բաժանորդի դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն Բաժանորդին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ.

6) գազասպառման համակարգում վթարների և վթարային իրավիճակների դեպքերում Բաժանորդի կամ այլ անձանց ահազանգով դադարեցնել նրա գազամատակարարումը, վերսկսել այն դադարեցման պատճառների վերացումից հետո՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացնելով Բաժանորդին.

7) գազամատակարարման ընդհատման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում՝ բացառությամբ վթարների ու վթարային իրավիճակների Բաժանորդին նախապես տեղեկացնել և գազամատակարարումը վերականգնել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում.

8) սույն պայմանագրի լուծման կամ գազամատակարարման ժամանակավոր դադարեցման վերաբերյալ Բաժանորդի դիմումի հիման վրա դադարեցնել Բաժանորդի գազամատակարարումը հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

5. Բաժանորդը պարտավոր է.

1) վճարել մատակարարված բնական գազի դիմաց՝ սույն պայմանագրով և ԳՄՕԿ-ով սահմանված կարգով.

2) չօգտագործել բնական գազը կամ գազասպառման համակարգը տեխնիկական պայմաններով, նախագծով և գազասարքավորումների տեխնիկական փաստաթղթերով (անձնագրով) չնախատեսված նպատակներով ու պայմաններով.

3) գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների, կամ անսարքության, մարդկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող իրավիճակներում, ինչպես նաև բնական գազի արտահոսք հայտնաբերելու դեպքում անմիջապես ընդհատել բնական գազի սպառումը և այդ մասին անհապաղ հայտնել Մատակարարին.

4) իր նախաձեռնությամբ գազասպառման համակարգում փոփոխություններ (այդ թվում՝ սարքավորումների, դրանց հզորության, սպառման ծավալների) կատարելու համար, ԳՄՕԿ-ով սահմանված կարգով դիմել Մատակարարին.

5) չխոչընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացնում է իր լիազորությունները հավաստող ծառայողական վկայական՝ լուսանկարով և հայտնում է Բաժանորդի քարտի համարը:

Մատակարարի ներկայացուցիչի մուտքը գազասպառման համակարգի տեղակայման տարածք իրականացվում է՝ _____.

(օրեր, ժամեր)

6) իր սեփականությունը հանդիսացող (իր կողմից օգտագործվող) գազասպառման համակարգի տեղակայման տարածքը օտարելու (օգտագործման իրավունքը դադարելու) դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու և պայմանագիրը լուծելու համար:

4. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

6. Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակը որոշվում է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի միջոցով՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում: Բաժանորդն իրավունք ունի մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

7. Այն Բաժանորդի (Բաժանորդ, որի ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցում է 10 000 խորհանարդ մետր սպառումը) դեպքում Մատակարարի և Բաժանորդի պատասխանատու անձինք Հաշվարկային ամսվա համար ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում կազմում են երկկողմ ակտ՝ Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակի մասին: Այն դեպքում, երբ Բաժանորդը (Բաժանորդի պատասխանատու անձը) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով չի մասնակցում սույն կետում նշված ակտի կազմմանը, ապա Մատակարարը կարող է ակտը կազմել միակողմանի: Մատակարարի կողմից կազմված ակտը հիմք է հանդիսանում Բաժանորդին վճարման փաստաթուղթ ներկայացնելու համար:

8. Առևտրային հաշվառքի սարքի, այդ թվում՝ նոր առևտրային հաշվառքի սարքի, տվյալները գրանցվում են սույն պայմանագրի N 1 հավելվածում:

9. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում բնական գազի քանակը վերահաշվարկվում է ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

10. Հաշվարկային ամսում, երբ առևտրային հաշվառքի սարքն աշխատել է իր չափման ընդգրկույթից (Qmin-Qmax) դուրս, Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակությունը հաշվարկվում է՝

1) եթե չափումը կատարվել է ընդգրկույթի ստորին սահմանից (Qmin) ցածր, ապա ծախսն ընդունվում է _____ տոկոսին հավասար,

2) եթե չափումը կատարվել է ընդգրկույթի վերին սահմանից (Qmax) բարձր, ապա ծախսն ընդունվում է _____ տոկոսին հավասար:

Ճնշման անկման սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի դեպքում նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվարկային եղանակով՝ համաձայն ԳՕՍՍ 8.563-97-ի՝ «Հեղուկների և գազերի քանակության և ծախսի քանակության չափումը ճնշման փոփոխական անկման մեթոդով» և ԳՕՍՍ-8.586-2005-ի՝ «Հեղուկների և գազերի ծախսի ու քանակության չափումը ստանդարտ նեղացնող սարքերի միջոցով»: Այլ սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի համար նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվառքի սարքի անձնագրային տվյալների հիման վրա՝ համաձայն համապատասխանության սերտիֆիկատի:

5. ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

11. Մատակարարվող բնական գազի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:

12. Հանձնաժողովի կողմից բնական գազի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետում:

13. Հաշվարկային ամսում մատակարարված բնական գազի համար (սույն պայմանագրի 7-րդ կետին համապատասխան կազմված ակտի հիման վրա) Մատակարարը ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում Բաժանորդին ներկայացնում է վճարման փաստաթուղթ: Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված համապատասխան սակագնի և մատակարարված բնական գազի քանակության արտադրյալով: Բաժանորդը մատակարարված բնական գազի դիմաց վճարումը կատարում է ներկայացված վճարման փաստաթղթի հիման վրա՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում: Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարվելիք բնական գազի համար կանխավճար կամ վճարման այլ երաշխիքներ պահանջելու դեպքերն ու կարգը սահմանվում է ԳՄՕԿ-ով:

14. Բոլոր դեպքերում, եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է մինչև 10 000 խորանարդ մետր բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական մինչև 10 000 խորանարդ մետր սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր 1000 խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով, իսկ եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է 10 000 խորանարդ մետր և ավելի բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր 1000 խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊՍԱՍՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

15. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Արցախի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

16. Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակության դիմաց սույն պայմանագրի 13-րդ կետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի պահանջել Բաժանորդից վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի տասը տոկոսը:

7. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

17. Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաև սաբոտաժային գործողությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, հասարակական անկարգությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությունը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

18. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի 17-րդ կետում նշված իրավիճակների մասին հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց վերացման հնարավոր ժամկետները:

19. Ֆորս մաժորի ավարտից հետո Կողմերը պարտավոր են անմիջապես ձեռնարկել միջոցներ իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

20. Սույն պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի դիմելու դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

21. Սույն պայմանագրի N 2 և N 3 հավելվածները տարածվում են այն Բաժանորդների վրա, որոնց ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցել է 10 000 խորանարդ մետրը:

22. Սույն պայմանագրի N 4 հավելվածը տարածվում է այն Բաժանորդների վրա, որոնց գազասպառման համակարգը տեղակայված է բազմաբնակարան շենքում:

23. Մատակարարը պարտավոր է Բաժանորդին ուղարկվող գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը Բաժանորդին հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ Բաժանորդի կողմից սույն պայմանագրով նշված ծանուցման վայրին, կամ էլեկտրոնային փոստով, եթե առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԳՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

24. Բաժանորդը պարտավոր է սույն պայմանագրում նշված ծանուցման վայրի փոփոխության դեպքում տասն աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին գրավոր տեղեկացնել նոր ծանուցման վայրի վերաբերյալ:

25. Այն դեպքում, երբ Բաժանորդը գրավոր չի տեղեկացրել Մատակարարին իր ծանուցման վայրի փոփոխության մասին, և Մատակարարը կիրառել է փաստաթղթերի պատշաճ հանձնման բոլոր ձևերը, սակայն առկա չէ Բաժանորդի կողմից համապատասխան փաստաթղթերն ստացած լինելու հավաստումը, ապա Մատակարարի կողմից սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված, թեկուզ և Բաժանորդն այլևս այդ գտնվելու կամ բնակության վայրում չի գտնվում:

26. Մատակարարը և Բաժանորդը (Բաժանորդ, որի ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցում է 10 000 խորհանարդ մետր սպառումը), ելնելով Բաժանորդի գազասպառման համակարգի առանձնահատկություններից, իրավունք ունեն սույն պայմանագրի N 3 հավելվածում սահմանել լրացուցիչ պայմաններ:

27. Կողմերը մեկից ավելի սահմանազատման կետ ունենալու դեպքում իրավունք ունեն կնքել բնական գազի մատակարարման մեկ պայմանագիր՝ բոլոր սահմանազատման կետերի համար, որի դեպքում սույն պայմանագրի բոլոր դրույթները կիրառվում են յուրաքանչյուր սահմանազատման կետի համար առանձին՝ Չի թույլատրվում՝

1) սահմանազատման կետերից մեկում սույն պայմանագրի դրույթների խախտման դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառել մյուս սահմանազատման կետերի նկատմամբ,

2) Հանձնաժողովի կողմից սահմանված բնական գազի սակագինը կիրառել տարբեր սահմանազատման կետերում սպառված բնական գազի ամսական քանակները գումարելու միջոցով՝

28. Սույն պայմանագիրը մեկից ավելի սահմանազատման կետերի համար կնքելու դեպքում՝

1) Մատակարարն իրավունք ունի կազմել և ներկայացնել մեկ միասնական վճարման փաստաթուղթ բոլոր սահմանազատման կետերի համար՝ հաշվի առնելով սույն պայմանագրի 27-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումը, ներկայացնելով առանձին տեղեկատվություն յուրաքանչյուր սահմանազատման կետում մատակարարված բնական գազի քանակի և վճարման ենթակա գումարի մասին.

2) Բաժանորդն իրավունք ունի կատարել վճարում մեկ միասնական փաստաթղթի հիման վրա՝ ներկայացնելով առանձին տեղեկատվություն յուրաքանչյուր սահմանազատման կետում սպառված բնական գազի քանակի և վճարված գումարի մասին.

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

29. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

30. Մատակարարի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց (որոնք բնական գազը ձեռք են բերում էլեկտրական կամ ջերմային էներգիա արտադրելու նպատակով) միջև կնքված պայմանագրերն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

31. Հանձնաժողովի կողմից բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր

կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

32. Սույն պայմանագիրը կարող է լուծվել,

1) Կողմերի փոխհամաձայնությամբ.

2) Բաժանորդի կողմից միակողմանի, այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և օգտագործած բնական գազի, իսկ բազմաբնակարան շենքում գտնվող Բաժանորդի դեպքում՝ նաև տեխնիկական սպասարկման մատուցված ծառայության համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Արցախի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

33. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում սույն պայմանագիրը լուծված է համարվում այն պահից, երբ Մատակարարը պայմանագրի լուծման մասին ծանուցում է Բաժանորդին:

34. Սույն պայմանագրում սահմանազատման նոր կետ ավելացնելը կամ բաժանորդի կողմից գործող սահմանազատման կետերից որևէ մեկից հրաժարվելը հիմք չի կարող հանդիսանալ սույն պայմանագիրը լուծելու համար:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

35. Հավելված N 1 - Համաձայնագիր սահմանազատման և առաքման կետերի մասին:

36. Հավելված N 2 - Համաձայնագիր սահմանազատման կետում բնական գազի որակի և ճնշման մասին:

37. Հավելված N 3 - Համաձայնագիր բնական գազի մատակարարման չափաքանակների և լրացուցիչ պայմանների մասին:

38. Հավելված N 4 - Համաձայնագիր բազմաբնակարան շենքում գտնվող գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին:

Մատակարար՝

Բաժանորդ՝

(կազմակերպության անվանումը)	(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)
(պաշտոնը, անունը, ազգանունը)	(պաշտոնը, անունը, ազգանունը)
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
(գտնվելու վայրը)	(գտնվելու վայրը / բնակության վայրը)
(հեռախոսահամարը)	(հեռախոսահամարը)
(բանկի անվանումը և հաշվեհամարը)	(բանկի անվանումը և հաշվեհամարը)
(էլեկտրոնային փոստի հասցեն)	(էլեկտրոնային փոստի հասցեն՝ առկայության դեպքում)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Հավելված N 1
Բնական գազի մատակարարման
(Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
սահմանազատման և առաքման կետերի մասին**

1. Բնական գազի առաքման կետ է համարվում՝ _____:
2. Բնական գազի սահմանազատման կետ է համարվում՝ _____:

Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տվյալները

N	Անվանումը	Մակնիշը	Գործարանային N	Տեղադրման վայրը	Տեղադրման ժամանակը
1.					
2.					
3.					
4.					

3. Առևտրային հաշվառքի սարքը (կայանը) հանդիսանում է _____ սեփականությունը:

4. Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, հերթական ստուգաչափման և նորոգման) ծախսերը՝ անկախ դրա պատկանելությունից, կրում է Մատակարարը: Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) արտահերթ ստուգաչափման և նորոգման ծախսերն իրականացվում են ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

Հսկիչ հաշվառքի սարքի (կայանի) տվյալները

N	Անվանումը	Մակնիշը	Գործարանային N	Տեղադրման վայրը	Տեղադրման ժամանակը
1.					
2.					
3.					
4.					

5. Հսկիչ հաշվառքի սարքը (կայանը) սպասարկում է դրա սեփականատերը:

Մատակարար՝

(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

Բաժանորդ՝

(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

«__» _____ 20__ թվական

«__» _____ 20__ թվական

Կ.Տ. (առկայության դեպքում)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Հավելված N 2
Բնական գազի մատակարարման
(Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
սահմանազատման կետում բնական գազի որակի և ճնշման մասին

1. Սույն հավելվածը տարածվում է այն Բաժանորդների վրա, որոնց ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցել է 10 000 խորանարդ մետրը:

2. Սահմանազատման կետում Մատակարարը պարտավոր է ապահովել բնական գազի հետևյալ ճնշումը՝ _____
կիլոպասկալ՝ _____
(նվազագույն ճնշումը) (առավելագույն ճնշումը)

պայմանով, որ Բաժանորդը պահպանում է սույն պայմանագրի N 3 հավելվածում սահմանված չափաքանակները:

3. Սույն պայմանագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները չբավարարող բնական գազը համարվում է անպատշաճ որակի: Այդպիսի բնական գազ մատակարարելու դեպքում Մատակարարը պարտավոր է _____ ժամվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 48 ժամում, Բաժանորդին տեղեկացնել մատակարարվող բնական գազի փաստացի որակի մասին:

4. Բաժանորդն իրավունք ունի չընդունել անպատշաճ որակի բնական գազը և Մատակարարից պահանջել վճարելու տույժ՝ չընդունված բնական գազի արժեքի _____ տոկոսի չափով: Բաժանորդը պարտավոր է տեղեկացնել Մատակարարին անպատշաճ որակի բնական գազը չընդունելու վերաբերյալ: Բոլոր դեպքերում Բաժանորդին մատակարարված գազը համարվում է Բաժանորդի կողմից ընդունված:

5. Եթե Բաժանորդն ամբողջությամբ կամ մասնակի ընդունում է անպատշաճ որակի գազը, ապա սպառված բնական գազի դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Կողմերի միջև փոխհամաձայնեցված կարգով:

Մատակարար՝

(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

«_» _____ 201_ թվական

Կ.Տ. (առկայության դեպքում)

Բաժանորդ՝

(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

«_» _____ 201_ թվական

Կ.Տ. (առկայության դեպքում)

Հավելված N 3

Բնական գազի մատակարարման
(Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

բնական գազի մատակարարման չափաքանակների և լրացուցիչ պայմանների մասին

1. Սույն հավելվածը տարածվում է այն Բաժանորդների վրա, որոնց ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցել է 10 000 խորանարդ մետրը:

2. Սույն համաձայնագրով Բաժանորդը և Մատակարարը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են մատակարարվող գազի հետևյալ չափաքանակները.

(1000 խորանարդ մետր)

ԱՄԻՍՆԵՐ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	ԸՆԴԱՄԵՆԸ
													20__ թվական
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ													

3. Հաջորդ օրացուցային տարվա համար բնական գազի անհրաժեշտ չափաքանակների վերաբերյալ տեղեկատվությունը Բաժանորդը Մատակարարին է ներկայացնում օրացուցային տարին սկսվելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ: Սույն կետում նշված տեղեկատվությունը Բաժանորդի կողմից չներկայացվելու դեպքում, հաջորդ օրացուցային տարում մատակարարվող գազի չափաքանակներ են ընդունվում տվյալ ընթացիկ օրացուցային տարվա չափաքանակները:

4. Մատակարարվող բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված չափաքանակների փոփոխությունը կատարվում է Կողմերի փոխհամաձայնությամբ: Բաժանորդը մատակարարվող բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված ամսական չափաքանակի փոփոխման վերաբերյալ առաջարկությունը պարտավոր է Մատակարարին ներկայացնել Հաշվարկային ամսից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

5. Եթե Մատակարարը չի մատակարարում բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված չափաքանակները, ապա Բաժանորդն իրավունք ունի Մատակարարից պահանջել վճարելու տույժ՝ չմատակարարված բնական գազի արժեքի 0,5 տոկոսի չափով:

6. Եթե Բաժանորդը չի ընդունում բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված չափաքանակների ավելի քան 25 տոկոսը, ապա Մատակարարն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ չընդունված բնական գազի արժեքի 0,5 տոկոսի չափով:

7. Կողմերը ազատվում են սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերում սահմանված պատասխանատվությունից, եթե դա պայմանավորված է ԳՄՕԿ-ով սահմանված բնական գազի մատակարարման ընդհատման, դադարեցման կամ սահմանափակման պայմաններով:

8. _____:

9. Սույն համաձայնագրի 8-րդ կետում Կողմերի կողմից սահմանվող՝ Բաժանորդի գազասպառման համակարգի առանձնահատկություններով պայմանավորված լրացուցիչ պայմանները, չեն կարող հակասել ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված պայմաններին:

Մատակարար՝

(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)
«_» _____ 20__ թվական

Կ.Տ. (առկայության դեպքում)

Բաժանորդ՝

(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)
«_» _____ 20__ թվական

Կ.Տ. (առկայության դեպքում)

Հավելված N 4
Բնական գազի մատակարարման
(Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
բազմաբնակարան շենքում գտնվող գազասպառման համակարգի
տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատուցել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն, իսկ Բաժանորդը՝ վճարել մատուցված ծառայության դիմաց:

2. Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցումը ներառում է՝

1) գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների արտաքին զննումը, զոդակարերի, պարուրակային միացումների կիպության ստուգումը, իսկ գազի արտահոսքի առկայության դեպքում՝ դրա վերացումը.

2) գազօգտագործող սարքավորումների ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման, օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի համար նախատեսված բացվածքների զննումը, ծխաօդատար ուղիներում քարշի ստուգումը, որի բացակայության (խաթարված լինելու) դեպքում՝ ծխաօդատար ուղիների մաքրումը (ծխաօդատարի մաքրումն ընդգրկում է այն բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ է կատարել ծխաօդատարի քարշն ապահովելու համար, այն է՝ մաքրել ծխաօդատարը մեխանիկական եղանակով (ծանրոցի օգնությամբ), ինչպես նաև ցանկացած արգելքի վերացումը, բացառությամբ այն դեպքերի, որոնք կապված են ծխաօդատարի կառուցվածքային ամբողջական խաթարման հետ).

3) գազօգտագործող սարքավորումների աշխատանքի ստուգումը՝ գործարկված վիճակում, անհրաժեշտության դեպքում՝ բաց այրման խցով գազօգտագործող սարքավորումների այրման պրոցեսի կարգավորումը.

4) գազասպառման համակարգի անվտանգ օգտագործման վերաբերյալ սպասարկման պահին տարածքում ներկա գտնվող Բաժանորդի կամ նրա ներկայացուցիչների հրահանգավորումը.

5) այրվող գազերի ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրի աշխատունակության ստուգումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Բաժանորդը պարտավոր է՝

1) օգտագործել բացառապես գործարանային արտադրության գազօգտագործող սարքավորումներ, օդափոխության նպատակով նախատեսված ուղիները չօգտագործել որպես ծխատար, ծխաօդատար ուղիներում քարշի բացակայության (խաթարված լինելու) դեպքում չօգտվել գազօգտագործող սարքավորումներից, պահպանել կենցաղում բնական գազից օգտվելու անվտանգության պահանջները.

2) սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում ու կարգով վճարել Մատակարարի կողմից մատուցված ծառայության համար.

3) գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման նպատակով չհաշընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացնում է իր լիազորությունները հավաստող ծառայողական վկայական՝ լուսանկարով, և հայտնում է Բաժանորդի քարտի համարը.

Մատակարարի ներկայացուցչի մուտքը Բաժանորդի տարածք իրականացվում է՝

(օրեր, ժամեր)

4) ապահովել իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարմանը:

4. Մատակարարը պարտավոր է՝

1) անձամբ կամ այլ կազմակերպության միջոցով տարեկան առնվազն երկու անգամ Բաժանորդին մատուցել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն.

2) սույն համաձայնագրի 2-րդ կետում նշված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացնել առնվազն մեկ անգամ՝ հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում (1-ին հաշվարկային կիսամյակ) և առնվազն մեկ անգամ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում (2-րդ հաշվարկային կիսամյակ), սակայն ոչ շուտ, քան չորս ամիսը մեկ անգամ պարբերականությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցումը իրականացնել փոխադարձ համաձայնեցված մեկ հաշվարկային կիսամյակում, որի մասին Կողմերը նշում են կատարում սույն համաձայնագրի 11-րդ կետում:

3) ստուգել գազասպառման համակարգի գազօգտագործող սարքավորումների միացման համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, խախտումներ հայտնաբերելու դեպքում գործել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

4) առնվազն երեք աշխատանքային օր առաջ Բաժանորդին կամ նրա ներկայացուցչին տեղեկացնել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման ժամկետների մասին:

3. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒՄԸ

5. Սույն համաձայնագրի 2-րդ կետում նշված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման իրականացումը հավաստվում է գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման վերաբերյալ ակտով: Ակտը կազմվում է երկու օրինակից՝ մեկական Մատակարարի և Բաժանորդի համար: Ակտը ստորագրում են Մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցիչը և Բաժանորդը կամ նրա ներկայացուցիչը:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Սույն համաձայնագրի 1-ին կետով նախատեսված ծառայությունը մատուցելու համար Բաժանորդը Մատակարարին վճարում է Հանձնաժողովի կողմից սահմանված տարեկան վճար:

7. Գազասպառման համակարգի տեխնիկական յուրաքանչյուր սպասարկման համար Բաժանորդը վճարում է Հանձնաժողովի կողմից սահմանված տարեկան վճարի 50 տոկոսը՝ գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության յուրաքանչյուր մատուցման ամսվան հաջորդող Հաշվարկային ամսում:

8. Տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման դիմաց Բաժանորդը վճարում է ներկայացված վճարման փաստաթղթի հիման վրա՝ սույն պայմանագրով և ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

9. Հանձնաժողովի կողմից գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման տարեկան վճարի փոփոխման դեպքում նոր վճարն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետում:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10. Ծխաօդատար ուղիների նորոգման, վերականգնման կամ վերակառուցման, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերով նախատեսված աշխատանքները՝ բացառությամբ սույն համաձայնագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվածի, իրականացվում են ծխաօդատար ուղիների սեփականատիրոջ միջոցների հաշվին:

11. Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացվում է _____:

(1-ին կամ 2-րդ հաշվարկային կիսամյակ)

6. ԿՈՂՄԵՐԻ ՊՏԱՍՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

12. Մատակարարը պատասխանատվություն է կրում Բաժանորդի գազասպառման համակարգի անվտանգության ապահովման համար՝ սույն պայմանագրով և օրենքով սահմանված կարգով:

13. Սույն համաձայնագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Մատակարարը Բաժանորդին վճարում է տույժ՝ տարեկան վճարի 50 տոկոսի չափով, որը հաշվի է առնվում տվյալ հաշվարկային կիսամյակի վերջին ամսվան հաջորդող ամսվա՝ Բաժանորդին ներկայացված վճարման փաստաթղթում: Եթե Բաժանորդը և Մատակարարը, սույն համաձայնագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցումը որոշել են իրականացնել մեկ հաշվարկային կիսամյակում, ապա Մատակարարը տույժը հաշվի է առնում տեխնիկական սպասարկման ծառայության յուրաքանչյուր մատուցմանը հաջորդող Հաշվարկային ամսում՝ Բաժանորդին ներկայացվող վճարման փաստաթղթում:

14. Սույն համաձայնագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պարտավորության խախտում է համարվում հաշվարկային կիսամյակի ընթացքում գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում չիրականացնելը կամ ոչ պատշաճ իրականացնելը (սույն համաձայնագրի 2-րդ կետով նախատեսված ծառայությունը մասամբ իրականացնելը), եթե տեխնիկական սպասարկում չիրականացնելը պայմանավորված չէ Բաժանորդի գործողություններով:

15. Բաժանորդը կամ նրա ներկայացուցիչը չի ստորագրում տվյալ հաշվարկային կիսամյակի համար կազմվող ակտը, եթե Մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցիչը սույն համաձայնագրի 2-րդ կետով նախատեսված ծառայությունները չի մատուցել կամ մատուցել է մասնակի:

16. Բաժանորդի կողմից գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության դիմաց սույն համաձայնագրի 7-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում չվճարելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի տասը տոկոսը:

Մատակարար՝	Բաժանորդ՝
_____	_____
(անունը, ազգանունը, պաշտոնը)	(անունը, ազգանունը, պաշտոնը)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
« » _____ 20__ թվական	« » _____ 20__ թվական
Կ.Տ. (առկայության դեպքում)	Կ.Տ. (առկայության դեպքում)

Պայմանագիր N _____

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ	Հ.ԹՈՐՈՍՅԱՆ
--	-------------------

Գրանցված է
Արցախի Հանրապետության արդարադատության
նախարարության կողմից 2018 թվականի մայիսի 25-ին
պետական գրանցման համարը 1081838

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

10 մայիսի 2018 թվականի N 1-Ն
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

10 մայիսի 2018 թվականի N 97-Ն
ք. Ստեփանակերտ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

**ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ԲԱՅԱԿԱՑՈՒԹՅԱՆ
ԴԵՊՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԵՌԱՄՍՅԱ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 11-ի
N 246-Ն որոշման 3-րդ կետին համապատասխան.

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՆՔ՝

1. Հաստատել առողջական վիճակի վերականգնման հեռանկարի
բացակայության դեպքում առանց եռամսյա դիտարկման ժամկետի պահպանման
բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրվող անձանց հիվանդությունների
ցանկը՝ համաձայն հավելվածի:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ստորագրություն
Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

ստորագրություն
Կ. ԱԹԱՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության աշխատանքի,
սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի
2018 թվականի մայիսի 10-ի N 1-Ն և Արցախի
Հանրապետության առողջապահության նախարարի
2018 թվականի մայիսի 10-ի N 97-Ն համատեղ հրամանի

ՑԱՆԿ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ԲԱՅԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԵՌԱՄՍՅԱ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Նյարդաբանություն

1) կենտրոնական նյարդային համակարգի խրոնիկ պրոգրեսիվ հիվանդություններով, արյան շրջանառության սուր և խրոնիկական խանգարումներով, վնասվածքներով, նեյրոինֆեկցիաներով, մանկական ուղեղային պարալիզով, բնածին արատներով և ժառանգական համախտանիշներով պայմանավորված շարժողական, խոսակցական խիստ արտահայտված խանգարումներ՝ հեմիպլեգիա, պարապլեգիա, տրիպլեգիա, տետրապլեգիա, տոտալ աֆազիա, արտահայտված, խիստ արտահայտված թուլամտություն.

2) երկկողմանի խլություն.

3) պրոգրեսիվող մկանային դիստրոֆիաներ:

2. Հոգեբուժություն

1) մտավոր հետամնացություն.

2) թուլամտություն.

3) աուտիզմ:

3. Ուռուցքաբանություն

1) չարորակ նորագոյացություններ՝

ա. արմատական բուժումից հետո՝ ախտադարձներով (MTS),

բ. բուժման անարդյունավետության կամ բուժման ոչ ենթակա դեպքերում, արտահայտված ինտոքսիկացիայով, կախեքսիայով, ուռուցքի քայքայումով:

4. Վիրաբուժություն

1) պատվաստված օրգաններ.

2) ստամոքսի լրիվ հեռացում.

3) մեկ թոքի հեռացում.

4) անդամահատված ծայրատներ.

5) կոկորդի հեռացում.

6) միզապարկի հեռացում.

7) հաստ և ուղիղ աղու հեռացում՝ հակաբնական հետանցքի տեղադրումով:

5. Թերապիա

1) սրտի իշեմիկ հիվանդություն, սրտային ամբավարարությամբ դիստրոֆիկ փուլում՝ սրտային անբավարարություն III ըստ Մտրաժեսկոյի կամ ֆունկցիոնալ դաս IV ըստ NUHA (ասցիտ, անասարկա).

2) խրոնիկական երիկամային անբավարարություն՝ տերմինալ փուլ, ենթակա մշտական ծրագրային հեմոդիալիզի.

3) զարկերակային գերճնշում, բարդացած կենտրոնական նյարդային համակարգի (շարժողական, խոսքի), սրտամկանի, ակնահատակի, երիկամների ախտահարումով, ֆունկցիաների կայուն խիստ արտահայտված խանգարումով:

- 4) շաքարային դիաբետ, ծանր ընթացքով և խիստ արտահայտված բարդություններով՝
 - ա. պրոլիֆերատիվ անգիոպաթիա,
 - բ. երիկամային անբավարարություն՝ 3-րդ փուլ,
 - գ. սրտային անբավարարություն՝ 3-րդ փուլ,
 - դ. ստորին ծայրանդամների դիաբետիկ խիստ արտահայտված անգիոպաթիա՝ 4-րդ փուլ,

ե. 3-րդ աստիճանի էնցեֆալոպաթիա թուլամտությամբ.

5) լյարդի ցիռոզ, հեպատոսպլենոմեգալիա, դոներակային գերճնշում 3-րդ աստիճանի, ասցիտ.

6) լիմֆոդ, արյունաստեղծ և նրանց նման հյուսվածքների չարորակ նորագոյացություններ՝ արտահայտված ինտոքսիկացիայով և ընդհանուր ծանր վիճակով:

7) տեղադրված կարդիոլերտեր դեֆիբրիլյատոր:

6. Մանկաբուժություն

1) միափորոք սիրտ.

2) վիրաբուժական կորեկցիայի ոչ ենթակա բնածին անկանոնություններ, որոնք ուղեկցվում են համապատասխան ֆունկցիայի արտահայտված խանգարումով:

3) սրտային անբավարարություն 3-րդ և 4-րդ ֆունկցիոնալ դաս.

4) անդարձելի թոքային հիպերտենզիա.

5) սրտի և մագիստրալ անոթների վիրահատությամբ անուղղելի կառուցվածքային արատներ՝ ատրեզիաներ և մագիստրալ անոթների տրանսպոզիցիայի որոշ ձևեր, երբ հնարավոր է միայն ամոքիչ վիրահատություն՝ արյան շրջանառության ֆիզիոլոգիական շտկում կամ աորտա-թոքային շունտավորում:

6) սրտի ռիթմի անբուժելի խանգարումներ, երբ իրականացված է կարդիոլերտեր-դեֆիբրիլյատորի իմպլանտացիա կամ սրտի ռիթմը վարող սարքի իմպլանտացիա.

7) մակերիկամների առաջնային անբավարարություն, մակերկամների կեղևի բնածին դիսֆունկցիա (ադրենոգենիտալ համախտանիշ) աղ կորցնող և հիպերտոնիկ ձև.

8) շաքարային դիաբետ առաջին տիպ.

9) հիպոպիտուիտարիզմ (հիպոֆիզար նանիզմ).

10) բնածին հիպոթիրեոզ մտավոր և ֆիզիկական զարգացման խանգարումով:

7. Ակնաբանական հիվանդություններ

1) մեկ աչքի կամ երկու աչքերի անվերադարձ կուրություն.

2) մեկ ակնագնդի կամ երկու ակնագնդերի բացակայություն.

3) բարձր աստիճանի բարդացած կարճատեսություն օպտիմալ կորեկցիայի պայմաններում լավ տեսնող աչքում ոչ ավելի, քան 0,2.

4) ցանցենու ափոտրոֆիաներ:

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության արդարադատության
նախարարության կողմից 2018 թվականի մայիսի 25-ին
պետական գրանցման համարը 1121839

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«7» մայիսի 2018թ.

N 06-Ն

ք. Ստեփանակերտ

**ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԱՐՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N 04-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով և «Իրավական ակտերի
մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Օդային երթևեկության կառավարման կարգավորների
ուսուցման և ատեստավորման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչության պետի
2012 թվականի հունվարի 31-ի «Օդային երթևեկության կառավարման
կարգավորների ուսուցման և ատեստավորման կարգը հաստատելու մասին» N
04-Ն հրամանը:
3. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական
ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի իրավաբանական
բաժնի պետ Ա. Թովմասյանին՝ սույն հրամանը Արցախի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԳ
ՕՂԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԱՐՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Օդային երթևեկության կառավարման կարգավարների ուսուցման և ատեստավորման կարգը (այսուհետ՝ Կարգ) մշակված է «Ավիացիայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Չիկագոյի կոնվենցիա) «Անձնակազմի ատեստավորում» հավելված 1-ի և Եվրոկոնտրոլ կազմակերպության «Անձնակազմի ատեստավորման Եվրոպական ձեռնարկ - Օդային երթևեկության կառավարման կարգավարներ» փաստաթղթի դրույթների հիման վրա:

2. Սույն Կարգը կանոնակարգում է օդային երթևեկության կառավարման կարգավարների ուսուցման, ատեստավորման և վկայականների տրման գործառնություններն ու պահանջները, սահմանում է օդային երթևեկության կառավարման կարգավարների որակավորման նիշերը և հատուկ նիշերը, կարգավարների մասնագիտական համապատասխանության պահպանման և նիշերի վավերականության դրույթները, վավերականության ժամկետները, վկայականի գործողության կասեցման կամ դադարեցման դրույթները, օդային երթևեկության կառավարման կարգավարների և օդային երթևեկության կառավարման ուսանող կարգավարների ուսուցման և ատեստավորման սկզբունքները:

Ուսուցման և ատեստավորման վկայականների տրման ու դրանց գործողության պահպանման, կասեցման, կամ դադարեցման պահանջները և ընթացակարգերը սահմանվում են Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից ընդունվող իրավական ակտերով և սույն Կարգով:

3. Սույն Կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **Լեզվի հատուկ նիշ**՝ վկայականում կատարվող կամ դրա հետ կապակցված և նրա բաղկացուցիչ մասը կազմող գրառում, որով նշվում է վկայականը կրողի մասնագիտական համապատասխանությունը սույն Կարգով սահմանված լեզվական պահանջներին.

2) **Հրահանգի հատուկ նիշ**՝ վկայականում կատարվող կամ դրա հետ կապակցված և նրա բաղկացուցիչ մասը կազմող գրառում, որով նշվում է վկայականը կրողի մասնագիտական համապատասխանությունը, որպես հրահանգիչ աշխատատեղում վարժանք անցկացնելու համար.

3) **Մասնագիտական համապատասխանություն**՝ այն գիտելիքները, փորձը և հմտությունները, որոնք անհրաժեշտ են կարգավարի վկայականում առկա և վավերական նիշերով նախատեսված կարգավարական սպասարկումն իրականացնելու համար.

4) **Միավորի հատուկ նիշ**՝ վկայականում կատարվող կամ դրա հետ կապակցված և նրա բաղկացուցիչ մասը կազմող գրառում, որով նշվում են այն վայրը (համաձայն ԻԿԱՕ-ի

տեղորոշիչների դասակարգչի), սեկտորները և (կամ) օպերացիոն աշխատատեղերը, որոնցում վկայականը կրողն իրավասու է աշխատել:

5) Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագիր՝ օդային երթևեկության սպասարկման կազմակերպության կողմից սահմանվող և Նախարարության կողմից հաստատվող ծրագիր (պլան), որով սահմանվում են այն միջոցառումները, որոնց իրականացմամբ օդային երթևեկության կառավարման միավորում ապահովվում է կարգավարների մասնագիտական համապատասխանության, ներառյալ լեզվական գիտելիքների պահպանումն ու գնահատումը:

6) Միավորի վարժանքի ծրագիր՝ նախարարության կողմից հաստատվող ծրագիր, որով սահմանվում են այն միջոցառումներն ու ժամանակահատվածները, որոնք անհրաժեշտ են ուսանող կամ վարժանք անցնող կարգավարի (ստաժոր-կարգավարի) կողմից հրահանգչի ղեկավարության ներքո օդային երթևեկության կառավարման միավորում գործող ընթացակարգերը տվյալ վայրում կիրառելու կարողությունների ձեռք բերման համար:

7) Որակավորման հատուկ նիշ՝ վկայականում կատարվող կամ դրա հետ կապակցված և նրա բաղկացուցիչ մասը կազմող գրառում, որով մանրամասնորեն սահմանվում են համապատասխան որակավորման նիշով վերապահվող իրավունքները, դրան առնչվող հատուկ պայմանները կամ գործող սահմանափակումները:

8) Որակավորման նիշ՝ վկայականում կատարվող կամ դրա հետ կապակցված և նրա բաղկացուցիչ մասը կազմող գրառում, որով նշվում են տվյալ վկայականով վերապահվող իրավունքները:

Վկայականը պարունակում է ստորև նշված դասերի մեկ կամ ավելի որակավորման նիշեր:

- ա. վիզուալ թռիչքների աերոդրոմային կառավարում,
- բ. սարքավորումներով թռիչքների աերոդրոմային կառավարում,
- գ. մոտեցման կառավարում՝ ընթացակարգերով,
- դ. մոտեցման կառավարում՝ դիտարկման միջոցով,
- ե. շրջանային կառավարում՝ ընթացակարգերով,
- զ. շրջանային կառավարում՝ դիտարկման միջոցով:

9) Վարժվող կարգավար՝ սոր որակավորման հատուկ նիշ, կամ միավորի հատուկ նիշ, կամ լեզվի հատուկ նիշ, կամ հրահանգչի հատուկ նիշ (այսուհետ՝ հատուկ նիշ) ստանալու նպատակով կամ հատուկ նիշի գործողության վերականգնման նպատակով վարժանք անցնող կարգավար:

10) Ուսուցում՝ տեսական դասընթացների և գործնական վարժությունների, ներառյալ սիմուլյացիոն մեթոդների կիրառմամբ անցկացվող վարժանքի և աշխատատեղում անցկացվող վարժանքի ամբողջությունը, որ պահանջվում է՝ օդային երթևեկության անվտանգ կարգավարական սպասարկում իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական համապատասխանության մակարդակի ձեռքբերման ու պահպանման նպատակով: Ուսուցումն անց է կացվում Նախարարության կողմից հաստատվող ծրագրերի հիման վրա և բաժանվում է հետևյալ տեսակների:

ա. սկզբնական ուսուցում, որը ներառում է բազային ուսուցումը և որակավորման որոշակի նիշի (նիշերի) համար անհրաժեշտ ուսուցումը և որի հիման վրա կարող է տրվել ուսանող կարգավարի վկայական,

բ. անգլերեն լեզվի ուսուցում,

գ. օդային երթևեկության կառավարման միավորում անցկացվող վարժանք, որը ներառում է սույն Կարգի համաձայն անցկացվող անցումային ուսուցումը, աշխատավայրում նախավարժանքը և աշխատատեղում վարժանքը և որի հիման վրա տրվում է կարգավարի վկայական,

դ. սույն Կարգի համաձայն անցկացվող ընթացիկ ուսուցումը, որը նպատակաուղղված է վկայականում առկա հատուկ նիշերի պահպանմանը և կատարելագործմանը,

ե. հրահանգիչների ուսուցում, որի հիման վրա տրվում է աշխատատեղում վարժանք անցկացնող հրահանգչի հատուկ նիշ,

զ. քննություններ և գնահատում իրականացնողների ուսուցում:

11) *Ուսուցումն իրականացնող*՝ կարգավարների մեկ կամ մի քանի տեսակի ուսուցում անցկացնող ուսումնական հաստատությունը կամ օդային երթևեկության սպասարկման կազմակերպությունը, որոնց ուսուցման ծրագրերը հաստատվել են կամ օտարերկրյա կազմակերպությունների դեպքում, ճանաչվել են Նախարարության կողմից:

12) *Քննողի հատուկ նիշ*՝ վկայականում կատարվող կամ դրա հետ կապակցված և նրա բաղկացուցիչ մասը կազմող գրառում, որով նշվում է վկայականը կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ որպես քննողի իրավունք ունեցող անձ:

13) *Օդային երթևեկության կառավարման կարգավարի ուսուցման և աստատվորման վկայական (կարգավարի վկայական, վկայական)*՝ սույն կարգի համաձայն տրված վկայագիր, որն իրավունք է տալիս մատուցելու օդային երթևեկության կարգավարական սպասարկում՝ համաձայն դրանում պարունակվող որակավորման և հատուկ նիշերի: Վկայականի կետերի լրացման նկարագիրը ներկայացված է սույն Կարգի 64-րդ կետում: Վկայականի ձևը ներկայացված է սույն Կարգի Ենթահավելված 2-ում:

14) *Օդային երթևեկության կառավարման ուսանող կարգավարի վկայական (հետազայում՝ ուսանող կարգավարի վկայական)*՝ օդային երթևեկության կառավարման կարգավարի սկզբնական ուսուցման դասընթացներն ավարտելուց հետո օդային երթևեկության կառավարման ուսանող կարգավարին տրվող վկայական: Այն թույլատրում է կրողին սկսել վարժանք աշխատավայրում օդային երթևեկության կառավարման իրական, «կենդանի» միջավայրում՝ համապատասխան որակավորում ունեցող օդային երթևեկության կառավարման կարգավարի ղեկավարության ներքո:

15) *Օդային երթևեկության կարգավարական սպասարկում (Կարգավարական սպասարկում, Օդային երթևեկության կառավարում)*՝ ծառայություն, որը մատուցվում է հետևյալ նպատակներով:

ա. կանխարգելելու օդանավերի միմյանց և մանյովրման հրապարակում օդանավերի բախումը խոչընդոտների հետ,

բ. կարգավորելու և արագացնելու օդային երթևեկությունը:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՐԳԱՎԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

4. Սկզբնական ուսուցումը պետք է ապահովի ուսանող կամ վարժվող կարգավարի գիտելիքների ու գործնական հմտությունների այնպիսի մակարդակ, որպեսզի նա բավականաչափ նախապատրաստված լինի օդային երթևեկության կառավարման միավորում վարժանք սկսելու համար: Սկզբնական ուսուցումն անցկացնող ուսումնական հաստատությունների ուսումնական դասընթացների ծրագրերը առնվազն պետք է բավարարեն ԻԿԱՕ-ի փաստաթղթերի և Եվրոկոնտրոլի՝ թիվ EATMP, 2001b - T3, EATMP, 2000b - T14 փաստաթղթերի պահանջներին:

5. Սկզբնական ուսուցումը պետք է ներառի հետևյալ առարկաները:

- 1) Ավիացիոն իրավունք.
- 2) օդային երթևեկության կազմակերպում, ներառյալ ռազմաքաղաքացիական համագործակցության ընթացակարգեր.
- 3) օդերևութաբանություն.
- 4) նավիգացիա.

5) օդանավ և թռիչքների իրականացում, ներառյալ կարգավարի և օդաչուի գործառնությունները.

6) մարդկային գործուն.

7) օգտագործվող սարքավորումներ և համակարգեր.

8) թռիչքների անվտանգություն, թռիչքների անվտանգության կառավարման համակարգ.

9) ոչ ստանդարտ և վթարային իրավիճակներ, համակարգերի դեգրադացիան, լեզվական պատրաստվածություն, ներառյալ դարձվածաբանությունը:

6. Սկզբնական ուսուցումն իր մեջ ներառում է տեսական դասընթացներ և գործնական պարապմունքներ, ներառյալ վարժասարքերի վրա վարժանքի անցկացումը: Սկզբնական ուսուցման դասընթացների ծրագրերը հաստատվում կամ ճանաչվում են (օտարերկրյա ուսումնական հաստատությունների դեպքում) Նախարարության կողմից:

7. Սկզբնական ուսուցման դասընթացների ծրագրերը և դրանց ներկայացվող պահանջները պարբերաբար վերանայվում են՝ օդային երթևեկության կառավարման գործող պահանջներին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով: Այդ նպատակի ապահովման համար.

1) հրահանգիչը իրականացնում է օդային երթևեկության կառավարման միավորում վարժանք անցնող ուսանող և/կամ վարժվող կարգավարների առաջընթացի գնահատում և վեր է հանում ուսուցման սկզբնական փուլում նրանց լրացուցիչ գիտելիքներ կամ գործնական հմտություններ ապահովելու անհրաժեշտությունը,

2) ապահովվում է դասավանդող անձնակազմի անդամների մոտ գործող որակավորման նիշերի առկայությունը կամ նրանց պարբերական ծանոթացումն օդային երթևեկության կառավարման պրակտիկ գործընթացներին՝ օդային երթևեկության կառավարման մարմիններում,

3) ապահովվում է Նախարարության կողմից ուսումնական ծրագրերի պարբերական քննարկումը՝ հաշվի առնելով նաև օդային երթևեկության կառավարման մարմինների առաջարկները:

ԳԼՈՒԽ 3

ՎԱՐՇԱՆՔՆ ԾՐԱԳՅՈՒՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ

8. Յուրաքանչյուր օդային երթևեկության կառավարման միավոր կազմում է իր վարժանքի ծրագիրը, որը ներառում է այդ միավորում վարժանք անցնող ուսանող և/կամ վարժվող կարգավարների (այսուհետ՝ ստաժոր-կարգավար) կողմից անցումային ուսուցման, աշխատավայրում նախավարժանքի և աշխատատեղում վարժանքի հաջորդական փուլերի մանրամասները: Միավորի վարժանքի ծրագիրը (ուսումնական ծրագիրը) փուլերից յուրաքանչյուրի համար ներառում է.

1) ուսուցման նպատակը.

2) կիրառվող ընթացակարգերը, որոնց միջոցով ապահովվում է ուսուցման նպատակների իրականացումը.

3) ուսուցում անցնողների առաջընթացի և վերջնական արդյունքների գնահատման ընթացակարգերը:

9. Անցումային ուսուցումը հաջորդում է սկզբնական ուսուցմանը, ապահովում է տեղային առանձնահատկությունների վերաբերյալ լրացուցիչ տեսական գիտելիքների փոխանցումը ստաժոր-կարգավարին և նպատակաուղղված է աշխատավայրում նախավարժանքի փուլին նրան համարժեքորեն նախապատրաստելուն:

10. Աշխատավայրում նախավարժանքը նպատակաուղղված է ստաժոր-կարգավարներին աշխատատեղում վարժանքի փուլին համարժեքորեն

նախապատրաստելուն: Այն իրականացվում է տեղանքի առանձնահատկությունները հաշվի առնող սիմուլյացիոն մեթոդների համակողմանի կիրառմամբ:

11. Աշխատատեղում վարժանքի փուլի ընթացքում ստաժոր-կարգավարները նախորդ փուլերում ձեռք բերված գործնական կարողությունների ու հմտությունների համատեղ կիրառմամբ օդային երթևեկության կառավարման ծառայություն են մատուցում իրական երթևեկության միջավայրում՝ հրահանգչի ղեկավարության ներքո:

Աշխատատեղում վարժման հրահանգիչը մնում է պատասխանատու իր ղեկավարության ներքո մատուցվող օդային երթևեկության կառավարման ծառայության ապահովության համար:

12. Աշխատատեղում վարժանքի ծրագիրը ներառում է անհրաժեշտ նշումներ առաջադրված նպատակների իրականացման համար նախատեսված նվազագույն և առավելագույն ժամաքանակի վերաբերյալ:

Ստաժոր-կարգավարների վարժանքի ընթացքի վերաբերյալ հրահանգչի կողմից կանոնավորապես կազմվում է մանրամասն հաշվետվություն՝ հնարավորություն տալով մյուս հրահանգիչներին որոշելու նրանց մասնագիտական համապատասխանության մակարդակը, գործնական կարողությունները և թույլ տեղերը:

13. Ստաժոր-կարգավարների վարժանքի ընթացքը գնահատվում է. Աշխատատեղում վարժանքի ծրագրում վերանայման ենթակա հարցերը վեր հանելու և (կամ) անցումային և (կամ) աշխատավայրում նախավարժանքի փուլերում լրացուցիչ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությունը որոշելու նպատակով:

Աշխատատեղում վարժանքի ծրագրի փոփոխությունների հետ միասին ծրագրում նշվում են նաև այդ փոփոխության իրականացման պատճառներն ու հիմնավորումները:

14. Հրահանգչի ներկայացումով օդային երթևեկության կառավարման միավորում ստաժոր-կարգավարի վարժանքը կարող է դադարեցվել, եթե նա.

1) չի ցուցաբերում բավարար տեսական գիտելիքներ՝ գործնական պատրաստման անցնելու համար, չնայած այդ նպատակով տրամադրված լրացուցիչ ժամանակին, կամ

2) գիտելիքների ու հմտությունների գնահատման ժամանակ կամ կարգավարի աշխատանքային տեղում ցուցաբերել է ինքնուրույն աշխատանքի անպատրաստականություն, չնայած այդ նպատակով տրամադրված լրացուցիչ ժամանակին, կամ

3) պատրաստ չէ ինքնուրույն օդային երթևեկության կարգավարական սպասարկում իրականացնելու անգլերեն լեզվով:

15. Իրենց մասնագիտական համապատասխանության վերականգնման նպատակով ստաժավորում անցնող կարգավարների համար Միավորի վարժանքի ծրագրով կարող են սահմանվել դրա փուլերի իրականացման կրճատված ծավալներ՝ կախված ստաժավորում անցնողի պատրաստվածության մակարդակից:

Գ Լ ՈՒ Ն 4

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

16. Օդային երթևեկության կառավարման կարգավարների ընթացիկ ուսուցման կազմակերպման, նրանց մասնագիտական համապատասխանության շարունակական ապահովման և գնահատման նպատակով օդային երթևեկության սպասարկումն իրականացնող կազմակերպությունում ներդրվում է կարգավարների մասնագիտական համապատասխանության ապահովման և գնահատման համակարգը, որը ներառում է.

- 1) կարգավարների օպերատիվ փորձառության պահպանման միջոցառումները,
- 2) ընթացիկ ուսուցման և գիտելիքների գնահատման միջոցառումները:

Կարգավարների մասնագիտական համապատասխանության ապահովման և գնահատման համակարգի գործունեության շրջանակներում իրականացվող միջոցառումները համարվում են կարգավարի մասնագիտական գործունեության բաղկացուցիչ մաս և դրանց վրա ծախսված ժամանակը հաշվարկվում է որպես աշխատանքային ժամեր:

17. Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագրով սահմանվում են մասնագիտական համապատասխանության ապահովման ու պահպանման համապատասխան ընթացակարգերը, ներառյալ մասնագիտական համապատասխանության պահանջներին չբավարարող կարգավարներին վերականգնելու ընթացակարգերը:

18. Կարգավարների օպերատիվ փորձառության պահպանման նպատակով Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագրով սահմանվում են սեկտորներից և աշխատատեղերից յուրաքանչյուրում օդային երթևեկության կարգավարական սպասարկում իրականացնելու նվազագույն ժամաքանակի վերաբերյալ պահանջներ: Նշված ժամերի քանակը չպետք է լինի պակաս, քան 8 ժամ մեկ ամսվա ընթացքում:

19. Օդային երթևեկության կառավարման աշխատանքներում կարգավարի աշխատանքի ընդհատման դեպքում օպերատիվ փորձառության պահպանման և վերականգնման նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

1) 1-6 ամիսների աշխատանքի ընդհատման դեպքում նախատեսվում է կարգավարի բացակայության ընթացքում հրատարակված փաստաթղթերի ուսումնասիրություն և գործնական հմտությունների գնահատում.

2) 6-12 ամիսների աշխատանքի ընդհատման դեպքում նախատեսվում է կարգավարի բացակայության ընթացքում հրատարակված փաստաթղթերի ուսումնասիրություն, կարգավարական կետում կարգավարի ստաժավորման անցկացում՝ համաձայն Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագրով սահմանված ընթացակարգի, և աշխատատեղում անմիջական ղեկավարին ստուգարքի հանձնումը:

20. Ընթացիկ ուսուցման և գիտելիքների գնահատման միջոցառումները հետապնդում են հետևյալ նպատակները.

1) տեսական և գործնական գիտելիքների պահպանում և կատարելագործում,

2) ավիացիոն իրադարձությունների պատճառների և հանգամանքների ուսումնասիրություն և կանխարգելիչ միջոցառումների իրականացում,

3) օդային երթևեկության սպասարկման ռադիոտեխնիկական միջոցների շահագործման գիտելիքների խորացում,

4) տարվա տարբեր ժամանակահատվածների օդերևութաբանական պայմաններում, օդային երթևեկության սպասարկման առանձնահատկությունների ուսուցում,

5) օդային երթևեկության սպասարկման սահմանափակ միջոցների օգտագործում,

6) նոր կանոնակարգող փաստաթղթերի, ընթացակարգերի և առաջավոր փորձի ուսումնասիրություն,

7) սկզբունքորեն նոր ռադիոտեխնիկական միջոցների ներդրման, օդային տարածքի կառուցվածքի տարրերի, թռիչքների երթուղիների և սխեմաների փոփոխման, օդային երթևեկության սպասարկման նոր ընթացակարգերի ներդրման դեպքերում ընթացիկ ուսուցումն ու գիտելիքների գնահատումը, էթե թռիչքային անվտանգության կառավարման համակարգի գործունեության շրջանակներում մշակված ու հաստատված և դրանց ներդրման ապահովմանն ուղղված ծրագրերով և/կամ պլաններով նախատեսվում է իրականացնել նման միջոցառումներ,

8) վթարային դեպքերի և օդային երթևեկության սպասարկման սահմանափակ միջոցների օգտագործման վարժում,

9) անզլերեն լեզվի որակավորման պահպանում:

21. Ընթացիկ ուսուցման և գիտելիքների գնահատման միջոցառումները ներառում են դասընթացները, ինքնուրույն ուսուցումը, օդային երթևեկության կառավարման վարժային խաղարկությունները, վարժասարքային վարժումը, աշխատանքի վերլուծությունները, օդային մայրուղիների կամ աերոդրոմի շրջակայքի ծանոթացման թռիչքները:

22. Արցախի Հանրապետության օդանավակայաններից առևտրային օդային փոխադրումներ իրականացնող օդանավ շահագործողներն աջակցում են կարգավարների կողմից օդային մայրուղիների և աերոդրոմի շրջակայքի ծանոթացման թռիչքների իրականացմանը:

23. Ի լրումն ընթացիկ ուսուցման և գիտելիքների գնահատման միջոցառումների, Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագրով նախատեսվում են նաև առնվազն երեք տարին մեկ անգամ յուրաքանչյուր կարգավարի ընդհանուր մասնագիտական ուսուցման և գիտելիքների գնահատման ընթացակարգեր, որոնք ներառում են.

1) ընդհանուր տեսական ուսուցման դասընթացների անցկացում և գիտելիքների գնահատման միջոցառումներ՝ Նախարարության կողմից հաստատված ծրագրի հիման վրա,

2) գործնական հմտությունների գնահատման միջոցառումներ:

24. Սույն հավելվածով նախատեսված գիտելիքների ու գործնական հմտությունների գնահատման ընթացակարգերը փաստաթղթավորվում են:

Կարգավարների գիտելիքների ու գործնական հմտությունների գնահատման արդյունքների, ինչպես նաև նրանց կողմից յուրաքանչյուր սեկտորում և/կամ աշխատանքային տեղում փաստացի աշխատած ժամերի մասին կատարվում են համապատասխան գրառումներ օդային երթևեկության սպասարկումն իրականացնող կազմակերպությունում այդ նպատակներով վարվող կարգավարական գրքույկներում կամ տվյալների բազայում:

ԳԼՈՒԽ 5

ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ

25. Օդային երթևեկության սպասարկումն իրականացնող կազմակերպությունում կարգավարի գործունեությունը կարող է նախնական կասեցվել, մասնավորապես, եթե.

1) օդային երթևեկության կառավարման միավորում գործող Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագրին համաձայն անցկացվող գնահատումները նման կասկածների տեղիք են տալիս, կամ եթե չեն ապահովվում այդ ծրագրով սահմանված ընթացիկ փորձառության նվազագույն պահանջները որոշակի ժամանակահատվածում,

2) կարգավարը մասնակցություն է ունեցել օդանավի թռիչքի անվտանգության համար իրական կամ հնարավոր վտանգ պարունակող միջադեպի կամ պատահարի առաջացմանը:

Գործունեության կասեցումը կարող է տարածվել կարգավարի որակավորման որոշակի նիշով, կամ հատուկ նիշով, կամ վկայականով նախատեսված ամբողջ գործունեության նկատմամբ, կախված նրանից, թե դրանցից որի առնչությամբ են կասկածներն առաջացել:

26. Եթե օդային երթևեկության կառավարման միավորում գործող մասնագիտական համապատասխանության գնահատումները կասկածների տեղիք են տալիս, ապա կարգավարի գործունեությունը կասեցվում է, որից հետո անց է կացվում օդային երթևեկության կառավարման միավորում իրականացված գնահատման հանգամանքների և կատարված եզրակացությունների կրկնակի գնահատում: Կարգավարը վերադառնում է օդային երթևեկության կառավարման օպերատիվ գործունեության իրականացմանը, եթե

կրկնակի գնահատումների կամ դրանց հիման վրա իրականացվող լրացուցիչ միջոցառումների արդյունքում կարգավարն ապացուցում է իր մասնագիտական համապատասխանությունը:

27. Եթե կարգավարն առնչություն է ունեցել իր կառավարման ներքո գտնվող օդային հետ ավիացիոն պատահարի կամ միջադեպի առաջացմանը, նրա հետագա գործունեությունը կասեցվում է, մինչև տվյալ իրադարձության մասնագիտական քննության ավարտը: Եթե քննության արդյունքում պարզվում է, որ կարգավարը ավիացիոն պատահարի կամ միջադեպի առաջացման պատճառներին առնչություն չունի, նա վերադառնում է գործառնությունների իրականացմանը: Հակառակ դեպքում իրականացվում են Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագրով նախատեսված ուսուցման և գնահատման գործառնությունները:

28. Գործունեության կասեցման դեպքում կարգավարը կարող է շարունակել օդային երթևեկության կառավարում իրականացնել աշխատատեղում հրահանգչի ղեկավարության ներքո: Կարգավարի գործունեության կասեցումն իրականացվում է նրա մասնագիտական համապատասխանության ուղղությամբ լրացուցիչ միջոցառումներ (կարգավարի ուսուցում, նրա գիտելիքների գնահատում, ավիացիոն իրադարձության քննություն/գնահատում) անցկացնելու նպատակով, ինչը համարվում է նրա մասնագիտական գործունեության բաղկացուցիչ մաս: Գործունեության նման նախնական կասեցումը որպես պատժի միջոց չի կարող դիտարկվել:

29. Եթե սույն մասում ներկայացված դեպքերում անցկացված գնահատումների արդյունքում կարգավարը չի ապացուցում իր մասնագիտական պիտանիությունը, ապա այդ մասին տեղեկացվում է Նախարարություն:

ԳԼՈՒԽ 6

ԿԱՐԳԱՎԱՐՆԵՐԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՑՑՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

30. Արցախի Հանրապետությունում օդային երթևեկության կառավարման կարգավարի գործունեություն իրականացվում է բացառապես Նախարարության կողմից Արցախի Հանրապետության օրենսդրության և սույն Կարգի պահանջների համաձայն տրված կամ ճանաչված (ուժ ստացած) օդային երթևեկության կառավարման կարգավարի գործող վկայական կրող անձի կողմից:

31. Կարգավարը վկայական ստանալու, դրա գործողության ժամկետը երկարաձգելու, վկայականի վերականգնման, կրկնօրինակ ստանալու, դրա մեջ համապատասխան որակավորման վերաբերյալ նշումներ ստանալու և վկայականի փոխարինման համար հայտ է ներկայացնում Նախարարություն:

32. Վկայական ստանալու համար հայտ ներկայացրած կարգավարը անցնում է համապատասխան թեստավորում՝ Նախարարության կողմից սահմանված ընթացակարգերով:

33. Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) դիմողի անձնագրի պատճենը,

2) համապատասխան մասնագիտական պատրաստվածությունը հավաստող ուսումնական հաստատության կողմից տրված ավարտական փաստաթղթի պատճենը վկայականը առաջին անգամ ստանալու դեպքում,

3) համապատասխան դասի բժշկական սերտիֆիկատ:

34. Հայտը և կից փաստաթղթերը Նախարարություն մուտք լինելուց հետո, ուսումնասիրվում են և հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտնվում է թեստավորման ժամկետների մասին, իսկ դրա մեջ առկա թերությունների դեպքում դրանց

մասին գրավոր հայտնվում է հայտատուին, որը դրանք ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պետք է վերացնի կամ շտկի այդ թերությունները: Հնգօրյա ժամկետում ներկայացված թերությունների չշտկման դեպքում հայտը Նախարարության կողմից համարվում է անվավեր:

35. Վկայականը տրվում է Նախարարության որոշման հիման վրա՝ կարգի 32-րդ կետում նշված թեստավորման դրական արդյունքում՝ հինգ տարի ժամկետով: Թեստավորման բացասական արդյունքի դեպքում հայտատուին վկայական չի տրվում և թեստավորման ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին գրավոր հայտնվում է հայտը մերժելու մասին: Վկայական ստանալու հայտերի ներկայացման քանակը չի սահմանափակվում:

36. Վկայականը ստորագրվում է նախարարի կողմից, իսկ նրա բացակայության դեպքում նրան փոխարինող համապատասխան պաշտոնատար անձի կողմից:

37. Նախարարության կողմից վկայականի կրկնօրինակը տրվում է վկայականի կորստի, վնասելու կամ վկայականի տիրոջ անունը և/կամ ազգանունը օրենքով սահմանված կարգով փոխելու դեպքում:

38. Վկայականի կրկնօրինակը լրացնելիս տիտղոսաթերթի վրա տպվում է «կրկնօրինակե գրառումը և տրվում նախկին վկայականի համարը:

39. Վկայականի գործողության ժամկետը լրանալուց հետո այն կարող է երկարաձգվել կարգի 34-րդ և 35-րդ կետերով սահմանված ընթացակարգով:

40. Այն դեպքում, երբ վկայականում անհրաժեշտ է կատարել նշումներ, սակայն նշումների համար հատկացված բաժինները ամբողջական լրացված են, վկայականը փոխարինվում է նորով և դրա մեջ գրառվում են տրման օրվա դրությամբ գործող նշումները:

41. Կարգավարների ատեստավորման գործընթացում Նախարարության կողմից իրականացվող գործառնություններն են.

1) վկայականների, որակավորման նիշերի ու հատուկ նիշերի տալը և դրանց գործողությունը դադարեցնելը, օտարերկրյա վկայականների ճանաչելը,

2) որակավորման նիշերի ու հատուկ նիշերի գործողության երկարաձգումը և/կամ կասեցումը,

3) ուսուցման ծրագրերի, Միավորի վարժանքի ծրագրերի ու մասնագիտական համապատասխանության ծրագրերի ուսումնասիրությունը, հաստատումը կամ ճանաչելը:

42. Օդային երթևեկության կառավարման ուսանող կարգավարի վկայական տրվում է Նախարարության կողմից, եթե անձը.

1) ունի առնվազն միջնակարգ կրթություն,

2) ավարտել է որակավորման որոշակի նիշի կամ նիշերի համար նախատեսված սկզբնական ուսուցման դասընթացները, որոնք բավարարում են սույն Կարգի 2-րդ Գլխի պահանջներին,

3) կրում է գործող բժշկական վավերագիր՝ տրված «Ավիացիայի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն,

4) ցուցաբերում է բավարար լեզվական գիտելիքներ՝ համաձայն սույն Կարգի 50-րդ կետի պահանջների:

Ուսանող կարգավարի վկայականը պարունակում է սույն Կարգով սահմանված որակավորման նիշերից առնվազն մեկը: Ուսանող կարգավարի վկայական կրողն օդային երթևեկության կառավարումն իրականացնում է հրահանգչի ղեկավարության ներքո:

Ուսանող կարգավարի վկայականը տրվում է մեկ տարի գործողության ժամկետով: Օդային երթևեկության կառավարման մարմնում վարժանքը պետք է սկսվի ուսանող կարգավարի վկայական ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում:

43. Օդային երթևեկության կառավարման կարգավարի վկայական տրվում է առնվազն 21 տարին լրացած անձին, եթե նա.

1) կրում է ուսանող կարգավարի վկայական և անցել է Միավորի վարժանքի ծրագրով նախատեսված ուսուցումն ու հանձնել համապատասխան քննությունները և գնահատումը համաձայն սույն Կարգի 3-րդ Գլխի պահանջների,

2) կրում է գործող բժշկական վավերագիր,

3) ցուցաբերում է բավարար լեզվական գիտելիքներ՝ համաձայն սույն Կարգի 50-րդ կետի պահանջների:

Կարգավարի վկայականը վավերացվում է Նախարարության կողմից՝ դրանում համապատասխան որակավորման նիշ(եր)ի, որակավորման հատուկ նիշ(եր)ի, միավորի հատուկ նիշ(եր)ի և լեզվի հատուկ նիշի ներառումով:

Կարգավարի վկայական կրող անձը չի մատուցում օդային երթևեկության կառավարման այնպիսի ծառայություն, որին համապատասխան գործող որակավորման նիշ նա չունի, բացառությամբ այն դեպքերի, երբ նա իրականացնում է այդ գործառնությունները հրահանգչի ղեկավարության ներքո: Օդային երթևեկության կառավարման կարգավարը ղեկավարության ներքո օդային երթևեկության կառավարում իրականացնում է, եթե նա ավարտել է օդային երթևեկության կառավարման մատուցվելիք ծառայությանը համապատասխան որակավորում ապահովող սկզբնական ուսուցման դասընթացները և հանձնել քննությունները, կամ նախկինում արդեն ունեցել է համապատասխան որակավորման նիշ:

44. Հրահանգչի հատուկ նիշ տրվում է կարգավարի վկայական կրողին, եթե.

1) նրա վկայականը եղել է գործող՝ առնվազն վերջին երեք տարիների ընթացքում,

2) նա ավարտել է հրահանգչի ուսուցման դասընթացները և հանձնել քննությունները,

3) վկայականը պարունակում է նվազագույնը նախորդ մեկ տարվա վավերական որակավորման հատուկ նիշ այն սեկտորների, կամ աշխատանքային տեղերի համար, որտեղ նա հրահանգավորելու է,

4) վկայականը պարունակում է անգլերեն լեզվի գործող հատուկ նիշ:

45. Օդային երթևեկության կառավարում իրականացնող կազմակերպությունում թռիչքների անվտանգության ապահովմանն անմիջականորեն առնչվող գործառնություններ իրականացնող և կարգավարի վկայական կրող որոշ անձանց վկայականներին, որակավորմանն ու փորձառությանը ներկայացվող պահանջների առանձնահատկությունները բերված են սույն Կարգի Ենթահավելված 1-ում:

ԳԼՈՒԽ 7

ՕՐԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԻՇԵՐԸ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆԻՇԵՐԸ

46. Վկայականը պարունակում է ստորև նշված որակավորման նիշերից մեկը կամ մի քանիսը, որոնցով նշվում են կարգավարական սպասարկման այն տեսակները, որոնք կարող է մատուցել վկայականը կրողը.

1) «Վիզուալ թռիչքների աերոդրոմային կառավարում» որակավորման նիշով (ԷՅ ԴԻ ՎԻ (ADV)) նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ օդային երթևեկության կառավարում իրականացնելու աերոդրոմային երթևեկության համար այնպիսի աերոդրոմում, որը չունի սարքավորումներով իրականացվող թռիչքների համար նախատեսված մոտեցման կամ մեկնման հրապարակված ընթացակարգեր՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչության պետի 2012 թվականի հունվարի 31-ի «Աերոնավիգացիոն

տեղեկատվության ապահովման կարգը հաստատելու մասին» N 05-Ն հրամանի պահանջներին.

2) «Սարքավորումներով թռիչքների աերոդրոմային կառավարում» որակավորման նիշով (ԷՅ ԴԻ ԱՅ (ADI)) նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ օդային երթևեկության կառավարում իրականացնելու աերոդրոմային երթևեկության համար այնպիսի աերոդրոմում, որում առկա են սարքավորումներով մոտեցման և/կամ մեկնման հրապարակված ընթացակարգեր: Սարքավորումներով թռիչքների աերոդրոմային կառավարման որակավորման նիշի հետ միասին վկայականը պետք է պարունակի առնվազն մեկ համապատասխան որակավորման հատուկ նիշ՝ համաձայն սույն Կարգի 47-րդ կետի.

3) «Մոտեցման կառավարում ընթացակարգերով» (ԷՅ ՓԻ ՓԻ (APP)) որակավորման նիշով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ օդային երթևեկության կառավարում իրականացնելու ժամանող, մեկնող կամ տարանցիկ օդանավերի համար՝ առանց դիտարկման սարքավորումների օգտագործման.

4) «Մոտեցման կառավարում դիտարկման միջոցով» (ԷՅ ՓԻ ԷՍ (APS)) որակավորման նիշով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ օդային երթևեկության կառավարում իրականացնելու ժամանող, մեկնող կամ տարանցիկ օդանավերի համար, դիտարկման սարքավորումների օգտագործումով: Նշված որակավորման նիշի հետ միասին վկայականը պետք է պարունակի նաև առնվազն մեկ համապատասխան որակավորման հատուկ նիշ՝ համաձայն սույն Կարգի 48-րդ կետի.

5) «Շրջանային կառավարում ընթացակարգերով» (ԷՅ ՄԻ ՓԻ (ACP)) որակավորման նիշով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ իրականացնելու օդային երթևեկության շրջանային կառավարում առանց դիտարկման սարքավորումների օգտագործման.

6) «Շրջանային կառավարում դիտարկման միջոցով» (ԷՅ ՄԻ ԷՍ (ACS)) որակավորման նիշով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ իրականացնելու օդային երթևեկության շրջանային կառավարում, դիտարկման սարքավորումների օգտագործումով:

Նշված որակավորման նիշի հետ միասին վկայականը պետք է պարունակի առնվազն մեկ համապատասխան որակավորման հատուկ նիշ՝ համաձայն սույն Կարգի 49-րդ կետի:

47. «Սարքավորումներով թռիչքների աերոդրոմային կառավարում» որակավորման նիշը պետք է պարունակի սույն կետում ներկայացված որակավորման հատուկ նիշերից առնվազն մեկը.

1) «Գետնավարման կառավարում» (ՋԻ ԷՍ ՄԻ (GMC)) հատուկ նիշը, որով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ կառավարելու գետնավարումը,

2) «Օդային կառավարում» (ԷՅ ԱՅ ԱՌ (AIR)) հատուկ նիշը, որով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ իրականացնելու թռիչքների աերոդրոմային կառավարում օդում օդանավի թռիչքի փուլում,

3) «Աշտարակային կառավարում» (ԹԻ Դաբլ Յու ԱՌ (TWR)) հատուկ նիշը, որով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ մատուցելու աերոդրոմային կարգավարական սպասարկում, երբ աերոդրոմային երթևեկության կառավարումը (ինչպես գետնավարումը, այնպես էլ աերոդրոմային կառավարումը օդում օդանավի թռիչքի փուլում) իրականացվում է մեկ աշխատանքային տեղից:

«Սարքավորումներով թռիչքների աերոդրոմային կառավարում» որակավորման նիշը լրացուցիչ կարող է պարունակել նաև հետևյալ հատուկ նիշերը.

1) «Գետնավարման կառավարում դիտարկման միջոցով» (ՋԻ ԷՍ ԷՍ (GMS)) հատուկ նիշը, որը տրվում է ի լրումն «Աշտարակային կառավարում» հատուկ նիշի կամ «Գետնավարման կառավարում» հատուկ նիշի և որով նշվում է այն կրողի մասնագիտական

համապատասխանությունը՝ կառավարելու գետնավարումը աերոդրոմում վերգետնյա տեղաշարժերի դիտարկման համակարգերի օգտագործումով.

2) «Ռադար» (ԱՌ ԷՅ ԴԲ (RAD)) հատուկ նիշը, որը տրվում է ի լրումն «Օդային կառավարում» կամ «Աշտարակային կառավարում» հատուկ նիշի և որով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ աերոդրոմային երթևեկությունը կառավարելիս օգտագործել շրջադիտային ռադարային սարքավորումների տվյալները համաձայն սահմանված ընթացակարգերի.

48. «Մոտեցման կառավարում դիտարկման միջոցով» որակավորման նիշը պետք է պարունակի սույն կետում ներկայացված որակավորման հատուկ նիշերից առնվազն մեկը.

1) «Ռադար» որակավորման հատուկ նիշը, որով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ մոտեցման կարգավարական սպասարկում իրականացնելու առաջնային և/կամ երկրորդային ռադարի (կամ ռադարին ներկայացվող պահանջներին բավարարող և նույնատիպ բնութագրեր ապահովող տարաբաշխված համակարգի) օգտագործմամբ.

2) «Ավտոմատ կախյալ դիտարկում» (ԷՅ ԴԲ ԷՍ (ADS)) հատուկ նիշով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ իրականացնելու մոտեցման կառավարում (կարգավարական սպասարկում) ավտոմատ կախյալ դիտարկման սարքավորումների օգտագործմամբ.

49. «Շրջանային կառավարում դիտարկման միջոցով» որակավորման նիշը պետք է պարունակի սույն կետում ներկայացված որակավորման հատուկ նիշերից առնվազն մեկը.

1) «Ռադար» որակավորման հատուկ նիշը, որով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ շրջանային կարգավարական սպասարկում իրականացնելու շրջադիտային ռադարային սարքավորումների (կամ ռադարին ներկայացվող պահանջներին բավարարող և նույնատիպ բնութագրեր ապահովող տարաբաշխված համակարգի) օգտագործմամբ.

2) «Ավտոմատ կախյալ դիտարկում» հատուկ նիշով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ իրականացնելու շրջանային կառավարում (կարգավարական սպասարկում) ավտոմատ կախյալ դիտարկման սարքավորման օգտագործմամբ:

50. Լեզվի հատուկ նիշով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը սահմանած լեզվական պահանջներին, որոնք տարածվում են ինչպես դարձվածաբանության, այնպես էլ ընդհանուր լեզվական գիտելիքների նկատմամբ և ապահովում են համապատասխանություն Չիկագոյի կոնվենցիայի Հավելված 1-ի սահմանված սանդղակի (այսուհետ՝ ԻԿԱՕ-ի սանդղակ) առնվազն 4-րդ մակարդակին:

Միջազգային չվերթերի կարգավարական սպասարկում իրականացնելու իրավասություն ստանալու համար վկայականը կրողը պետք է ապահովի անգլերեն լեզվի իմացության համապատասխան գիտելիքներ:

Լեզվական պահանջներին համապատասխան գիտելիքների գնահատումն իրականացվում է Նախարարության կողմից հաստատված լեզվական գիտելիքների գնահատման ընթացակարգերի հիման վրա:

51. «Հրահանգչի» (Օ ՋԻ ԹԻ (OJT)) հատուկ նիշով նշվում է այն կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ աշխատատեղում վարժանք անցկացնելու համար:

Հրահանգչի խնդիրները ներառում են.

1) ուսանող կամ վարժվող օդային երթևեկության կառավարման կարգավարի գործունեության ղեկավարումը, նրանց ուսման ընթացքին հետևելը և գեկուցելը,

2) գիտելիքների կամ հմտությունների թերությունների հայտնաբերումը և դրանք վերացնելու նպատակով ուսուցում անցկացնելու առաջարկների ներկայացումը,

3) աշխատատեղում վարժանք անցնող ուսանող կամ վարժվող օդային երթնեկության կառավարման կարգավարի մասնագիտական համապատասխանության մակարդակի հավաստումը՝ անցկացված վարժանքին համապատասխան գործող որակավորման նիշ ստանալու նպատակով,

4) այն կարգավարների գործունեության ղեկավարումը, որոնց վկայականի գործողությունը և/կամ որակավորման նիշի, որակավորման հատուկ նիշի գործողությունը ժամանակավորապես կասեցված է:

52. «Միավորի» հատուկ նիշով նշվում է վկայականը կրողի մասնագիտական համապատասխանությունը՝ կարգավարական սպասարկում իրականացնելու օդային երթնեկության կառավարման միավորի կոնկրետ սեկտոր(ներ)ում կամ աշխատատեղ(եր)ում:

Որակավորման նիշերը և որակավորման հատուկ նիշերը համարվում են վավերական, եթե դրանց համար առկա են համապատասխան «Միավորի» հատուկ նիշ(եր):

ԳԼՈՒԽ 8

ԿԱՐԳԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ՆԻՇԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

53. «Միավորի» հատուկ նիշը տրվում է վավերականության 12 ամիս ժամկետով: Դրա վավերականությունը երկարաձգվում է հերթական 12 ամիսների համար կարգավարի կողմից ներկայացվող հայտի հիման վրա, հետևյալ հիմնավորումներով.

1) նախորդ 12 ամիսների ընթացքում իր վկայականով նախատեսված օդային երթնեկության կարգավարական սպասարկում է իրականացրել առնվազն Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագրով սահմանված մինիմալ ժամերի քանակով,

2) անցել է Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագրով սահմանված ընթացիկ ուսուցման և գնահատման ընթացակարգերը:

Հրահանգի հատուկ նիշերի երկարաձգման համար անհրաժեշտ մինիմալ ժամերի քանակը կարող է նվազեցվել նրա կողմից աշխատատեղում վարժանք անցնողների ուսուցմանը տրամադրված ժամաքանակի չափով:

Հայտ ներկայացրած կարգավարը անցնում է մասնագիտական համապատասխանության գործընթաց (փաստաթղթերի ուսումնասիրություն, թեստավորում, աշխատանքների կատարման գործնական ստուգում):

54. Միավորի հատուկ նիշի գործողության երկարաձգման պայմանները չբավարարելու, կամ 12-48 ամիսների աշխատանքի ընդհատման դեպքերում վկայականը կրողն անցնում է Միավորի վարժանքի ծրագրով նախատեսված՝ իր մասնագիտական համապատասխանության վերականգնման ստաժավորում:

55. Չորս հաջորդական տարիների ընթացքում իր վկայականի նիշերին և/կամ հատուկ նիշերին համապատասխան օդային երթնեկության կարգավարական սպասարկում չիրականացնելու դեպքում, վկայական կրողը, դրանց գործողությունը վերականգնելու նպատակով, նախապես անցնում է համապատասխան որակավորման նիշի համար անհրաժեշտ սկզբնական ուսուցման դասընթացներ, եթե նա այդ ժամանակահատվածում չի աշխատել օդային երթնեկության կազմակերպման բնագավառում: Ամեն դեպքում վկայականը կրողն անցնում է ստաժավորում՝ համաձայն Միավորի վարժանքի ծրագրի:

56. Վկայական կրողների լեզվական համապատասխանությունը ենթակա է պարբերական գնահատման, բացառությամբ այն դեպքերի, եթե անձը ունի ԻԿՍՕ-ի սանդղակով 6-րդ մակարդակ: 4-րդ մակարդակ ունեցողների լեզվական

համապատասխանությունը գնահատվում է երեք տարին մեկ, իսկ 5-րդ մակարդակ ունեցողներինը՝ վեց տարին մեկ:

Միավորի մասնագիտական համապատասխանության ծրագրում նախատեսվում են լեզվական գիտելիքների պահպանման և գիտելիքների գնահատման ընթացակարգեր:

57. Հրահանգչի հատուկ նիշը տրվում է գործողության 36 ամիս ժամկետով:

58. Օդային երթևեկության կառավարման կարգավարի օտարերկրյա ատեստավորման վկայականները կարող են ճանաչվել Նախարարության կողմից Արցախի Հանրապետությունում օգտագործելու նպատակով, եթե դրանք տրված են սույն Կարգով սահմանվածից ոչ ավելի ցածր պահանջների հիման վրա: Ճանաչված վկայականներում միավորի հատուկ նիշեր ավելացնելու և դրա գործողության վավերականացման նպատակով վկայականը կրողը օդային երթևեկության կառավարման համապատասխան միավորում անցնում է համապատասխան սեկտոր(ներ)ի/աշխատատեղ(եր)ի Միավորի վարժանքի ծրագրով սահմանված վարժանքն ու գնահատումները:

ԳԼՈՒԽ 9

ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԿԱՍ ԴԱՂԱՐԵՑՈՒՄԸ

59. Նախարարության կողմից վկայականի, որակավորման նիշերի կամ հատուկ նիշերի գործողությունը կարող է կասեցվել, կարգավարի գիտելիքների առնչությամբ կասկածների առկայության, կամ նրա կողմից սխալներ թույլ տալու դեպքերում:

Վկայականի գործողությունը կարող է դադարեցվել կարգավարի մեծապես անփութ վերաբերմունքի կամ կանխամտածված խախտումների դեպքերում:

60. Նախարարության կողմից վկայականի, որակավորման նիշերի կամ հատուկ նիշերի կասեցման որոշմամբ սահմանվում են նաև կասեցման ժամկետները, կարգավարի վերապատրաստման և/կամ նրա մասնագիտական համապատասխանության գնահատման պահանջներն ու պայմանները, որոնց դրական արդյունքի դեպքում կասեցումը չեղյալ կհամարվի և դրա գործողությունը կվերականգնվի:

61. Սույն Կարգի 60-րդ կետի պահանջների ապահովման նպատակով, կասեցման վերաբերյալ որոշման գործողության ժամանակահատվածում, կարգավարը օդային երթևեկության կառավարում կարող է իրականացնել հրահանգչի ղեկավարության ներքո: Այդ ժամանակահատվածում կարգավարի մասնագիտական գործառնությունների իրականացման ու վճարման կարգն ու պայմանները սահմանվում են օդային երթևեկության սպասարկումն իրականացնող կազմակերպության ներքին կանոնակարգերով և/կամ գործատուի ու կարգավարի միջև կնքված աշխատանքային համաձայնագրով:

62. Վկայականի գործողությունը դադարեցվելու դեպքում, կարգավարը չի կարող օդային երթևեկության կառավարում իրականացնել:

63. Կարգավարի մասնագիտական համապատասխանության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում օդային երթևեկության սպասարկումն իրականացնող կազմակերպությունը կասեցնում է կարգավարի գործունեությունը՝ համաձայն սույն Կարգի 5-րդ Գլխի:

64. Օդային երթևեկության կառավարման կարգավարների վկայականները լրացվում են հետևյալ կերպ.

1) 1-ին էջ. տիտղոսաթերթ, որի վրա ըստ հաջորդականության հայերեն և անգլերեն լեզուներով տպագրվում է «Արցախի Հանրապետություն» բառերը, Արցախի Հանրապետության զինանշանի պատկերը, վկայական տվող լիազորված մարմնի անվանումը, «ՕՂԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՍՆԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԱՐՈՒՄԻ ՎԿԱՅԱԿԱՆ» բառերը:

2) 2-րդ էջ.

ա. I կետում - վկայական տվող պետության անվանումը,

բ. II կետում - վկայականի անվանումը

գ. III կետում - վկայականի համարը հետևյալ ֆորմատով.

2 նիշ - վկայականի տրման պետության պետական կոդ՝ (NK-Արցախի Հանրապետություն), հինգ նիշ - արաբական թվերով հերթական համարը, օրինակ՝ (NK 00001),

3) 3-րդ էջ.

ա. IV կետում - վկայականի տիրոջ ազգանունը և անունը,

բ. IVa-րդ կետում - վկայականի տիրոջ ծննդյան տարեթիվը և վայրը,

գ. V - վկայականի տիրոջ բնակվելու հասցեն (փողոց, քաղաք, վարչական տարածք և փոստային կոդը),

դ. VI կետում - վկայականի տիրոջ քաղաքացիությունը,

ե. VII -րդ կետում - վկայականի տիրոջ ստորագրությունը,

4) 4-րդ էջ.

ա. VIII կետում - վկայական տվող մարմնի անվանումը,

բ. IX կետում - վկայականի տիրոջ իրավասությունները

գ. X կետում - վկայական տվող պաշտոնատար անձի ստորագրությունը և հանձնման տարեթիվը,

դ. Xa կետում - վկայական տվող մարմնի կնիքը կամ դրոշմը.

5) 5-16-րդ էջեր.

XI կետում - վկայականի գործողության ժամկետը տարեթվով, ինչպես նաև վկայականի գործողության ժամկետի երկարաձգման տարեթիվը:

6) 17-22-րդ էջեր.

XII կետում - որակավորման նշումները՝ օդային երթևեկության ծառայության կարգավարական կետի անվանումը:

7) 23-24-րդ էջեր.

XIII կետում - հատուկ նշումներ՝ կապված պաշտոնական պարտականությունների կատարման թույլտվության պայմանների հետ (անգլերեն լեզվի իմացության մակարդակ).

Սույն կետում նշվում է նաև, որ տվյալ վկայականը գործում է միայն բժշկական համապատասխան կարգի սերտիֆիկատի և անձը հաստատող լուսանկարով փաստաթղթի առկայության դեպքում,

8) 25-28-րդ էջեր.

XIV կետում - Այլ տվյալներ.

ա. կարգերի շնորհում և դրանց հիմնավորումները

բ. աշխատանքի վայրը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Է. ՎԱՐԴԱՆՑԱՆ

Ենթահավելված 1
 Օդային երթևեկության կառավարման
 կարգավարների ուսուցման և ատեստավորման կարգի

**ԹՈՒՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԱՌՆՉՎՈՂ
 ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՎ ԿԱՐԳԱՎԱՐԻ ՎԿԱՅԱԿԱՆ ԿՐՈՂ ՈՐՈՇ
 ԱՆՁԱՆՑ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻՆ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆՆ ՈՒ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆԸ
 ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Պաշտոն	Օդային երթևեկության կառավարման օպերատիվ գործունեության աշխատանքային փորձ (տարի)	Կրթության լրացուցիչ պահանջներ	Վկայականի գործողության պահպանման պահանջ (այո/ոչ)	Որակավորման լրացուցիչ պահանջներ
Ավագ կարգավար	2	-	այո	-
Թռիչքների ղեկավար	2	բարձրագույն	այո	2 կամ ավելի որակավորման նիշեր
Կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար	2	բարձրագույն	ոչ	2 կամ ավելի որակավորման նիշեր

Ենթահավելված 2
 Օդային երթևեկության կառավարման
 կարգավարի վկայականի ձևը

	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARTSAKH Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն Ministry of economy and industrial infrastructures ՕՂԱՑԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԱՐԻ ՎԿԱՅԱԿԱՆ AIR TRAFFIC CONTROLLER LICENCE
	REPUBLIC OF ARTSAKH ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ NK 00001

<p style="text-align: center;">I. ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARTSAKH</p> <p style="text-align: center;">Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն</p> <p style="text-align: center;">Ministry of economy and industrial infrastructures</p> <p style="text-align: center;">II. ՕՐԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԱՐԻ ՎԿԱՑԱԿԱՆ</p> <p style="text-align: center;">AIR TRAFFIC CONTROLLER LICENCE</p> <p style="text-align: center;">III. NK 00001</p> <p style="text-align: left;">2</p>	<p>IV. Ազգանուն, անուն, հայրանուն Name of holder in full</p> <p>IVa. Ծնվել է-Date of birth</p> <p>V. Հասցե-Address</p> <p>VI. Քաղաքացիությունը-Nationality of holder</p> <p>VII. Տիրոջ ստորագրությունը-Signature of holder</p> <p style="text-align: center;">NK 00001</p> <p style="text-align: right;">3</p>
--	---

<p>VIII. Տրված է Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից Issued by the Ministry of economy and industrial infrastructures</p> <p>IX. Վկայականի տերը իրավասու է իրականացնել XII և XIII կետերով նախատեսված մասնագիտական գործունեությունը The licence holder is authorized to exercise privileges in accordance items XII and XIII</p> <p>X. Նախարար Minister Ստորագրություն Signature «.....»20</p> <p>Xa. Կնիք Seal</p> <p style="text-align: center;">NK 00001</p> <p style="text-align: left;">4</p>	<p style="text-align: center;">XI. ՎԿԱՑԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՑ LICENCE VALIDITY</p> <hr/> <p style="text-align: center;">Վկայականը ուժի մեջ է This licence is valid մինչև «.....»..... 20 untill Պաշտոնյա Ստորագրություն</p> <p style="text-align: right;">Licensing officer Signature Կնիք Seal</p> <hr/> <p style="text-align: center;">Վկայականի գործողության ժամկետը երկարացվում է Licence validity is prolonged մինչև «..... » 20 untill Պաշտոնյա Ստորագրություն Licensing officer Signature Կնիք Seal</p> <p style="text-align: center;">NK 00001</p> <p style="text-align: right;">5</p>
--	--

<p align="center">XI. ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ LICENCE VALIDITY</p> <hr/> <p align="center">Վկայականի գործողության ժամկետը երկարացվում է Licence validity is prolonged մինչև «.....» 20 untill Պաշտոնյա Ստորագրություն Licensing officer Signature Կնիք Seal</p> <hr/> <p align="center">Վկայականի գործողության ժամկետը երկարացվում է Licence validity is prolonged մինչև «.....» 20 untill Պաշտոնյա Ստորագրություն Licensing officer Signature Կնիք Seal</p> <p align="center">NK 00001</p> <p>6-16</p>	<p align="center">XII. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՇՈՒՄՆԵՐ RATINGS</p> <hr/> <p align="center">Օդային երթևեկության ծառայության կարգավարման կետի անվանումը Air traffic control position /</p> <p align="center">«.....» 20</p> <p align="center">Թույլտվության ամսաթիվը Ստորագրություն Effective date Signature Կնիք Seal</p> <hr/> <p align="center">Օդային երթևեկության ծառայության կարգավարման կետի անվանումը Air traffic control position /</p> <p align="center">«.....» 20</p> <p align="center">Թույլտվության ամսաթիվը Ստորագրություն Effective date Signature Կնիք Seal</p> <p align="center">NK 00001</p> <p align="right">17-22</p>
<p align="center">XIII. ՀԱՏՈՒԿ ԿՇՈՒՄՆԵՐ SPECIAL REMARKS</p> <hr/> <p align="center">Բժշկական եզրակացության տեղեկանքը հանդիսանում է սույն վկայականի անբաժանելի մասը Medical Assesment is an integral part of this licence</p> <p>NK 00001 23-24</p>	<p align="center">XIV. ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ OTHER DETAILS</p> <hr/> <p align="center">Կարգերի շնորհում – Class conferment Կարգավարի երրորդ կարգը շնորհված է The third class of the controller is conferred «.....»20 Հիմք Basis N «.....»20 Կնիք Seal Ստորագրություն /Signature</p> <hr/> <p align="center">Կարգերի շնորհում – Class conferment Կարգավարի երկրորդ կարգը շնորհված է The third class of the controller is conferred «.....»20 Հիմք Basis N «.....»20 Կնիք Seal Ստորագրություն /Signature NK 00001</p> <p align="right">25</p>

Գրանցված է
Արցախի Հանրապետության արդարադատության
նախարարության կողմից հունիսի 7-ին 2018 թվականին
Պետական գրանցման համար 1101843

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«01» հունիսի 2018թ.

N 01-Ն

p. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՆՄԲԵՐԻ 9-Ի N 488-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 9-ի «Շինարարական աշխատանքների գործամիավորների վարձաչափերի ցանկը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2015 թվականի մարտի 30-ի N 73-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 488-Ն հրամանով հաստատված հավելվածի աղյուսակի 43-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«								
43	Բետոնե եզրաքարերի տեղադրում 80x200, 100x200սմ չափերով ուղիղ գծով/կորածն	L27-1	զծմ	0,9/1,08	0,0192	Եզրաքարեր Խիճ (80/100/150/180սմ եզրաքարերի լայն.դեպքում)	զծմ մ ³	1,0 0,0416/0,0455/ 0,0553/0,0631
	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150x300, 180x300սմ չափերով ուղիղ գծով/կորածն	L27-1	զծմ	2,16/2,7	0,0192	Բետոն M200 (80/100/150/180սմ եզրաքարերի լայն.դեպքում)	մ ³	0,048/0,05/ 0,055/0,058
	Բնական քարից եզրաքարերի տեղադրում 80x200, 100x200սմ չափերով ուղիղ	L27-2	զծմ	1,8/2,52	0,0192	Եզրաքարեր Խիճ (80/100/150/180սմ եզրաքարերի լայն.դեպքում)	զծմ մ ³	1,0 0,0416/0,0455/ 0,0553/0,0631

	զծով/կորածն							
	Բնական քարից եզրաքարերի տեղադրում 150x300, 180x300սմ չափերով ուղիղ զծով/կորածն	L27-1	զծմ	2,88/3,6	0,0192	Բետոն M200 (80/100/150/180սմ եզրաքարերի լայն.դեպքում)	մ ³	0,048/0,05/ 0,055/0,058

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Կ. ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մայիսի 2018 թվականի

N 27-Ս

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ԹՐՂԻ-4» ՓՈՔԸ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
(ՀՁՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, 2017 թվականի սեպտեմբերի 28-ի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2018 թվականի մայիսի 4-ի N 106 գրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է.

1. «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի հյուսիսում՝ Միջնագետի և Ավազագետի միջին հոսանքներում՝ 1980 մետր և Թրղի ՓՀԷԿ-երի կասկադի գլխամասային հանգույցի տեղամասում՝ 1720 մետր նիշերի հատվածում՝ «Թրղի-4» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2033 թվականի նոյեմբերի 30-ը գործողության ժամկետով, որը ներառում է արտադրական հզորությունների կառուցման ժամանակահատվածը՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը:

2. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության «Թրղի-4» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2018 թվականի մայիսի 18-ի N 27-Ա որոշման

**«Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության «Թրդի-4» փոքր
հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության
լիցենզիայի**

Պայմանները

(Լիցենզիա 0003, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի N 27-Ա որոշմամբ)

1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Հանձնաժողով**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ**՝ «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն.

3) **Լիցենզիա**՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն
փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և էլեկտրական
էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս
իրավունքն ու պարտականությունը.

4) **Շուկայի կանոններ**՝ Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար
փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում
գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները,
համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու
ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման
համար անհրաժեշտ մեխանիզմները.

5) **Ֆորս-մաժոր**՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք
ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն
չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ
դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները,
պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ,
պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ,
գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ
հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ
դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու
կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2018 թվականի մայիսի 18-ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 2033 թվականի նոյեմբերի 30-ը, որից՝

1) 2016 թվականի դեկտեմբերի 22-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը կառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2033 թվականի նոյեմբերի 30-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի հյուսիսում՝ Միջնագետի և Ավազագետի միջին հոսանքներում՝ 1980 մետր և Թրդի ՓՀԷԿ-երի կասկադի գլխամասային հանգույցի տեղամասում՝ 1720 մետր նիշերի հատվածն է (բնական ջրահոսք):

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 0,82 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «Թրդի-4» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

5. ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒՆԵՆԿՏՐԱԿԱՑՄԱՆ ԾԵՒԻԿԱՏՆԵՄԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1980 մետր և 1720 մետր.

2) հաշվարկային էլք՝ 0,45 խորանարդ մետր վայրկյանում.

3) հաշվարկային ճնշում՝ 231,8 մետր.

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 0,82 մեգավատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «Թրդի-4» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «Թրդի-4» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատորներ-2 հատ.

2) հիդրոտուրբիններ-2 հատ:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայտանակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և գծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում զաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող զաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող զաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի հուլիսի 31-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «Թրդի-4» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

